

# ԱՍՏՂԱՅԻՆ ԵՐԿՆՔԻ ԱՐՏԱՅՈԼՈՒՄԸ ՄԻՀՐԱԿԱՆ ԵՐԵՔ ԱՐԵԻՆԵՐԻ ԱՌԱՍՊԵԼՈՅԹՈՒՄ

ԳԱԳԻԿ ՄԱՐՏՈՑԵԱՆ

Ելիզար Մելետինսկին միջազգային բանահիւսուիթեան մէջ լաշն տարածուած ունեցող Յ եղբայրների մասին հեքիաթների կրտսեր եղբոր կերպարը քննելիս, ի միջի այլոց նշել է, որ արեւմտեան բանագիտութեան մէջ «առասպելաբանական դպրոցի ներկայացուցիչները» կարծիք են յայտնել, թէ նա մարմնաւորուած է վաղորդեան այգը, որը խամբեցնուած է գիշերային աստղերին՝ իր եղբայրներին կամ քորերին<sup>1</sup>: Այս դպրոցի ուսումնասիրութիւններից անկախ, որոնք ցայժմ անձամբ մեզ անմատչելի են մնացել, Հայկազեան Հայագիտական Հանդէսում հրատարակած մեր մի յօդուածում<sup>2</sup> այն տեսակէտն ենք առաջ քաշել, որ Յ եղբայրների հեքիաթները մեզ են հասցրել ցերեկային եւ գիշերային Արեւի (Լուսնի) եռակի դրսեւորումների (այգաբաց, օրուայ լուսաւոր եւ խաւար մասեր) մասին առասպելութիւնը: Երրորդ՝ կրտսեր եղբայրը խորհրդանշուած է ամէն օր հանդերձեալ աշխարհից յառնող, մշտապէս մանուկ՝ Արեգակին: Ժողովրդական այդ պատկերացումն այնչիւնի վաղեմութիւն ունի եւ հայոց մէջ ցայտունօրէն արտայայտուած է, օրինակ՝ ԺԲ. դարի բանաստեղծ, կաթողիկոս Ներսէս Շնորհալուց ականդուած մի հանելուկում, ուր Մանուկ Արեւն ամէն օր ծնուած եւ մեռնում է, իսկ թաղուելուց յետոյ յառնում է աւելի գեղեցիկ կերպարանքով<sup>3</sup>:

Երեք եղբայրներին նուիրուած հեքիաթ-առասպելների շարքը միանգամայն նոր մեկնաբանութիւնների տեղիք է տալիս, երբ խնդիրը քննուած ենք աստղային դիցաբանութեան լոյսի տակ, որը հիմք է ծառայել Հին աշխարհի արուեստի, գիտութեան ու ճարտարապետութեան ստեղծման<sup>4</sup>: Այս տեսանկիւնից պարզ է դառնում, որ աւելի ուշ ժամանակներում Յրդ եղբոր կերպարը վերածել է տարեպտոյտի Արեւի՝ մեռնող եւ յառնող աստուածութեան՝ ներկայացնելով հին աստղագիտութեան վրայ հիմնուած օրացուցային գիտելիքները:

Յայտնի է Յ եղբայրների մասին Հայաստանի աշխարհագրական ամենատարբեր շրջաններից գրառուած շուրջ 3 տասնեակի հասնող հեք-

իաթ, որոնցից թուարկենք միայն մի քանիսը: «Հազարան Բլրուլ կամ Այո-Դինուլի Նաղլը»<sup>5</sup>, «Ղուշ Փարին»<sup>6</sup>, «Անմահական Խնձորը»<sup>7</sup>, «Վրեսուկէ Խնձորը»<sup>8</sup>, «Աժդահակը»<sup>9</sup>, «Մինան Թաքաւերը»<sup>10</sup>, «Մաղկած Բաղչան»<sup>11</sup>, «Ուսկէ Խոնձորն Նաղլը»<sup>12</sup>, «Լուսնան Մթէն Աշխարքնէն»<sup>13</sup>, «Միրզա Մահմուդ Ու Ջամալը»<sup>14</sup> եւն: Հեքիաթները համապատասխանում են Աարնէի եւ Թոմփսոնի տրիպարանական աղիւսակի 301, 550 եւ 551 տիպերին, որոնք գրեթէ ամբողջ Արեւմտեան Եւրոպայից, Ռուսաստանից, Հայաստանից, Թուրքիայից, Հնդկաստանից, Ինդոնեզիայից, Հիւսիսային եւ Հարաւային Ամերիկաների որոշ շրջաններից, Աֆրիկայից գրառուած սիւժէների հիման վրայ են կազմուած<sup>15</sup>:

Ըստ հայկական հեքիաթների տրամադրած համեմատական նիւթի, դրանց բովանդակային սիւսման հետեւեալն է:-

Թագաւորը ծեր է եւ կոյր: Ունի 3 որդի եւ մի հրաշալի այգի, որտեղ խնձորենի է աճում վրան՝ ոսկէ խնձորներ: (Երբեմն թագաւորը սկզբունապէս անգաւակ է եւ 3 որդի է ունենում Աստծոյ ողորմածութեամբ): Խնձորները ջահելացնելու եւ տեսողութիւնը վերականգնելու գորութիւն ունեն, սակայն երբ գալիս է դրանց հասունանալու պահը, գիշերն անհետանում են ծառի ճիւղերից: Թագաւորը որդիներին պատուիրում է պահակ կանգնել եւ բռնել գողին: Աւագ որդիները գիշերը հսկելիս, քնում են, իսկ կրտսերը յայտնաբերում է չարագործին, որը Դեւ է՝ Վիշապ: Կրտսեր որդին նետ է արձակում վրան: Վիրաւոր Վիշապը քաշուում, հեռանում է եւ ընկնում խոր հորի մէջ: Եղբայրները հետապնդում են նրան, սակայն հորի ներսում վառուող կրակին չդիմանալով, չեն կարողանում իջնել մինչեւ յատակը: Պարանով իջնում է կրտսեր եղբայրը եւ հանդիպում 3 գեղեցկուհի քոյրերի, որոնք առեւանգուել են երեք Վիշապների կողմից: Սպանում է նրանց եւ կոյսերին հանում Լոյս Աշխարհ: Երբ ուզում է ինքը դուրս գալ, աւագ եղբայրները նրան դաւաճանաբար թողնում են հորում:

Կրտսեր եղբայրը ստորերկրեայ աշխարհում, մի աղբիւրի մօտ հանդիպում է սեւ, սպիտակ եւ կարմիր խոյերի, որոնք կարող են հերոսին Լոյս Աշխարհ հանել, եթէ նա, ըստ հերթականութեան, նստի նախ սեւի վրայ, իսկ սեւը նրան գցի կարմիրի վրայ, կարմիրն էլ՝ սպիտակի: Սակայն հերոսը շփոթւում եւ սկզբից նետւում է սպիտակ խոյի վրայ, այդ պատճառով էլ սեւ խոյը նրան տանում է Մուլթ Աշխարհ: Այստեղ հերոսն ընկնում է մի քաղաք, որի աղբիւրի ակը Վիշապն է փակել: Նա մարդկանց ջուր է բաց թողնում միայն այն ժամանակ, երբ կոյս են գո-

Հարերում իրեն: Հերթը հասած է լինում Թագաւորի (կամ ուէսի) աղ-  
ջկան: Հերոսը նրա հետ գնում է Վիշապի մօտ եւ սպանում հրէշին: Թա-  
գաւորն, ի նշան երախտագիտութեան, կամենում է իշխանութիւնը  
յանձնել նրան: Հերոսը խնդրում է դրա փոխարէն Լոյս Աշխարհ հանել  
իրեն: Թագաւորը յայտնում է, որ դա իր ուժերից վեր է, եւ նրան Լոյս  
Աշխարհ կարող է հանել միայն անտառում ապրող Արծիւը՝ եթէ հերոսը  
սպանի ամէն տարի նրա ձագերին խժոռղ Վիշապին: Հերոսը դարանա-  
կալում եւ սպանում է Վիշապին, կտոր-կտոր է անում նրան եւ գցում  
ձագերին՝ կերակուր: Արծիւն, ի նշան երախտագիտութեան, հերոսին իր  
թեւերի վրայ հանում է Լոյս Աշխարհ: Հերոսն այտեղ հիւրընկալուում է  
մի Հովովի մօտ: Գլխին է քաշում նրա մորթած ոչխարի փորի կաշին՝ սև  
քողարկուելով՝ քաշալ (ճաղատ) ձեւանում: Այնուհետեւ աշակերտ է  
մտնում մի ոսկերչի մօտ, իսկ ժամանակ անց, բոլորին բացայայտում իր  
ով լինելը: Թագաւոր հայրը գտնում է իր կորած որդուն եւ ամուսնաց-  
նում Վիշապի գերութիւնից նրա ազատած քոյրերից կրտսերի հետ: Ա-  
պա գահն ու թագաւորութիւնը ժառանգում է նրան:

Թուարկուած հեքիաթների մի մասը սիւժէտային փոքր-ինչ այլ զար-  
գացում է ներկայացնում: Մերացած, կոյր Թագաւոր հօր այգին չորա-  
նում է, եւ աղէտը վերացնելու միակ ելքը հեռաւոր աշխարհից Հագա-  
րան բլրուլին, Մովինար կամ Ձմռուտ ղուշին կամ Ղուշ փէրուն բերելն  
է: Ղուշը պէտք է երգի՝ որ այգին կանաչի: Թագաւորն իր 3 որդիներին  
պատգամում է ուղեւորուել թուշի ետեւից: (կամ որդիները ճամփայ են  
րնկնում հօր աչքերի դեղը - կամ հեքիմ - գտնելու): Հանդիպում են եռ-  
եակ ճամփարածանի մօտ կանգնած Հալեւորի, որը երեք եղբայրներին  
ցոյց է տալիս երկու՝ վերադարձ ունեցող եւ մէկ՝ վերադարձ չունեցող  
ճանապարհները: Կրտսեր եղբայրն ընտրում է այն աշխարհը տանող  
ճանապարհը, որտեղից չեն վերադառնում: Այստեղ նա կրկնում է նոյն  
այն սխրանքները, որոնք հեքիաթների նախորդ սխեմայում են հանդի-  
պում: Գտնում է հրաշք Ղուշին եւ վերադառնում: Ճանապարհին աւագ  
եղբայրները նախանձից կրտսերին ջրհորն են նետում եւ Ղուշն առած,  
բռնում տան ճանապարհը: Կրտսեր եղբօրը փրկում է մի վաճառական:  
Հօր թագաւորութիւնում նա ծպտուած, դառնում է Դերձակի աշա-  
կերտ: Ժամանակ անց բացայայտում է իրեն եւ ներկայանում հայր Թա-  
գաւորին: Ղուշը երգում է, Թագաւորի այգին՝ կանաչում:

Այլ տարբերակում, Ղուշը փերի է: Հերոսը նրան բերում է հեռաւոր  
աշխարհից: Փերին մատը կտրում է եւ արիւնը քսում կոյր Թագաւորի  
աչքերին, եւ նրա աչքերը բացւում են:

իրանական «Միմորդ Հաւքի Օգնութիւնը» հեքիաթում պահպանուել են կոյր Թագաւորի 3 որդիների անունները, որոնցից երկուսն այս կամ այն կերպ առնչուում են Արեւի գաղափարին: Մայլէք (հրեշտակ)-Ջամշիդ, Մայլէք-Պորշիդ եւ Մայլէք-Մոհամմադ<sup>18</sup>: Ջամշիդն իրանական էպոսի ոսկեդարեան շրջանի հերոսն է՝ Տրաետաոնայի պապը, որ մարդկանց մէջ մշակութակերտ գործունէութիւն էր ծաւալում: Աւետական Հիման է՝ մարդկութեան նախահայրը՝ հին պարսկական Ծաման, որի անունը ստուգաբանուում է, իբրեւ «երկուորեակ»: Ծագած է համարուում հնդիրանական եւ հնդեւրոպական միասնութեան ժամանակներից եկած երկուորեակների՝ Արեւի զաւակների առասպելությունից: Նրա հայրն Արեւ Վիւահանտն է, որ համապատասխանում է վեդայական Վիւասւատին: Տարբեր առասպելներում Հիմային սղոցելով սպանում է չար ոգուց զորուած հարագատ եղբայրը՝ Նա աւանդաբար կապուած է համարուում կրակի, հետեւաբար՝ նաեւ Արեւի հետ<sup>17</sup>:

Երկրորդ եղբայր Պորշիդն արդէն ուղղակիորէն նախագրադաշտական Իրանի Hvare Արեւ աստուածն է, որը հակամարտում է Միհր-Արեւի դէմ, ապա դառնում նրա դաշնակիցը: Այս Պորշիդի մէջ է բանասէր կարապետ Մելիք-Օհանջանեանը տեսել Սասնայ Ծաւր էպոսի Պոր Մանուկի կերպարը<sup>18</sup>: Ինչպէս է. դարի մատենագիր, աստղագէտ եւ տոմարագէտ Անանիա Շիրակացու հաղորդած տուեալներից է երեւում, պարսիկները մինչեւ է. դարը չէին դադարել Արեգակին «Պորաշտ» կոչել<sup>19</sup>:

Ինչ վերաբերում է Մայլէք-Մոհամմադին, ապա նրա անունը հեքիաթում իր վրայ կրում է ուշ շրջանի մահմեդական Իրանի կրօնական զգացողութեան կնիքը: Հին պարսկական դիցաբանական ըմբռնումներում նրա նախակերպարը նոյնքան առաջնային նշանակութիւն պէտք է ունեցած լինէր, որքան Մոհամմեդ մարգարէն է մահմեդական կրօնի համար: Հեքիաթային Մայլէք-Մոհամմադը, որի անունը երեւան է գալիս իրանական այլ հեքիաթներում եւս («Մարգարտի Տերեւը», «Պիգախ Մայլէք-Մոհամմադը»<sup>20</sup> եւն.), կոյր Թագաւորի այն փառապանծ որդին է, որը նոյն արկածներին է հանդիպում, ինչ հայկական հեքիաթների Յրդ հերոսը՝ կուրացած հօր աչքերի բալասանը գտնելու ճանապարհին: Հայկական հեքիաթներում էլ անհնար է չնկատել նրա արեւային յատկանիշները: «Ղուշ Փարին» հեքիաթում նա գետնին ընկած մի փետուր է տեսնում, որն այնպէս է լոյս տալիս, կարծես՝ «մի արեւ երկնքումն ա, մի արեւ էլ գեներին ա»: Վերցնում, դնում է փափախածայի մէջ ու ինքն էլ Արեւի նման լոյս տալիս: Երբ հասնում է Թագաւորի քաղաքին, լուր են

հասցնում, թէ՛ «մի տղայ ա գայի, մի արեւ երկնքըմն ա, մին էլ դրա փափախածալըմն ա»: Նրան տանում են պալատ, եւ թագաւորը Հարցնում է. «Այ տղայ, ի՞նչ տղայ ես: Էս ի՞նչ արեւ ա փափախածալըմրդ»:

Ուշագրաւ է, որ մանիքէական ուսմունքում, որը մեծ մասամբ քրիստոնէութեան եւ գրուանականութեան խառնուրդ է համարուում, յիշատակուում է Երրորդ Առաքեալը, որին վերապահուած է աւարտին հասցնել լոյսի կորուսեալ նիւթի փրկութիւնը: Նա համարուում է Արեւի աստուած, ում պահլաւերէնում անուանում են Միհր-Ծագդ, իսկ սողըբերէնում՝ Միշէ (Միթրա): Լոյսը, որի մարմնաւորումներից մէկն Օր-միդդն է (Որմիդդը)՝ առաջին մարդը, պարտուելի եւ կորել է Մութ Աշխարհում: Այդ աշխարհի դեւերի դէմ է անվեհեր կռուի նետուում Կենդանի Ոգին՝ Միհր-Ծագդը: Դեւերը պարտուում են, իսկ նրանց մարմիններից արարուում է աշխարհն ու Տիեզերքը<sup>21</sup>:

Երեք եղբայրների առասպելովի մասին ազօտ յիշատակութիւններ կան նաեւ Հնդարիական Մահաբհարատա էպոսում, ուր խօսուում է Յրդ եղբոր՝ Տրիտայի մասին, որին եղբայրները դաւաճանաբար ջրհորն են գցել<sup>22</sup>: Յատուկ ուշադրութեան են արժանի իրանական ժողովուրդներին սկիւթների ծագման մասին Հերոդոտոսից աւանդուած երկու առասպելները, որոնցից մէկը պատմել են իրենք՝ սկիւթները, միւսը՝ յոյները: Սկիւթական առասպելի բովանդակութիւնը հետեւեալն է.՝ Սկիւթների երկրի առաջին բնակիչը Տարգիտոսոսն էր, որն ունէր Լիպոքսախս, Արպոքսախս եւ Կոյաքսախս անուններով որդիներ: Նրանց իշխանութեան ժամանակ երկնքից չորս առարկաներ վայր ընկան՝ լուծ, արօր, սակուր (երկսայրի տապար) եւ գաւաթ: Աւագ եղբայրները փորձեցին վերցնել, բայց դրանք սկսեցին վառուել: Յաղողուեց վերցնել միայն կրտսեր որդուն՝ Կոյաքսախսին, այդ պատճառով էլ աւագ եղբայրները համաձայնեցին, որ թագաւորական իշխանութիւնը պատկանի նրան: Սկիւթ ժողովուրդն առաջացել է Տարգիտոսոսի այս երեք որդիներից: Նրանցից յետոյ սկիւթական բոլոր թագաւորները երկնքից ընկած առարկաները պահպանում են որպէս սրբութիւն: Նրանք հաւատում են, որ տօնախմբութեան ժամանակ ով այդ առարկաները հետն ունենալով քնի բաց երկնքի տակ՝ տարին չի բոլորի<sup>23</sup>:

Այս սիւսէնում թուում է, թէ երկնքից ընկած 4 վառուող առարկաները երկնային լուսատուներ պէտք է խորհրդանշած լինէին: Միւս կողմից էլ յիշեցնում են Հայկական հեթաթների աւանդական վերջարանները, երբ աւուում է, թէ երկնքից 3 խնձոր ընկաւ, մէկը հեթաթը հնարողին, մէկը

պատմողին, միևն էլ՝ լսողին: Երեք եղբայրների հեքիաթների ծանօթ մտորւններն են յիշեցնում հերոսի՝ գիշերը չքնելը եւ առարկաները (խրն-ձորները) պահպանելը, եղբայրների առջեւ եղած դժուար լուծելի խնդրի (տուեալ դէպքում՝ վառուղ առարկաները վերցնելու) իրագործումը: Ծիրտ է, Հերոդոտոսը չի ասում, թէ եղբայրների հայրն է յանձնարարել լուծել խնդիրը, սակայն յանձնարարութեան մասին հաղորդում է առասպելի յունական տարբերակում: Այստեղ Տարգիտոսոսին փոխարինելու է գալիս Հերակլէսը, որը յետագայում Սկիւթիա կոչուած մի անբնակ երկրում ճամփորդելիս, ցրտի պատճառով իր վրայ է քաշում առիւծի մորթին եւ քնում է: Այդ ժամանակ նրա կառքի ձիերն անհետանում են: Հերակլէսը դրանք յայտնաբերում է քարայրում բնակուող մի կնոջ մօտ, որի հետ կենակցում է եւ նրանից ստանում ձիերը: Կինը յայտնում է, թէ Հերակլէսը 3 որդի է ունենալու, իսկ վերջինս պատգամում է նրան, որ որդիներին յանձնարարի ձգել իր աղեղն ու կապել գօտին այնպէս, ինչպէս ինքն է անում: Նրանցից ով կարողանայ կատարել յանձնարարութիւնը, նա էլ կը դառնայ այդ երկրի բնակիչը: Ժամանակ անց, Հերակլէսի որդիներից միայն կրտսերին՝ Սկիւթէսին է յաջողում կատարել հօր յանձնարարութիւնը: Նրանից են ծագում Սկիւթիայի թագաւորները՝<sup>24</sup>:

Սկիւթների ծագման մասին երկու առասպելում էլ, ինչպէս 3 եղբայրներին նուիրուած հեքիաթներում, դժուար լուծելի խնդրի իրագործման գրաւականը թագաւոր դառնալն է: Թէեւ առասպելում յիշատակութիւն չկայ աւագ եղբայրների՝ կրտսերի նկատմամբ ունեցած թշնամանքի վերաբերեալ, այնուամենայնիւ, այդ մտտիւր երեւան է գալիս յարակից աղբիւններից: Սկիւթական պեղածոյ իրերում ոչ մէկ անգամ հանդիպում է 2 մարտիկի՝ Յրդի դէմ մղուող կռուի տեսարանը, ուր Յրդ մարտիկը պարտւում է, ինչպէս իրանական Տրաեստոնա հերոսի 3 զաւակներից աւագներն են սպանում իրենց կրտսեր եղբորը: Իսկ սկիւթական Յրդ եղբոր՝ աւագ եղբայրներից սպանուելու պատմութիւնն ուղղակիորէն վկայուած է հռոմէացի հեղինակ Վալերիա Փլակկոսի Արգոնաւտիկա պոէմից՝<sup>25</sup>:

\*\*\*

Բանազիտութեան մէջ ընդունուած է, որ Արեւի եռակի դրսեւորումները բնորոշ են Միհրի արեւմտեան պաշտամունքին: Միհրը բարձրաքանդակներում եւ որմնաքանդակներում երեւան է գալիս երկու ջահակիր ալ Միհրերի՝ Cautes եւ Cautopates մանուկների մէջտեղում: Նրանցից մէկն՝ իր վեր պարզած ջահով խորհրդանշում է արեւազայր, միւսը՝

վայր իջեցրած ջահով՝ արեւամուտը, կամ մէկը՝ գարնանամուտը, միւսը՝ ձմեռնամուտը<sup>26</sup>։ Հոռոմէական հարթաքանդակներում Միհրն ուղղակիորէն յիշոււմ է որպէս Արեգակ<sup>27</sup>։

Երեք Միհրերի մասին պատկերացումը, թերեւս, դրսևւորուած է եղել նաեւ միհրապաշտական ծէսերում։ Միհր-Արեւին երկրպագողները նրան աղօթում էին օրական երեք անգամ՝ առաւօտեան, կէսօրին եւ երեկոյեան։ Բանասէր Երուանդ Տէր-Մինասեանն այս աւանդոյթն արդարացիորէն համեմատել է քրիստոնեաների՝ առաւօտեան, կէսօրուայ եւ երեկոյեան ժամերգութիւնների հետ<sup>28</sup>։ Միհրին պաշտամունք մատուցելու այս ձևը համընկնում է ԺԴ-ԺԵ դարերի մատենագիր Մխիթար Ապարանեցուց մեզ հասած՝ միջնադարեան հայ արեւապաշտների մասին այն հաղորդմանը, թէ նրանք Արեգակին երկրպագում էին համապատասխանարար այն կողմում, ուր տեղի էր ունենում նրա շարժումը<sup>29</sup>։ Ուստի, ըստ այդ կողմերի էլ, այսինքն՝ ըստ Արեւի ունեցած դիրքի, երկնային լուսատուն պէտք է որ առանձին աստուածութիւն ընկալուած լինէր։

«Երեք» թիւն, առհասարակ, յաճախակի գործածուած ենք տեսնում նաեւ 3 եղբայրներին նուիրուած հեքիաթաշարում՝ թագաւորի 3 որդի, եռեակ ճամփարաժան, 3 քոյր, նրանց առեւանգած 3 վիշապ եւն։ Հայկական «Մաղկած Բաղչան» հեքիաթում քոյրերն այսպէս են նկարագրուում.-

Կարմիր Աշխարհի տէր Վիշապը մի դուռ ու լուսամուտ չունեցող «ամարաթ»ում գերած է պահում «ըրեքնական էլ իւիլ վառ (արեգակից աւելի վառ)» աղջկայ՝ աւագ քոյրը։ Սեւ Աշխարհի տէր Վիշապի «ամարաթ»ում «եռունցը մին պըլլորած (ըռլորած) լուսնընգյա» միջնեկ քոյրն է։ Սպիտակ Աշխարհի տէր Վիշապը գերել է «մին շատ դաշանգյ (սիրուն) ախճիգյ, արեւին լուսան էլ իւիլ լուս տըռող» կրտսեր քոյրը։ «Թաքաւերին կուճի (փոքր) տըղան» սպանում է վիշապներին եւ ազատում աղջիկներին։

Մեզ տեսանելի աստղային երկնքում չկայ մի այնպիսի լուսատու, որ համեմատելի լինի Արեգակի հետ։ Միակը Լուսինն է, որի հետ էլ զուգադրուում են քոյրերը հայկական հեքիաթներում։ Նրանք լուսնային բնութագիր ունեն նաեւ իրանական «Միմորդ Հաւքի Օգնութիւնը» հեքիաթում. առաջին քոյրը «ջահել Լուսին է», երկրորդը՝ «Լիալուսին», երրորդը՝ «իր գեղեցկութեամբ խամրեցնում է միւս երկու գեղեցկուհին»։

Լուսնի եռակի հիպոստասները ծանօթ են նաև յուևական դիցարանութիւնից. Զեւսն իր սիրուհի Իոյին կնոջ՝ Հերայի ցասումից փրկելու համար դարձնում է սպիտակ կով եւ յանձնում հարիւրաչքանի Արգոսի՝ աստղագրող երկնքի պահպանութեանը: Սակայն Հերայի ուղարկած Բոռն Իոյին սկսում է հալածել աշխարհով մէկ: Այդ հալածանքների ընթացքում Իոն սպիտակ կովից վերածւում է նախ մանուշակագոյն-կարմիր կովի, յետոյ՝ սեւի: Պատմւում է, որ Արգոսի արքայ Ինախը ժամանակին հիմնադրել էր Իոպոլիս քաղաքը եւ իր դստեր անունն էլ դրել Իո՝ ի պատիւ Իո-Լուսնի, որին պաշտում էին Արգոսում: Ռ. Գրէյսն Իո-կովի երեք գոյները համարել է Լուսնի երեք հիմնական փուլերի դրսեւորումները՝ աճող եւ նուազող երկու կիսալուսնի եւ Լիալուսնի տեսքով<sup>30</sup>:

Նոյն այդ երեք գոյները հանդիպում են նաև հայկական «Ծաղկած Բաղչան» հեքիաթում, սակայն դրանք վերագրուած են վիշապների երեք աշխարհներին: «Անմահական խնձորը» հեքիաթում առաջին Վիշապն ունի 7 գլուխ, երկրորդը՝ 12, իսկ երրորդը՝ 24: Գլուխների ընդհանուր քանակը 43 է: Այս թիւը չի խախտւում նաև «Վրեակէ խնձորը» հեքիաթում, որտեղ թէեւ առաջինը 7 գլուխ ունի, 2րդը՝ 40, սակայն վերջին 3րդին, այնուամենայնիւ 43 գլուխ է վերագրւում: Ուրեմն, այդ 3 Վիշապն ընդամենը մէկ Վիշապ են, եւ քանի որ Լուսինը հեքիաթում 3 դրսեւորմամբ է երեւան գալիս, ուստի, Վիշապն էլ օրինաչափօրէն եռատւում է:

Հայկական հեքիաթներում, որպէս կանոն, քոյրերին առեւանգած վիշապները գլուխները դրել են նրանց ծնկներին եւ քնել, իսկ դա հին աստղագիտական ըմբռնումներով նշանակում է, որ Վիշապի գլուխն ու Լուսինը մօտեցել են իրար, եւ Լուսնի խաւարում կարող է տեղի ունենալ կամ խաւարումն արդէն կատարուած փաստ է եւ, ըստ հեքիաթի սիւժէի, 3րդ հերոս Արեւը սպանում է Վիշապին ու ազատում աղջիկներին: Իրականում խաւարումները տեղի են ունենում Լուսնի ուղեծրի եւ Պաւարածրի (արեւի երեւակայական ուղու) հատման կէտերում, որոնց ժամանակակից աստղագիտութիւնը «լուսնահանգոյցներ» է անուանում: Մինչդեռ հնում կարծում էին, թէ «լուսնահանգոյցներ»-ում Վիշապն է բնակւում, որը կուլ է տալիս Լուսնին կամ Արեւին<sup>31</sup>:

Հայերը Լուսնի «հանգոյցներ»-ն անուանում էին «Վիշապի գլուխ» կամ «Վիշապի տուտ»: Մաշտոցի անուան Մատենադարանի թիւ 2000 ձեռագրում, որն այդպիսի «հանգոյցներ»ի որոշման աղիւսակ է (բոլորակ), ժամանակի սկաւառակը պարուրած 2 վիթխարի Վիշապ է պատ-

կերուած: Սկաւառակի ներսում անգէն աչքով տեսանելի 7 մոլորակներն են դասաւորուած, այդ թւում՝ Արեւն ու Լուսինը: Վիշապներն իրենց հերթին շրջապատել են Կենդանաշրջանի գոտու 12 աստեղատները՝ հեքիաթի նոյն այն «ամարաթներ»ը, որոնցում վիշապները ժամանակ առ ժամանակ կարող են բանտուած պահել 3 քորյերին (Լուսինին): Վիշապներից մէկի գլուխն ուղիղ Լուսնի մօտ է գտնուում<sup>33</sup>:

Հիմքեր կան կարծելու, որ Վիշապի՝ աղջիկ առեւանգելու հեքիաթային-առասպելական մոտիւր նաեւ Լուսնի փուլերի հետ կապուած օրացուցային հասկացութիւններ է ներառել: Մաշտոցի անուան Մատենադարանի ձեռագրերից երեւում է, որ հայոց մէջ ընդունուած է եղել լուսնային, այսպէս կոչուած՝ «սինոդական» մէկ ամիսը՝ Նորա(Լիա)լուսնից մինչեւ Նորա(Լիա)լուսին ընկած ժամանակահատուածը հաշուել 29,5 օրով (օրացուցայինը՝ 30): Այս թիւը 4 անգամ կարելի է բաժանել 7 մասի, ինչից էլ առաջացել է շաբաթուայ (7 օր) գաղափարը: Ստացուած 1,5 օրուայ մնացորդը համարուել է այն ժամանակահատուածը, երբ Լուսինն անհետանում է երկնակամարից: Այսինքն՝ դա տեղի է ունենում սինոդական ամսուայ 29րդ եւ օրացուցային ամսուայ 30րդ օրուայ կէսի ընթացքում<sup>34</sup>:

Մատենադարանի թիւ 7098 ձեռագրում տրուած են Լուսնի ածման եւ նուազման օրերին համապատասխանող 8 փուլերի անուններ, որոնք գործածական են եղել Հին եւ Միջնադարեան Հայաստանում<sup>35</sup>: Դրանցից 6-7 եւ 11-12 օրական լուսինները բաժին են ընկնում աճող կիսալուսնին («Երկակտուր առաջին», երբ Լուսինը 2 կտոր է լինում) եւ «Լիալուսին» փուլերին: 14-15 օրական Լուսնի փուլը կոչւում է «Բովանդակալուսին», ինչը ժամանակակից ըմբռնումներով, «Լիալուսին» փուլն է: Այնինչ, հրնում ենթադրել են, թէ «Լիալուսին» ղէպքում Լուսինը 11-12 օրական է<sup>36</sup>:

Եթէ վերլուծենք 7 եւ 12 գլխանի վիշապներին եւ նրանց գլխատած Յրդ հերոսի հեքիաթային միջադէպը, ապա կը տեսնենք, որ այդ վիշապների առեւանգած աղջիկներից մէկը համապատասխանում է 7 օրական կիսալուսնին, միւսը՝ 12 օրական Լիալուսնին, ինչպիսին եւ նրանք սովորաբար նկարագրուում են հեքիաթներում: Սակայն այս ղէպքում բաց է մնում 24 գլխանի Վիշապի եւ Յրդ առեւանգուած աղջկայ խնդիրը, քանի որ ձեռագրում Լուսնի փուլերը մատնանշող աղիւսակը կազմուած է սոսկ սինոդական կէս ամսուայ համար, եւ մեզ յայտնի չէ, թէ ինչ առն է կրել Լուսնի 24-օրական փուլը: Դրա փոխարէն, գիտենք, որ հա-

յոց օրանուններում (որոնք զուտ լուսնային երեւոյթ են, քանի որ ամիս են ձեւաւորում) 24րդ օրը «Լուսնակ» է կոչւում<sup>38</sup>։ Եթէ շրջանցենք «Բովանդակալուսին» փուլը (որտեղից ձեւագրում, ըստ էութեան, Լուսնի «գիջում»՝ մաշուելն է սկսւում) եւ 24 թիւը ստանալու համար 12 օրական «Լիալուսին» փուլին աւելացնենք եւս 12 օր, ապա Լուսնի փուլերի սխեմորիկ դասաւորութեամբ կը վերադառնանք աղիւսակի առաջին՝ «Ուղեկցութիւն» կոչուած փուլին, երբ Լուսինն ուղեկցում է Արեգակին, այսինքն՝ երկնակամար է դուրս գալիս նրա հետ միասին։ Հեքիաթում այս մասին ասուում է, որ 3րդ հերոսը (Արեւը) 3րդ՝ 24 գլխանի վիշապին գլխատելոց յետոյ 3 քոյրերին էլ (Լուսինն) Լոյս Աշխարհ հանեց։ Այդ օրուանից սկսած, Լուսինը եւս 4 օր պէտք է երեւար Լոյս Աշխարհում եւ 28րդ օրուանից սկսած, ուղիղ 1,5 օր կրկին լիովին անհետանար տեսադաշտից։ Հաւանաբար, այս երեւոյթն էլ իր հերթին, հնում ընկալուել է որպէս Լուսնի առեւանգում վիշապից։

Երեք եղբայրներին նուիրուած վրացական «Իւան Զարիա» հեքիաթում թագաւոր Հայրն իր 3 աղջիկներին, որոնք Արեւի երես չէին տեսել, ասում է. «Գնացէք, Արեւի երես տեսէք»։ Երբ աղջիկները կատարում են հօր կամքը, նրանց փախցնում է վիշապը (այսինքն՝ Լուսինը ծագում է օրը ցերեկով, այնուհետեւ անհետանում երկնքից)։ Երեք եղբայրները գնում են 3 քոյրերին փնտրելու<sup>37</sup>։ Հայկական «Հեքիաթ Աւելոյ Բոյլեկ Բաշուն Եւ Չին Մաչինու Թագաւորի Ախչկան» հեքիաթում<sup>38</sup> թագաւորի 3րդ որդին ազատում է Չին Մաչինի Թագաւորի աղջկան, որին վիշապը փախցրել էր, երբ նա գրօսանքի էր դուրս եկել։ Իսկ Մատենադարանի թիւ 3965 ձեւագրում «Չին Մաչին» է կոչւում այն վայրը, որտեղ Արեգակն է ծագում<sup>39</sup>։

«Լուսին» բառն, առհասարակ, հնդեւրոպական բազմաթիւ լեզուներում համարժէք է ժամանակի միաւորներից ամսին, որը բաղկացած է օրերից (ժամերից) եւ շաբաթներից։ Ամիսներն իրենց հերթին տարի են ձեւաւորում։ Հնդեւրոպական նախաձեւն է \*mēnsr, որի ժառանգներից են համարւում սանսկրիտ լեզուի māṣr (Լուսին, ամիս), պարսկերէն māhr, ռուսերէն mesjac'ը եւն.։ Արմատն է՝ mē=«չափել»։ Հնդեւրոպական նախալեզուի ամիսները սկզբում լուսնային են եղել, այդ պատճառով էլ համահունչ են ըմբռնուել «Լուսին» եւ «ամիս» բառերը։ Յետոյ Լուսնի համար առանձին բառ է հնարուել։ Հնդեւրոպական նախալեզուի նրմատից հայերէնում մնացել է միայն «ամիս» բառը՝ ա նախաձայնի յաւելումով<sup>40</sup>։

Վիշապը փախցրել է Լուսնին: Դա նշանակում է, որ նա անմիջակա-  
նորէն սպառնացել է ժամանակաին միաւորներին եւ մարդկանց զրկել  
չափ ու հաշուարկ կատարելու հնարաւորութիւնից: Նրա 7, 12 եւ 24  
գլուխները պէտք է ըմբռնուած լինեն նաեւ 7 օրերի (շաբաթ), 12 ամիս-  
ների (տարի) եւ 24 ժամերի (օր) տեսակէտից:

Վիշապը գողացել է նաեւ Թագաւորի հրաշք այգու ծառի ոսկէ  
խնձորները: Իսկ ծառը հայկական ժողովրդական հանելուկներում յա-  
ճախ տարուայ խորհրդանիշն է, որն ունի 12 ճիւղ (ամիս), ամէն ճիւղին՝  
30 տերեւ (օր)՝ մէկը՝ սեւ, միւսը՝ սպիտակ յաջորդականութեամբ (զի-  
շեր, ցերեկ): Յատկանշական է, որ Բորչալուից եւ Սալմաստից յայտնի  
հանելուկում 30 օրերը համեմատուած են խնձորների հետ. «Մի ծառ  
կայ՝ 12 ճիւղ ունի, ամէն ճիւղին էլ՝ 30 խնձոր, ամէն խնձորի կէտը սեւ  
ա, կէտը՝ սպիտակ»<sup>41</sup>: Ուրեմն, խնձորները ծառի վրայ՝ նշանակել են  
կարգաւորուած օրացոյց եւ կարգաւորուած կեանք Տիեզերքում, որին  
սպառնում է Վիշապը՝ գողանալու պտուղները եւ ձգտելու ամէն ինչ  
վերածել մահուան ու քաոսի: Ուրեմն, այդ ծառը կենաց ծառն է, որի  
տէր Թագաւորը նոյնպէս պէտք է կապ ունենայ ժամանակի հետ<sup>42</sup>:

Հին աշխարհի աստղաբաշխութիւնը ժամանակի աստուած էր ճանա-  
չում Սատուռն մոլորակին, որին յոյներն անուանում էին Քրոնոս, բա-  
բելացիները՝ Կայմանու, իրանցիները՝ Քայլան (Կայմանու անունից)  
կամ Ջրուան: Վերջինս յայտնի էր նաեւ Տիխէ կամ Բակտ՝ ճակատագրի  
իմաստն ունեցող անուաններով, ինչը համապատասխանում է Սատուռնի  
հին եգիպտական «Նեմեսիսի (վրէժի, փոխատուցման, այսինքն՝ ճակա-  
տագրի աստծոյ) աստղ» անուանը<sup>43</sup>: Ջրուանին Բախ(կ)տ անուանով է յի-  
շում նաեւ Ե. դարի մատենագիր Եզնիկ Կողբացին. «Ջրուան ոմն անուն  
էր, որ թարգմանի բախտ կամ փառք»<sup>44</sup>: Պահլաւական աղբիւրներում  
այդ աստծոյ մասին ասում է. «Այս աշխարհում տեղի ունեցող ամէն  
ինչ կատարում է բախտի, ժամանակի եւ ինքն իրեն գոյացնող Ջրուա-  
նի՝ թագաւորի եւ մշտնջենազոյ տիրոջ անխախտ կամքի շնորհիւ, քան-  
զի ամէնքի հետ հարկ եղած ժամանակ կատարում է այն, ինչ անխու-  
սափելիօրէն պէտք է կատարուի»<sup>45</sup>: Մանիքէականները եւս իրենց Վեհա-  
փառ Հօրը՝ Լոյս Աշխարհի Թագաւորին Ջրուա էին անուանում<sup>46</sup>:

Իրանցիները Ջրուանին, յոյների Քրոնոսի նման, ծերացած աստ-  
ուած էին պատկերացնում<sup>47</sup>, ինչպիսին Հայ առասպելաբանութեան մէջ  
(«Պատիկ Միրզան Եւ Դեւ Գորգոչան» հեքիաթում) ժուկ-ժամանակն է

այլևոր ծերունի, որ նստած է լեռան կատարին եւ Հերթով կծկում է սեւ ու սպիտակ թելերի կծիկները՝ գիշերն ու ցերեկը<sup>48</sup>։ Այդ կծիկները, մասնագէտների արդարացի հաւաստմամբ, արտայայտուել են Սանահինից յայտնաբերուած բրոնզէ դարի գօտի-օրացոյցի վրայ՝ կծիկ-պարոյրների տեսքով։ Դրանց թիւը 236 է՝ 118 կէտի հետ միասին։ Թուերի գումարը կազմում է 354, որը լուսնային տարուայ պարունակած օրերի քանակն է (11 օրով պակաս արեւադարձային տարուց)<sup>49</sup>։

Ուրեմն, այս ժուկ-ժամանակ աստուածը ոչ միայն Տիեզերքի երկու հակոտնեայ երեւոյթների՝ լոյսի եւ խաւարի յաջորդականութեան, այլև օրացոյցի կարգը սահմանողն ու պահպանողն է։ Այդ նրա այգու կենաց ծառի օր-խնձորներն է գողանում Վիշապը՝ ձգտելով քայքայել օրացոյցը եւ խաթարել կեանքի ընթացքը՝ նրանից է կախուած օրացոյցի բախտըն ու ճակատագիրը, այդ պատճառով էլ որդիներին պատգամում է պատուհասել Վիշապին եւ փրկել Մառը Հեքիաթներում նա ոչ միայն ծեր թագաւոր է, այլև՝ կոյր։ Եւ սա էլ հարազատ է ժողովրդական մտածողութեանը, քանի որ ժողովուրդը բախտն ու ճակատագիրը միշտ էլ կոյր է պատկերացնում։

Հեքիաթում Պստիկ Միրզան, երբ տեսնում է, որ ժուկ-ժամանակի սեւ թելի կծիկն արդէն կծկուելու, վերջնալու վրայ է (այսինքն՝ շուտով ցերեկն է յաջորդելու), խլում է ձեռքից եւ գլորում սարի տակ՝ «Դէ նոր կծկէ,- ասում է,- թող գիշերն էրկննայ, ես շատ բան ունիմ»<sup>50</sup>։ Միրզայի գործերը գիշերն են տեղի ունենում, ինչպէս Յեղայրների հեքիաթներում Յրդ եղբօր արկածներն են Մութ Աշխարհում կատարուում։ Այս դրուագն աւանդուած է նաեւ «Մինան Թաքաւերը» հեքիաթից, ուր Պստիկ Միրզան ոչ պատահականօրէն, Թագաւորի կրտսեր (Յրդ) որդին է։

«Միրզան, ըստ էութեան, Միւր-Արեւի յետագայում ծածկագրուած անունն է, որ երեւան է դալիս հայկական «Միրզա Մահմուդ Եւ Զամպուր», դրան յարող «Միրզա Մահմուդ» վերնագրերով երկու այլ հեքիաթում եւս<sup>51</sup>, ինչպէս նաեւ իրանական «Միրզա Մաստու Ռումար Եւ Բիրի Մեհրնեգար» (թրգմ.՝ Գրագիր Հարբած եւ Միհրի պատկերով Օրիորդ) հեքիաթում<sup>52</sup>, ուր Միրզան ցերեկուայ Արեւն է, իսկ Բիրի Մեհրնեգարը՝ գիշերուայ (Առսինը)։

Ո՛րտեղից են սկսւում եւ առասպելական ի՞նչ վայրում են տեղի ունենում Յրդ հերոսի արկածները։ Հայկական «Մաղիած Բաղչան» հեքիաթում նա «զառ (ոսկի) բուլբուլի» ետեւից ուղեւորում է այն

ճամփով, որտեղից անցնողը ետ չի դառնում, այսինքն՝ տանում է հանդերձեայ աշխարհ, ինչպէս շումէրներն էին իրենց «Կուր» հանդերձեայ աշխարհն անուանում «Երկիր, որտեղից վերադարձ չկայ»<sup>53</sup>։ Այդ աշխարհը տանող ուղին ցոյց տուողը մի ծերունի է, որ նստած է եռեակ ճամփարաժանի մօտ եւ Թագաւորի Յ որդիներին բացատրում է, որ առաջին եւ Չրդ ճանապարհները բարի են, իսկ «Իրեքինջինը շատ շատ ա»։ Այդ ծերունու նախակերպարն ամենայն հաւանականութեամբ, յունական Հերմէսն է՝ (Մերկուրի մոլորակը)<sup>54</sup>, որ Յունաստանում աշխարհի բոլոր ճանապարհները ճամփորդներին ցոյց տուողի համբաւ ունէր եւ Հադէսի սուրհանդակը լինելով, մեռելաների հոգիներն ուղեկցում էր հանդերձեայ աշխարհ<sup>55</sup>։ Հերմէս մոլորակի աստուածութիւնը Բարելոնում ծերունի Նարուն էր<sup>56</sup>, որը յունական աստծոյ նման, դպրութեան, արուեստի, գրագիրների հովանաւոր էր եւ գրում էր մարդկային ճակատագրերը<sup>57</sup>։ Այս տեսակէտից նա նոյնանում է հայոց Տիրին՝ Որմիզդ-Արամազդի գրչին, քրմական գիտութեան Դպիրին, Երազագոյցին, Երագահանին<sup>58</sup> եւ հոգէառ հրեշտակ Գրողին, որ մարդկանց ճակատագրերն էր գրում ու մեռելաների հոգիներն ուղարկում հանդերձեայ աշխարհ։ Տիրի «երազագոյց», «երագահան» մակդիրներն էլ ճակատագրի գաղափարն են յուշում։ Նա կեանքի եւ մահուան թագաւորութիւնների սահմանագծին կանգնած միջնորդ է աստուածների եւ մարդկանց միջեւ<sup>59</sup>։ Ոչ պատահականօրէն, իրանցիների մէջ էլ Մերկուրի մոլորակը Տիր էր կոչւում<sup>60</sup>։

«Անմահական Խնձորը» հեքիաթում կրտսեր եղբայրը հորն իջնելով, հասնում է «Անտակ»ին, որն, ինչպէս նկատուած է, ստորերկրեայ աշխարհի ամենախոր տեղն է, ուր կուտակուած է Սեւ ջուրը։ Հայոց մէջ յայտնի է եղել, «Անտակ», «Յանատակ», «Սեւ Յանատակ», «Անյատակ», «Յանդունդ», «Անտակ Մով» անուններով։ Այն աշխարհի եռամաս կառուցուածքում ներկայացուել է որպէս Տիեզերքի նախնական քառասյին շերտը, որի վրայ է գտնւում վերգետնեայ կարգաւորուած աշխարհը՝ Կոսմոսը<sup>61</sup>։ Այս իմաստով, պատահական չէ, որ Յրդ հերոսն «Անտակ»ին հասնելով, անմիջապէս կռուի է բռնւում դիցաբանօրէն ջուր տարերքը մարմնաւորող Վիշապի հետ։

«Միմորդ Հաւքի Օգնութիւնը» հեքիաթում Յրդ հերոսն իր կուրացած թագաւոր հօր այգու նռնենու պտուղները գողացող դեւին հետապնդե-

լիս, իջնում է ջրհորը, որը «եօթ յարկ գետնի տակ է գտնւում»: Առաւել հետաքրքիրն այն է, որ երբ Սիմոորի թեւերի վրայ Լոյս Աշխարհ է ելնում, հաւքը նրան պատուիրում է նայել ներքեւ եւ տեսնել, թէ Շրկիրն ինչ չափի է: Եթէ նման է թէյի սկուտեղի, ուրեմն եօթ յարկ երկինք են բարձրացել, եւ վայրէջք կատարելու ժամանակն է: Այս դրուագից պարզ երեւում է, որ ջրհորի (հորի) յատակը եւ Տիեզերքն առասպելաբանորէն միեւնոյն տարածութեան մէջ են պատկերացուել: Պատկերացրել են, որ 7 յարկ գետնի տակ իջնելով, կարելի է հասնել Տիեզերքին: Ուրեմն, Յրդ. Հերոսը ստորերկրայքի միջով հասնում է Տիեզերքի ինչ-որ կէտի, որտեղից սկսւում է հանդերձեալ աշխարհը: Պարզ է, որ այստեղ գործ ունենք Արեւի մահուան մասին հին առասպելական մտածողութեան հետ:

Արեւի մահը կարող էր ընկալուած լինել կամ աշնանային օրահաւասարի օրը (Սեպտեմբերի 23ին), երբ գիշերն ու ցերեկը հաւասարւում են, այնուհետեւ ցերեկը սկսում է կարճանալ, կամ ամառային արեւադարձին, երբ գրանցւում է ամենաերկար ցերեկը, իսկ այնուհետեւ գիշերն է սկսում երկարել՝ ի հաշիւ լոյս օրուայ: Եւ ընդհակառակը: Արեւի ծընդեան օրը պէտք է դիտուած լինէր կամ գարնանային օրահաւասարին (Մարտի 21ին), երբ գիշերն ու ցերեկը հաւասարւում են, այնուհետեւ ցերեկը սկսում է երկարել, իսկ գիշերը՝ կարճանալ, կամ ձմեռային արեւադարձին, երբ գրանցւում է ամենակարճ ցերեկը, այնուհետեւ սկսում է երկարել ի հաշիւ գիշերուայ: Միջնադարում էլ, Մխիթար Ապարանեցու հաղորդմամբ, հայ արեւապաշտները տարեկան երկու անգամ հաւաքուել են մի յոյժ խաւար գուրի մօտ<sup>69</sup>, ըստ երեւոյթին, պաշտամունք մատուցելու համար, որը կարող էր տեղի ունեցած լինել կամ ամառային եւ ձմեռային արեւադարձերի, կամ աշնանային եւ գարնանային օրահաւասարների օրերին:

Հայոց մէջ, Անանիա Շիրակացուց եւ Ժ. Դարի տոմարագէտ Յովհաննէս Սարկաւագից հաղորդուած տուեալներով, ամառային արեւադարձի կէտը դիտուել է Յունիսի 19ին (երբ Արեւը խաւարածրի «խեցգետին» համաստեղութիւնում է), իսկ ձմեռային արեւադարձինը՝ Դեկտեմբերի 16ին (երբ Արեւն «Աթեղջիւր»ում է): Հաշուարկները կատարուել են Հայկական լեռնաշխարհի լայնութեան համար, քանի որ աշխարհագրական տարբեր լայնութիւններում այդ կէտերը տարբեր օրերի են համընկնում<sup>69</sup>: «խեցգետն»ում Արեւը «հեռանում է» մեզանից, իսկ «Աթեղջիւր»ում՝ «վերադառնում»:

Թունաստանի տարրեր տարածքներում Հերակլիչսի ծնունդը համարել են կամ Կենդանաշրջանի 10րդ համաստեղութեան «Այծեղջիր»-ի մէջ («Պոյճից սկսած»), կամ «Պոյ»-ում, երբ Արեւը հեռանում է 12րդ համաստեղութիւնից՝ «Զկներ»ից<sup>64</sup>։ Սրանից հետեւում է, որ Հերակլիչսի կեանքն ու 12 սիրանքներն էլ դիտուել են որպէս Արեւի բոլորապտոյտ, որն անցնում է Պաւարածրի 12 համաստեղութիւնների միջով։ Նրա ծնունդը «Պոյ»-ի կամ «Այծեղջիր»-ի մէջ պատկերացնելով, յոյները նկատի են ունեցել ձմեռային արեւադարձի կամ գարնանային օրահաւասարի ժամանակահատուածները։ Արեւմտեան միհրականութեան մէջ արդէն տեսնում ենք, որ Արեւի ծննդեան օրը ստոյգօրէն համարուել է Դեկտեմբերի 25ը<sup>65</sup>, երբ ձմեռային արեւադարձն է սկսւում։

Հագիւ թէ հնարաւոր է ճշտել, թէ հայկական ամսանունները (Արեգ, Ահկի, Մարբրի, Մարգաց, Հրոտից, Նաւասարդ, Հոռի, Սահմի, Տրէ, Քաղոց, Արաց, Մահեկի) ինչ դիրք են գրաւել տարուայ մէջ՝ ըստ եղանակների, ինչպէս եւ կարծում է աստղագէտ, տոմարագէտ Բենիկ Թումանեանը։ Դրանք գալիս են անյիշելի ժամանակներից, որտեղից մեզ տոմարական բովանդակութեամբ բնագրեր չեն հասել։ Մի բան յայտնի է, որ երբ դրանք կիրառութեան մէջ են գտնուել, հայոց օրացոյցը շարժական է եղել, այսինքն՝ իւրաքանչիւր ամիս թափառել է տարուայ բոլոր եղանակներում<sup>66</sup>։ Նոյնը չենք կարող ասել Կենդանաշրջանի 12 համաստեղութիւնների մասին («Պոյ», «Ծուր», «Երկուորեակներ», «Պեցգետին», «Առիւծ», «Կոյս», «Կշէռք», «Կարիճ», «Աղեղնաւոր», «Այծեղջիր», «Ջրհոս», «Զկներ»<sup>67</sup>), քանի որ, եթէ ամսանունները եւ դրանց տեղերը փոփոխման են ենթարկուել, ապա աստղային երկինքը նոյնն է մնացել։ Կենդանաշրջանի իւրաքանչիւր համաստեղութիւն 360° կազմող շրջանագծում մէկը միւսի նկատմամբ գտնւում է 30 անկեան տակ։ Հնում ընդունուած է՝ եղել, որ այդ համաստեղութիւններից իւրաքանչիւրում Արեւը մնում է տարեկան 30 օր։ Ելակէտ են վերցրել գարնանային օրահաւասարի կէտը։ Այդ կէտը իւրաքանչիւր 72 տարին մէկ տեղաշարժւում է մէկ աստիճանով։ Մօտաւորապէս 2000 (աւելի կոնկրէտ՝ 2160) տարուայ ընթացքում տեղաշարժը կազմում է 30°։ Այսինքն՝ շուրջ 2000 տարին մէկ գարնանային օրահաւասարի կէտը շրջանաձև դէպի ձախ շարժուելով փոխում է Կենդանաշրջանի իր համաստեղութիւնը։ Մ.թ.ից մօտաւորապէս 2000 տարի առաջ գարնանային օրահաւասարը սկսուել է «Պոյ»-ից, այնուհետեւ տեղափոխուել է «Զկներ»<sup>68</sup>։

Հ. Ղեկնդ Ալիշանը կարծիք է յայտնել, որ հայերը վաղնջական ժամանակներում շարժական տոմարին զուգահեռ ունեցել են կրօնադիցաբանական տոների համար նախատեսուած անշարժ՝ «Սրբազան տոմար», որի համաձայն, գարնանային օրահալասարը սկսուած է համարուել Արեգ՝ Մարտ ամսից<sup>69</sup>։ Այս տեսակէտը յետագայում պաշտպանել է տոմարագէտ Հայկ Բաղալիանը։ Ըստ նրան, առանց անշարժ տոմարի, առանց նշանաւոր տոների հաստատուն ժամանակը սահմանելու, անիմաստ կը լինէր, օրինակ, Վարդավառի տօնն ամռանը կատարելու փոխարէն, կատարել ձմռանը<sup>70</sup>։ Ուրեմն, եթէ առաջնորդուելու լինենք հայոց «Սրբազան տոմար»ով, ապա Կենդանաշրջանի առաջին՝ «Յոյ» նշանից սկսած, համաստեղութիւններից իւրաքանչիւրը կը համապատասխանի մէկ ամսի։ «Յոյ»ը՝ գարնան առաջին՝ Արեգ ամսին, «Յուլ»ը՝ Ահիկին, «Եկաւոր»ը՝ Մարերիին, «Յեցգետին»ը՝ Մարգացին եւն։

Մատենադարանում պահուող Արեգակի ընթացքի բոլորակում, ուր ներկայացուած են տարուայ եղանակները՝ իւրաքանչիւրն իրենց երեք ամիսներով, աւանդոյթի ուժով, գարունը սկսուած է «Յոյ» համաստեղութիւնից։ Իւրաքանչիւր ամսին, ըստ հերթականութեան, համապատասխանում է իր համաստեղութիւնը Կենդանաշրջանում<sup>71</sup>։ Շիրակացին նոյնպէս Կենդանաշրջանի աստեղատները թուարկում է «Յոյ»ից սկսած, որին բաժին է հանում Մարտ ամիսը (Արեգ)։ «Մարտի ամսոյ... մտանէ արեգակն ի խոյն...»<sup>72</sup>։ Հայերէնում նոր տարուայ իմաստն արտայայտող «Կաղանդ» բառը վերցուած է հռոմէական օրացոյցից, որտեղ իւրաքանչիւր ամսուայ առաջին օրն էր այդպէս կոչուում (kalendae)<sup>73</sup>։ Իսկ հայոց ամսանուններում իւրաքանչիւր ամսուայ առաջին օրը Արեգ էր կոչուում<sup>74</sup>։ Ուրեմն, հայերի մէջ կայուն աւանդոյթ էր հարկաւոր, որպէսզի հնարաւոր դառնար այդպիսի փոխառութիւնը։ Ուրեմն, Արեգն էլ (Մարտը) հայոց մէջ նոր տարուայ ամիս է համարուել։ Հայերն աւանդաբար, նոր տարուայ սկիզբ են ընդունել եւ տօնախմբութիւնները սկսել են գարնանային օրահալասարի՝ Մարտի 21ին մօտ ժամանակներում՝ Մարտի 10, 13, 16, 20 եւն.<sup>75</sup>։

Մատենադարանի թիւ 3880 ձեռագրում պատրաստուած է լուսնային ժամացոյց, որի վրայ պատկերուած է, թէ ո՞ր ամսին Արեգակը ո՞ր համաստեղութեան մէջ է գտնուում։ Սկսուած է Այծեղջիւրոյով, որին բաժին է հանուել Դեկտեմբեր (Քաղոց) ամիսը։ Վեց համաստեղութիւն անց (եօթերորդը) «Յեցգետին»ն է, որը համարուած է Յունիսի (Մարգաց)՝

աստեղատուն<sup>76</sup>: (Այսինքն, ըստ Հերթականութեան, խոյին դարձեալ համապատասխանում է Մարտը): Սա, ինչպէս վերն ասուեց, այն համաստեղութիւնն է, որտեղ ամառային արեւադարձի կէտն է գտնուում, եւ որում Հնում կարող էր ընկալուած լինել Արեւի (Յրդ Հերոսի)<sup>77</sup> հանդերձեալ աշխարհ մտնելը: Բայց նախքան այդ Հերոսին վերադառնալը, պարզենք, թէ ինչպէս են Հին աստղաբաշխները որոշել կենդանաշրջանի որեւէ համաստեղութիւնում Արեւի գտնուելու տեղը, եթէ լոյս օրով այդ համաստեղութիւնները պարզապէս չեն երեւում:

Հին յունական գաղութ Միլէթ քաղաքից յայտնաբերուած օրացոյցի մնացորդներում արձանագրուած են Յունաստանի տարածքից տեսանելի բոլոր այն աստղերի ծագելն ու խոնարհուելը, երբ Արեւը 30 օր շարունակ գտնուում է «Ջրհոս» համաստեղութիւնում: Առաջին 2 օրուայ մասին գրուած է. «1. Արեւը Ջրհոսում է. Առիւծն առաջտեան ծէգին մայր մտնել է սկսում...»: (Այսինքն՝ աստղային երկնքում մինչեւ լուսաբաց երեւում է «Ջրհոսից Յ համաստեղութիւն առջեւում գտնուող «Առիւծ»ը): 18րդ օրուայ մասին ասում է. «Ջրհոսի կէսն է ծագում...»: (Աստղային երկնքում Հորիզոնի մօտ սկսում է բարձրանալ «Ջրհոս»ի մի մասը, իսկ «Առիւծը կիսով չափ առաջ է տեղաշարժուում): 30րդ օրուայ մասին՝ «Արկտուրն է մայրամուտին ծագում»<sup>77</sup>: Արկտուրը «Կոյս»ի հիւսիսային հարեւան «Եգնարած» (Հին Հայոց յայտնի է եղել «Եգողն») կամ «Ջովող» անուամբ<sup>78</sup>) համաստեղութեան պայծառագոյն աստղն է, որը երկնքի ամենապայծառ աստղերի թւում Յրդն է եւ մշտապէս շարժուում է կենդանաշրջանում «Առիւծ»ին յաջորդող «Կոյս» համաստեղութեան ուղղութեամբ<sup>79</sup>: Ուրեմն, երբ Միլէթի օրացոյցում ասում է, թէ 30րդ օրը Արկտուրն է մայրամուտին ծագում, դա նշանակում է, որ կենդանաշրջանում առաջ է շարժուել «Կոյս»ը, իսկ «Առիւծ»ն իր տեղը զիջել է նրան: Արեւը տեղափոխուել է «Զկներ»՝ Յ համաստեղութիւն «Կոյս»ից առաջ:

Նշանակում է, երբ աստղային երկնքի արեւելեան մասում Հորիզոնի մօտ է գտնուում կենդանաշրջանի համաստեղութիւններից որեւէ մէկն իր աստղային համակարգով ամբողջութեամբ վերցրած, այդ ժամանակ Արեւը գտնուում է տուեալ համաստեղութիւնից Յ համաստեղութիւն առջեւում: Արեւը հակամարտում է կենդանաշրջանի գօտու (Արեւուղու) կամ նրա հարեւանութեամբ գտնուող աստղատների թշնամական բնովթ ունեցող տէրերից որեւէ մէկի հետ եւ «սպանում» նրանց: Մէկ տարի անց նրանք դարձեալ յառնում են երկնոլորտում եւ դարձեալ

Հանդիպում Արեւին՝ նրա ուղեծրի վրայ, քանի որ աստղային երկնքի իւրաքանչիւր կէտ երկրից դիտողի համար վերադառնում է ճիշտ այն դիրքին, որը նրան տեսանելի էր եղել մէկ տարի առաջ:

Հին աստղաբաշխներն, առհասարակ, իրենց շուրջն ամէն ինչ յաւերժական մահուան եւ յաւերժական վերածննդի ընթացքի մէջ են պատկերացրել: Այդպէս է ոչ միայն բնութեան մէջ (օրինակ՝ Ժյի եւ բուսականութեան դէպքում), այլեւ Տիեզերքում, ուր իւրաքանչիւր աստղ մշտապէս «մեռնում»՝ իջնում է Հանդերձեալ աշխարհ եւ Ժամանակ անց կրկին յարութիւն է առնում (այսինքն՝ նկատի է առնւում աստղի ծագելն ու խոնարհուելը երկնակամարում)<sup>80</sup>: Մի համաստեղութիւն մշտապէս «սպանում է» մէկ այլ համաստեղութեան: Այս երեւոյթը կուհանի եւ շումէրական Գիլգամէշ էպոսում առկայ աստղային առասպելների համակարգերը բացայայտելիս, կիրառել է բանասէր Արմէն Դաւթեանը: Այսպէս, Կենդանաշրջանի կազմած 360 աստիճան շրջանում, որտեղ իւրաքանչիւր 30°-ը մէկ ամսուայ տեւողութիւն ունի, 3 ամսուայ տարբերութիւն ունեցող բոլոր համաստեղութիւնները գտնւում են միմեանցից մօտաւորապէս 90° անկեան տակ: Արդիւնքում, գիշերային երկնքում մի համաստեղութիւն ասպարէզ է նուաճում միւսի «սպանութեան» հաշուին: Օրինակ, Կենդանաշրջանում «Առիւծ»ը, որ «Յուլ»ից ետ է 3 ամսով, նրա հետ կազմում է 90°-ի անկիւն: Երբ «Առիւծ»ը սկսում է բարձրանալ երկնակամարով, «Յուլ»ի աստղերն աստիճանաբար անկում են ապրում: Իսկ երբ «Առիւծ»ը հասնում է իր բարձրակէտին, «Յուլ»ի աստղերը հաւասարւում են հորիզոնի գծին եւ անտեսանելի դառնում երկրից դիտողի համար: Այնպիսի տպաւորութիւն է ստեղծւում, որ «Առիւծ»ը կռուեց, յաղթեց եւ սպանեց «Յուլ»ին: Իսկ այս մենամարտի մոտիւն աւանդուած է Հնագոյն բազմաթիւ առասպելներում եւ զարդարուեստում. առիւծը հակամարտում է ցուլի դէմ:

Այս նոյն օրինակափութիւնը բնորոշ է Կենդանաշրջանի 3 ամսուայ տարբերութիւն ունեցող բոլոր միւս համաստեղութիւններին. «Յուլ»ը սպանում է «Ջրհոս»ին, «Ջրհոս»ը՝ «Կարիճ»ին, «Կարիճ»ը՝ «Առիւծ»ին եւն.: Գիլգամէշ էպոսում «երկնային ցուլը», որ «Յուլ» շումէրական MUL համաստեղութիւնն է, այդպէս 7 կում անելով, ցամաքեցնում է Եփրատ գետը: Կենդանաշրջանում Եփրատի համարժէքը կարող է լինել միմիայն «Յուլ»ից 90° անկիւնով առջեւում գտնուող «Ջրհոս» համաստեղութիւնը<sup>81</sup>:

Դառնանք Արեւուղուն (Խաւարածրին) եւ հեքիաթների Յրդ հերոսին, որը Հանդերձեալ աշխարհ մտնելով, Հանդիպում է Լուսին աստուա-

ծուհուն եւ կռուի բռնութեամբ նրան առեւանգած Վիշապի հետ: Արեւուդու հարեւանութեամբ, աստղային երկնքի հարաւային կիսագնդում այդպիսի Վիշապ կարող էր հնում ընկալուած լինել միմիայն հսկայական «Հիդրա» համաստեղութիւնը, որի գլուխն անմիջապէս «Սեցգետին» աստեղատան ներքեւում է, իսկ մարմինն ամբողջովին ձգւում է «Կոյս» համաստեղութեան երկայնքով: Կենդանաշրջանում «Սեցգետին»-ի եւ «Կոյս»-ի միջեւ «Առիւծ» համաստեղութիւնն է:

«Հիդրա»ն հայերն անուանել են «Ջրօձ»<sup>82</sup>, ինչպէս եւ այդ աստեղատան յունական անուան հիմքում «հիդրօ» (ջուր) արմատն է ընկած<sup>83</sup>: Յոյները համարում էին, որ Հիդրա հրէշի բնակավայրը երկրի վրայ Լերնէ ծովափնեայ քաղաքի մօտ գտնուող լիճն է: Նրանք ամէն տարի այստեղ գաղտնի ծէսեր էին կատարում՝ ի փառս Դիոնիսոսի, որը հենց այս վայրում էր հանդերձեայ աշխարհ իջել իր մօր՝ Սեմելայի՝ լուսնային աստուածուհու ետեւից: Այստեղ էր հանդերձեայ աշխարհ իջել նաեւ Պեւեփոնէին առեւանգած Հադէսը<sup>84</sup>:

Յունական դիցարանութեան մէջ Հերակլէսի 12 սխրանքներից առաջինը Նեմէյեան հրէշաւոր առիւծի սպանութիւնն է, որի դէմ նրա որսը եւ յաղթանակը տեւում է ուղիղ 30 օր (ինչպէս Արեւի հանգրուանն է Կենդանաշրջանի իւրաքանչիւր համաստեղութիւնում հնում հաշուուել 30 օր): Երկրորդ սխրանքը Լերնէյեան բազմազուլիս Հիդրայի սպանութիւնն է, որի գլուխները, յոյների պատկերացմամբ, Լուսին աստուածուհուն են խորհրդանշել: Երբ Հերակլէսը մարտնչում էր Հիդրայի դէմ, ճահճի միջից հրէշին օգնութեան եկաւ վիթխարի խեցգետինը եւ ճանկեց Հերակլէսի կրունկը, սակայն հերոսը կոխտոեց նրան: Մատուցած ծառայութեան համար Հերակլէսի հակառակորդ Հերա աստուածուհին խեցգետնի պատկերը տեղադրեց Կենդանաշրջանի համաստեղութիւնների մէջ<sup>85</sup>:

Այս առասպելում ամէն ինչից պարզ երեւում է, որ Հերակլէսի 12 սխրանքներն Արեւի արկածներն են Պաւարածրում, իսկ հանդերձեայ աշխարհի մուտք է համարուել «Սեցգետին» համաստեղութիւնը, որտեղ, ինչպէս վերելում ասացինք, հնում ամառային արեւադարձի կէտն էր գտնուում, եւ Արեւի «մահը»՝ հանդերձեայ աշխարհ իջնելն էր ընկալւում: Հենց այս համաստեղութիւն մտնելուց յետոյ Արեւը պէտք է հանդիպէր Լուսնին եւ նրան առեւանգած Վիշապին (Հիդրային), ինչպէս հեքիաթներում է նկարագրուում, որովհետեւ Լուսինն, իրօք, ամառային

եւ ձմեռային արեւադարձերի օրերին «մեռնում»՝ անհետանում է երկնքից՝ իջնելով հանդերձեալ աշխարհ<sup>86</sup> :

Այս ամէնի նկարագրութիւնը ցայտուն տեսնում ենք հայկական հեքիաթներում, այն տարբերութեամբ միայն, որ բացակայում է հանդերձեալ աշխարհ իջած Յրդ հերոսի եւ առիւծի մենամարտի տեսարանը: Դրա փոխարէն, այդ մենամարտը երեւան է գալիս իրանական «Սիմորդ Հաւքի Օգնութիւնը» հեքիաթում, ուր ջրհորի միջով հանդերձեալ աշխարհ ընկած Յրդ եղբայրը սրով երկու կէս է անում մարդկանց ահ ու սարսափի մէջ պահող առիւծին: Նրա այս հոյարարքը նոյնն է, ինչ Սասնայ Մռեռի Առիւծաձեւ Ձրջ Մհեր-Միհրի սխրանքը, որը Սասուն տանող ճանապարհը բռնած եւ քաղաքում «թանգուտէն» գցած առիւծին ճղում, երկու կէս է անում. մի կէսը դնում է «ճամբու էն խրաղ», միւսն՝ «էն խրաղ»<sup>87</sup> :

Երեք եղբայրներին նուիրուած հեքիաթաշարում դէպքերի ամբողջ յաջորդականութիւնը սկսւում է Վիշապի՝ Կեննաց ծառի պտուղները գողանալով: Այդ պտուղները հայկական հեքիաթներում խնձորներն են (օրերը), իսկ իրանականում՝ նուռերը, որոնք իրենց մէջ պարունակող 360 հատիկներով նոյնպէս տարին են խորհրդանշում՝ օրերով: Հայկական հեքիաթներում Վիշապը ժամանակի աստծոյ այգուց խնձորները գողանում է գիշերով՝ այն ժամանակ, երբ գալիս է դրանց հասունանալու պահը, այսինքն՝ քաղում է մէկ օր հասունանալուց առաջ, ինչպէս «Անմահական խնձորը» հեքիաթն է վկայում. «...հենց գալիս էր հասնելու վախտը՝ տեսնում ին ծառի վրէն էլ ոնչ խնձոր կայ, ոնչ գաղ»:

Հայկական լեռնաշխարհում, սովորաբար, խնձորենու ծաղկման ամիսն Ապրիլն է, իսկ հասունանալունը՝ Յուլիսը: Ապրիլը, հին հայոց «Սրբազան տոմար»ով, Ահկի ամիսն է, որին բաժին է ընկնում Կենդանաշրջանի «Յուլ» համաստեղութիւնը: Յուլիսը Հրոտիցն է, որի աստեղատունն «Առիւծն» է<sup>88</sup> : Վիշապը սակայն, խնձորները գողանում է ոչ թէ Յուլիսին՝ այս աստեղատանը, այլ նախքան հասունանալը՝ Յուլիսին՝ Մարգաց ամիսին՝ գլուխը խոթելով «Նեցգետին» համաստեղութիւն: Եւ իրօք, աստղային երկնքում տեսնում ենք, որ «Հիդրայի» (Վիշապի) մարմինը հարաւում սկսւում է Կենդանաշրջանի «Առիւծ» համաստեղութեան առջեւի ոտքերի տակից, իսկ գլուխը համարեա կպած է «Նեցգետին»ին:

Ստացւում է այնպէս, որ ժամանակի միաւորները խորհրդանշող Տիեզերական, Կեննաց ծառի թշնամի առասպելական Վիշապը, որի 7, 12 եւ

24 գյուղիները նոյնպէս ժամանակի միաւորներն են խորհրդանշում (չարաթ, ամիս, ժամ՝ օր), ձգտում է կազմալուծել եւ քայքայել տիեզերական կարգաւորուածութիւնը՝ օրացոյցը: Իր նպատակին հասնելու համար գողտնում է Մտուի պտուղները՝ նախքան հասունանալը: Գողտնում-փախցնում է նաեւ Լուսին աստուածուհուն (հեքիաթների 3 կոյս քոյրերին)՝ ժամանակի ցուցիչին, որի նշանակը կենդանաշրջանի գօտում հսկայ «Կոյս» համաստեղութիւնն է: Երկնքում զբաղեցրած իր տարածքով նա գիջում է միայն ահռելի «Հիդրա»յին, որի գլուխը Հարաւային կիսագնդում սկսւում է «Ռեցգետն»ի հարեւանութեամբ, իսկ պոչը՝ վերջանում «Կշէճ» համաստեղութեան եւ «Կոյս»ի ոտքերի մօտ՝ ձգուելով վերջինիս ամբողջ մարմնի երկայնքով: «Հիդրա»յին է սպանում Արեւը՝ Լոյս Աշխարհ հանելու Լուսնին, որի աստղային դրսեւորումը կենդանաշրջանում «Կոյս»ն է<sup>89</sup>:

Արեւը մտնում է «Կշէճ», որտեղ աւելի քան 2000 տարի առաջ աշնանային օրահաւասարի կէտն էր (Սեպտեմբերի 23ը) գտնւում, երբ գիշերն ու ցերեկը հաւասարւում են կշէճի նժարների նման, իսկ այնուհետեւ գիշերները սկսում են երկարել<sup>90</sup>:

Հեքիաթներում 3րդ քոյրը 3րդ եղբօրը խորհուրդ է տալիս առաջինը դուրս գալ Լոյս Աշխարհ, քանի որ աւագ եղբայրները նրան հորում են թողնելու: Իսկ եթէ այնպէս պատահի, որ նա մնայ հորում, ուրեմն պէտք է գնայ աղբւրի մօտ, որտեղ ջուր խմելու են գալիս սեւ, կարմիր եւ սպիտակ խոյերը, որոնց օգնութեամբ էլ դուրս կը գայ Լոյս Աշխարհ: Սակայն խոյերն, ինչպէս գիտենք, նրան Մութ Աշխարհ են գցում: Այդ խոյերն, իհարկէ, «Ռոյ» համաստեղութիւնն են խորհրդանշում, որը հորիզոնի արեւելեան մասում է գտնւում այն ժամանակ, երբ Արեւն աշնանը «Կշէճ» համաստեղութիւն է մտնում՝ Յ համաստեղութիւն «Ռոյ»ից անց: Այդ պատճառով էլ Արեւն ընկնում է Մութ Աշխարհ, ուր գիշերներն աւելի երկար են, քան ցերեկները: «Ռոյ»ին նախորդում է «Զկներ»ը, այսինքն՝ ջրային աւազանը, որտեղից էլ հեքիաթում ջուր են խմում խոյերը:

«Կշէճ» համաստեղութիւնը Մատենադարանի թիւ 3884 ձեռագրում ամբողջովին լուսնային խորհրդանիշներից է բաղկացած: Պատկերուած է տխրամած հայեացքով, ծալապատիկ նստած, կարմրազգգեստ մի աղջիկ, որի աջ եւ ձախ ձեռքերում կշէճի նժարներ կան: Երկուսն էլ Լուսնի մահիկի տեսք ունեն, որոնք աճող եւ նուազող կիսալուսիններն են պարունակում իրենց մէջ: Մէջտեղում աղջիկն է, որ ինքը՝ Լիալուսինը

պէտք է լինի<sup>91</sup>։ Այս աղջկան են, թերեւս, հեքիաթի Մութ Աշխարհի քաղաքի աղբւրի ակը փակած Վիշապին զոհաբերութեան տանում, որպէսզի Վիշապը փոքր-ինչ ջուր բաց թողնի բնակիչների համար։ Սովորաբար, նա քաղաքի թագաւորի աղջիկն է, իսկ «Միրզա Մահմուդ Ու Ջամալը» հեքիաթում՝ «Ռէսի (այսինքն՝ տանուտէջի, տուեալ դէպքում «Կշէռք» աստեղատան) աղջիկ» է անուանւում։ Նրան սպառնացող Վիշապը Կենդանաշարջանում «Կշէռք»ին յաջորդող «Կարիճ» համաստեղութիւնն է, որի գլուխը գտնւում է Պաւարածրի վրայ, իսկ մարմինն աւելի հարաւ է ընկած։ Գլուխը նայում է անմիջապէս «Կշէռք»ին, իսկ պոչն այնպիսի դիրք է ընդունել, որ կարծես խայթելու է պատրաստւում։ Թիկունքից «Կարիճ»ի վրայ է յարձակւում վահանն առաջ, իսկ հարուածող բազուկը վեր պարզած «Աղեղնաւոր»ը, որը նոյնպէս Արեւուղու վրայ է։

«Կարիճ»ի թունաւոր պոչի ներքեւում «Զոհարան» համաստեղութիւնն է, ինչն անմիջապէս հարց է առաջադրում՝ այդ ու՞մ են պատրաստւում զոհ մատուցել «Կարիճ»ին։ Զոհը «Կշէռք»ի կոյսն է։ Իսկ այս առասպելական Վիշապը «Կարիճ» է անուանուած՝ թերեւս, որպէսզի հնարաւոր լինի խուսափել շփոթութիւնից, քանի որ աստղային երկնքի Հիւսիսային կիսագնդում կայ եւս մէկ «Վիշապ», եւ մէկ «Օձ» համաստեղութիւն, իսկ Հարաւային կիսագնդում, ինչպէս գիտենք, «Հիդրա» Վիշապն է։

Ստացւում է, որ Արեւը հանդերձեալ աշխարհում «Հիդրա»յի առեւանգած Լուսնին Լոյս Աշխարհ հանելով, Զրդ անգամ է հանդիպում Լուսնին՝ «Կշէռք»ի կոյսին եւ նրան կլանել պատրաստուող «Կարիճ»-Վիշապին սպանելով, բացում է ջրերի ակունքները։ Լուսնին, իրօք, Շիրակացին «դայնակ անձրեւաց եւ սնուցիչ բուրաստանաց» է անուանել<sup>92</sup>։

Որպէսզի Արեւն իր Զրդ արոյսեան Վիշապին սպանի, պէտք է «Կշէռք» համաստեղութիւնից՝ Հայոց Հոռի (Սեպտեմբեր) ամսից անցնի «Կարիճ»՝ Մահմի (Հոկտեմբեր) ամիս։ Երբ այստեղ 30 օր մնալուց յետոյ մտնի «Աղեղնաւոր», «Կարիճ»-Վիշապն արդէն սպանուած կը լինի, իսկ ջրերի ակունքները՝ ազատուած։

Զրբի ցամաքումը կարող է տեղի ունենալ կա՛մ աշնանը, կա՛մ ձմռանը, աւելի ճիշտ՝ կարող է սկսուել աշնանը եւ շարունակուել ձմռանը։ Բայց մանաւանդ՝ ձմռանը, երբ գետերը սնուցող ձնհալի ջրերի փոխարէն, լեռները սառոյցով եւ ձիւնով են ծածկուում։ Երբ Արեւը մտնում է «Կարիճ», եղանակն աշունն է՝ Մահմի ամիսն է։ Երբ Արեւը

սպանում է «Կարիճ»ին եւ մտնում «Աղեղնաւոր» (Տրէ-Նոյեմբեր ամիս), այդ ընթացքում աստղային երկնքում «Կարիճ»ին սպանում է նաեւ իր բարձրակէտում յայտնուած «Ջրհոս»ը: «Կարիճ»ն անհետանում է հորիզոնից: Նշանակում է ջրերի ակունքը փակած Վիշապը պարտուել է, եւ ջուր է սկսել հոսել: Սակայն ի՞նչ ջրի մասին է խօսքը, եթէ մինչեւ գարուն գետերը դեռ շարունակում են սակաւաջուր մնալ: Գարնանը մօտենալու համար Արեւը նախ պէտք է անցնի «Ջրհոս»ը (Արաց-Յունուար) եւ մտնի «Ձկներ» (Մահեկի-Փետրուար): Իսկ այդ ժամանակ աստղային երկնքում իր բարձրակէտում է գտնուում «Ծուլ»ը, որը սպանում է «Ջրհոս»ին, ում հետ հակամարտութեան էր բռնուել դեռեւս Արաց ամսուայ սկզբից: «Ջրհոս»ն անհետանում է հորիզոնից: Եղանակը ձմեռ է, եւ երկրի վրայ, իրօք, ջրերի պակաս է զգացւում: Զուրը դեռ սառույցով է պատուած: Երբ գարնան Մարերի (Մայիս) ամսին Արեւն անցնում է «Ծուլ» համաստեղութիւնը եւ մտնում «Երկուորեակներ», այդ ընթացքում «Առիւծ»ը սպանում է «Ծուլ»ին, որը սպանել էր «Ջրհոս»ին եւ ցամաքեցրել Երկրի ջրերը: Այդ ժամանակ է միայն սկսւում գետերի յորդումը Երկրի վրայ, քանի որ եղանակը գարուն է, հալւում են լեռնագագաթների ձիւները եւ վարարում գետերը սնուցող վտակները:

Մինչդեռ «Կարիճ»-Վիշապի ցամաքեցրած ջրերի ակունքներն ամէնեւէին էլ Երկրի վրայ չեն, այլ Մութ (հանդերձեալ) Աշխարհում են գտնուում, այսինքն՝ երկնային են՝ անձրեւները, որոնք ամառուայ տապին հազուադէպ երեւոյթ են ու աշնանն են միայն առատօրէն յորդում Երկրի վրայ: Ուրեմն, այդ Վիշապն է, որ փակել է երկնքի ջրի ակունքը եւ կոյս է պահանջում ջուր բաց թողնելու համար: Փակել է ամռանը, աւելի ստոյգ՝ Նաւասարդ ամսին, երբ աստղային երկնքում բարձրակէտում են գտնուում «Կարիճ»ի աստղերը, իսկ «Հիդրա»ն առեւանգել է Նաւասարդի համարժէք «Կոյս» համաստեղութեան կոյս Լուսնին: Այս ջրդ Վիշապին («Կարիճ»ին) է սպանում Արեւը, ազատում է «Կչէռք»ի կոյսին, անձրեւ է պարգեւում մարդկանց եւ կենդանաշրջանում առաջ շարժուելով, հանդիպում է իր Յրդ ախոյեան Վիշապին: Հեքիաթում դա անտառում բնակուող Արծուի, Զմուռտ կամ Մովինար դուշի ձագերին ամէն տարի խժոռոջ Վիշապն է: Յրդ հերոս Արեւը հսկում է Արծուի բնին եւ սպանում նրա թշնամուն: Այս հակամարտութեան տեսարանն աստղային երկնքում Պաւարածրի հիւսիսային կողմում է՝ «Կարիճ» համաստեղութեան սերտ հարեւանութեամբ: «Օձակիր» համաստեղութիւնը ձեռքերի մէջ է առել «Օձ» համաստեղութեանը եւ խեղդամահ է անում նրան: «Օձ»ի մարմինը գալարւում է ջղաձգութիւնից:

«Օձ» եւ «Օձակիր» համաստեղութիւնները թէ՛ եւ տարբեր են, բայց օրգանապէս մէկ միասնութիւն են կազմում: Նրանք Արեւուդու վրայ այնպիսի դիրք են գրաւել, որ Արեւն, ըստ էութեան, իր երթուղով շարժուելիս, երկու համաստեղութիւններումիջովէլ անցնում է<sup>98</sup>: Եւ թւում է, որ եւ «Կարիճ»ի ու «Աղեղնաւոր»ի, եւ «Օձ»ի ու «Օձակր»ի մենամարտերն Արեւի առանձին-առանձին տեղի ունեցած կուռի տեսարաններն են վերարտադրում երկու հրէշների դէմ:

«Օձ»ի մարմինը բաժանուած է 2 մասի: Արեւելեան մասում պոչն է գտնուում, արեւմտեանում՝ գլուխը: Մարմինը «Հիւսիսային թագ» համաստեղութիւնից ձգւում է մինչեւ «Արծիւ» համաստեղութիւն: «Օձակր»ի ձախ ձեռքն ամուր բռնել է «Օձ»ի պոչը, որպէսզի նա յանկարծ դուրս չպրծնի ու չհարուածի «Արծու»ին: «Արծիւ»ը թէ՛ եւ «Օձ»ի եւ «Օձակր»ի անմիջական հարեւանութեամբ է գտնուում, սակայն միանգամայն անտարբեր է նրանց մենամարտին: Կարծես, այդ կռիւն արդէն աւարտուել, վերջացել է, եւ «Արծիւ»ն այժմ հօգր թեւերը լայնօրէն բացած, թռչում է դէպի Արեւուդու վրայ կանգնած «Այծեղջիւր»: Նրա ցումն ու կտուցն էլ ուղղուած են դէպի այդ համաստեղութիւնը: «Այծեղջիւր»ում, որը համապատասխանում է հայոց Քաղոց (Դեկտեմբեր) ամսին, ինչպէս ասացինք, ձմեռային արեւադարձի կէտն է, երբ ցերեկները սկսում են երկարել: Այստեղ է Մութ Աշխարհում գտնուող Արեւի վերջին հանգրուանը, որտեղից նա պէտք է ծնուի, դուրս գայ Լոյս Աշխարհ՝ Արծուի թեւերի վրայ բազմած:

Եթէ վերլուծենք, թէ՛ հեքիաթներում աղբիւրի մօտ Յրդ հերոսին հանդիպած խոյերն ինչ յաջորդականութեամբ են նրան գցում Մութ Աշխարհ, ապա գաղափար կը կազմենք տարուայ եղանակները տարուայ որոշակի գոյների հետ համադրելու հին հայոց պատկերացումներից: Սպիտակ խոյն Արեւին գցում է կարմիր խոյի, իսկ կարմիրը՝ սեւի վրայ, եւ նա յայտնւում է Մութ (սեւ) Աշխարհում՝ «Կէտք» համաստեղութեան մէջ՝ աշնանային օրահաւասարի կէտում: Այսինքն՝ սեւն աշնան գոյնն է: Լոյս (սպիտակ) Աշխարհ Արեւը դուրս է գալիս («Այծեղջիւր») համաստեղութիւնում՝ ձմեռային արեւադարձի կէտում: Ուրեմն, սպիտակ աշխարհը սկսւում է ձմռանից՝ Քաղոց՝ Դեկտեմբեր ամսից: Մնում է պարզել կարմիր աշխարհի տեղը, որը լաւագոյնս կարող է համապատասխանել գարնանը՝ իբրեւ կեանքի, վերածննդի եւ զարթոնքի գոյնը կրող եղանակի: Եւ եթէ աստղային առասպելն ասում է, որ սպիտակ խոյը հերոսին գցել է կարմիր խոյի վրայ, կարմիրը՝ սեւի, դա ցոյց է տալիս Արեւի ամենամեայ պտոյտը տարուայ Յ եղանակներում՝ առհա-

սարակ, ոչ թէ աշնանային օրահալասարից, այլ ձմեռային արեւադարձից սկսած: Հաշուից դուրս է մնում միայն ամառը, որի առաջին ամիսը՝ Մարգացը (Յունիսը) սկսւում է «Պեցգետին» համաստեղութիւնից: Իսկ «Պեցգետին»ն, ինչպէս տեսանք, հանդերձեալ աշխարհի մուտքն է, հետեւաբար, նոյնպէս կարող է համադրուել, միանալ մահուան գոյնին՝ սեւ աշխարհին, երբ տարին, բնութիւնը, բերքն իրենց հասունութեան շրջանում են, եւ ամէն ինչ աստիճանական անկում է ապրում: Ամէն ինչ նահանջում է, Արեւը «հեռանում է» մեզանից: Այդ պատճառով էլ ժամանակային այս կէտի նշանակն աստղային երկնքում խեցգետինն է դառնում, որը նոյնպէս յայտնի է իր ետ-ետ շարժուելու յատկութեամբ:

Տարին հին հայոց տոմարական պատկերացումներում 3 եղանակից կազմուած լինելը լաւագոյնս փաստում է Սանահինից յայտնաբերուած բրոնզէ դարի վերոյիշյալ գօտի-օրացոյցը, ուր ներկայացուած է ձիերի 12 պատկեր, որոնք 3 խմբի են բաժանուած: Մարմինների վրայ ունեն արեւային նշաններ եւ քար է են տալիս արեւակառքը: Գօտու վրայ նկարուած պարոլրների, կէտերի, ռոմբիկների, եռանկիւնիների, ձիերի, դրանց թուաքանակների եւ զբաղեցրած դիրքերի հիման վրայ ուսումնասիրողները եզրակացրել են, որ տեսարանը լուսնա-արեգակնային օրացոյց է, որտեղ տարին բաժանուած է 3 եղանակի՝ 12 ամսու, իսկ տարեկիցը համարուել է գարունը<sup>94</sup>:

Ի վերջոյ ինչի՞ են նպատակամղուած Արեւի արկածները հանդերձեալ աշխարհում, որի սահմանները կենդանաշրջանի 10րդ՝ «Այծեղջիւր» համաստեղութեամբ են աւարտուում: Երեք եղբայրների հեքիաթաշարում նա հորը կամ ջրհորն է իջնում կենաց ծառի պտուղները փրկելու վճռակամութեամբ: Իսկ այս տեսակէտից յատկանշական է, որ յունական դիցարանութեան մէջ եւս Հերակլէսի 11րդ սխրանքը Հեսպերուհիների հրաշալի ալգուց (որի պահապանն առասպելի մի տարրերակոււմ վիշապ անունով հովիւն է) ոսկէ խնձորներ ձեռք բերելն է: Այդ խնձորները կոչւում են նաեւ «ոչխարներ», քանի որ յունարէն melon բառը ե՛ւ խնձոր է նշանակում, ե՛ւ ոչխար<sup>95</sup>: Համանման պատկերացում յայտնի է նաեւ հայկական հանելուկներից, ուր Լուսինը ներկայացոււմ է, իբրեւ հովիւ, իսկ աստղերը՝ նրա հօտը<sup>96</sup>: Այս դէպքում ոչխարը կարող է ընկալուել նաեւ գարնան խորհրդանիշ «Պոյ» համաստեղութիւն, այսինքն՝ աստղերի խումբ, իսկ հերոսը՝ գարնանաբեր աստուած: Իսկ առասպելաբանօրէն ի՞նչ է խնձորը, եթէ ոչ նոյն աստղը, քանի որ կիսուելուց յետոյ ներսում աստղի պատկեր է երեւում: Իրականում Հեսպերն էլ աստղ է

կոչուել յոյների մէջ, որ ծագում է արեւմուտքում, երբ արեւը մայր է մտնում<sup>97</sup> :

Տարբեր ժողովուրդների աւանդոյթներում խնձորն առնչուում է մարդկային սեռունակութեանը, պտղաբերութեանը<sup>98</sup> եւ ընդհանուր առմամբ, չի բացառում, որ կարող է յանգել նաեւ գարնանային պտղաբերութեան գաղափարին: Հայոց մէջ հասել է նոյնիսկ պաշտամունքային մակարդակի: Գարեգին Սրուանձտեանցի հաղորդմամբ, Վասպուրականի Ազնաւորաց բերդի մերձակայքում հոսող գետի ակունքում վաղ արշալոյսին խնձոր էր յայտնուում, իսկ ով ձեռքը կարկառում էր, որ վերցնի՝ չքանում էր: Աղբիւրի ակը սուրբ էր համարուում, եւ չէր թոյլատրուում պղտորել՝ ջուր վերցնելով<sup>99</sup> : Այդ խնձորն, ըստ երեւոյթին, լուսաբացի աստղ Արուսեակ-Լուսաբերի (Վեներա մոլորակի) արտացոլանքն է եղել ջրի մէջ, որ «խնձոր» է անուանուել: Աստղերն էլ առանձնապատուկ պաշտամունքի են արժանացած եղել հայոց մէջ: Ժողովուրդը հաւատացել է, թէ նրանք կարող են զօրութիւն, իմաստութիւն եւ գուշակելու ունակութիւն շնորհել մարդկանց: Երուանդ Լալայեանը պատմում է, թէ ինչպէս գիւմիւրդեցի մի հովիւ խմել էր քարի փոսի մէջ հաւաքուած ջրից, իսկ գիշերը նրան երագում յայտնել էին, թէ սրբացաւ, քանի որ խմեց այն ջուրը, որի մէջ աստղն էր «գարկել»: Այնուհետեւ հովուին արգելել էին ամուսնանալ: վերջինս գուշակելու շնորհ էր ստացել<sup>100</sup> : Ըստ հուսկեան, ջրի մէջ «գարկած» այս աստղը Վասպուրականի աղբիւրի ակի մէջ յայտնուող խնձորի համարժէքը պէտք է եղած լինի: Աւելացնենք միայն, որ խնձորի պատկերը երբեմն թագաւորական թագի ու գաւազանի զարդ է ընտրուել: «Խնձոր» է կոչուել եկեղեցական սրբազան խաչից ներքեւ գտնուող գունդը: Խնձորին վերագրուել է նաեւ բուժիչ յատկութիւններ<sup>101</sup> :

Այս ամէնից յետոյ պարզ է դառնում, թէ Յ եղբայրների հեքիաթաշարում ի՞նչ էին խորհրդանշում Թագաւորի հրաշք այգու կենաց ծառի վրայ աճող խնձորները, ինչու՞ էր տիեզերական քառսային ուժերի խորհրդանիշ՝ Վիշապը գողանում դրանք, ինչու՞ Թագաւորի Յրդ որդին գնաց հանդերձեալ աշխարհ՝ պատժելու նրան եւ ինչու՞ հեքիաթների վերջում մշտապէս երկնքից Յ խնձոր է ընկնում հեքիաթը պատմողների եւ շտղների համար: Դրանք կենաց, երկարակեցութիւն, առողջութիւն եւ իմաստութիւն շնորհող աստղերի այլաբանութիւնն են, այն աստղե-

րի՝ որոնք միեւնոյն ժամանակ ժամանակի (կեանքի) միաւորներն են խորհրդանշում:

\*\*\*

Դառնանք Յրդ Հերոս Արեւին, որը ժամանակի կարգաւորումն իրականացնող աստուած է, քանի որ ինքն է տարեպտոյտ կատարողը՝ Թագաւորի (ժամանակի աստծոյ) այգու կենաց ծառի պտուղներին սպառնացող Վիշապին սպանողը, Լուսնին (որով ժամանակն է չափուում) Վիշապի գերութիւնից ազատողը: Մասնայ Մռեր է պոսում ժամանակի Հետ անմիջականօրէն կապուող այդպիսի Հերոս է Փոքր Մհեր-Միհրը, որը փակուած է ժայռի մէջ եւ նայում է բախտի, ճակատագրի անիւի՝ «Չարխի Փայլաք»ի պտոյտին: Երբ այդ անիւը կանգ առնի, դուրս է գալու՝ աշխարհն աւերի<sup>109</sup>: Անիւն, ըստ հուֆեան, ժամանակի ըմբռնման Հին աշխարհայեացքի դրսեւորումներից մէկն է, որի համաձայն, Տիեզերքում ամէն ինչ պատկերացուած էր անիւի նման անսկիզբ եւ անվերջ, շրջանաձեւ շարժման մէջ, որտեղ կեանքն ու մահը հաւասարարժէք հասկացութիւններ էին դիտարկուում, քանի որ Տիեզերքում ամէն ինչ կրկնուում է պարբերաբար<sup>109</sup>: Մատենադարանի բազմաթիւ ձեռագրերում երկնոլորտը համեմատուում է ջրադաշտարի, իսկ մոլորակներն այդ քարի պտոյտի հակառակ ուղղութեամբ ընթացող մրջյունի հետ: Այստեղից էլ ծագել է «մոլորակ» անունը, որը վերագրուել է նաեւ Արեւին ու Լուսնին<sup>104</sup>: Անգէն աչքով տեսանելի 7 մոլորակները, կարծես, իրօք, մոլորուած լինեն. պատկերացուել է, որ երկնոլորտը նրանց տանում է արեւելքից արեւմուտք, բայց իրենք էլ ընթանում են արեւմուտքից արեւելք: Ահա թէ որտեղից է առաջ եկել «Չարխի Փայլաք» արտայայտութիւնը: Չարխը հայոց կենցաղում ջրադաշտարի անիւն է՝ իր սրունիով, որի նշանակը եւ երկնոլորտն է, եւ ճակատագիրը, որը ժամանակի աստծոյ անուններից մէկն էր (Բախտ): Ամբողջ երկնոլորտի «չարժումը» ճակատագրի անիւի պտոյտի արտայայտութիւն է:

Ժամանակը կարգաւորող, հանդերձեալ աշխարհ մտնող եւ ելնող Արեւն իրանական հաւատալիքներում իր վրայ էր վերցրել նաեւ մարդկային հոգիները դատելու առաքելութիւնը: Կրտսեր Աւետայում ասուում է. «Երբ առաքինիների հոգիներն անցնում են ուրիշ աշխարհ, աստղերը, Լուսինը եւ Արեւը օրհնում են նրանց»: Այսինքն՝ արդարների հոգիների վերջին բնակավայրն աստղային երկինքն է: Սակայն մինչ երկինքին հասնելը, մարդու հոգին պէտք է անցնի Հատուցման կամ Չինւատ կամրջի վրայով, որը Հարատի լեռան վրայից ձգուում է մինչեւ աստղերը: Գա-

գաթնամատում նա սրի նման սուր է, եւ մեղաւոր հոգիները սայթա-  
քում ու ընկնում են անդուևդը, որտեղ նրանց յափշտակում եւ տարտա-  
րու է տանում դեմոնը (վհուկը): Առաքինի հոգուն կամրջի վերջում ըս-  
պասում է Միհրն իր գործակիցներ Սրառչայի եւ Ռաշնուի հետ: Նրանք  
դատում են փրկուածին՝ արդարաբար կշռելու նրա բոլոր բարի գործե-  
րը<sup>106</sup>:

Չինւատ կամուրջը հայոց մէջ յայտնի է եղել «Մազէ կամուրջ» անու-  
նով, որի վերջում քրիստոնէութիւնը կանգնեցրել է ոչ թէ Միհր-Արեւին,  
այլ «Արդարութեան Արեգակ» Յիսուս Գրիստոսին<sup>106</sup>: Մազէ կամրջի,  
նրա վրայով անցնող արդար մարդու եւ ներքեւում կանգնած վհուկի  
տեսարանը ժողովուրդը մինչեւ մեր օրերը թատերականացուած ներկա-  
յացնում է լարախաղացութեամբ կամ, այսպէս կոչուած, «քեանդրբա-  
զ»ութեամբ: «Քեանդրբազ»ը լարախաղացն է: Դիմակաւորուած վհուկը  
«Քյոսա» (անմազ) է կոչուած, որը ծաղրում է լարի վրայով քայլող հերո-  
սին եւ ակնկալում նրա վայր ընկնելը կամ ընդհակառակը՝ գովարա-  
նում է նրան, որ վայր չի ընկնում: Հերոսն անտարբեր է այդ ամէնի  
նկատմամբ: Նրա հայեացքը միշտ առաջ է նայում, իսկ ինքը հոգու  
նման թեթեւ ցատկեր է կատարում լարի վրայով՝ «չարժուելու դէպի  
աստղերը»:

Ինչպէ՞ս է Միհրն աստղային առասպելաբանութեան մէջ դարձել  
Զրուանի Յրդ որդի, եթէ յայտնի է, որ Զրուանն ընդամէնը 2 որդի է ու-  
նեցել՝ Որմիդդն ու Արհմնը (Ահրիմանը)<sup>107</sup>:

Հակոտնեայ երկուորեակների առասպելոյթը ծագել է դեռեւս եր-  
կարմատ (դուալ) հասարակութիւնում՝ տոհմատիրական կարգերում,  
երբ հասարակութիւնը դիտուում էր իբրեւ երկաստիճան Տիեզերքի՝ եր-  
կնքի եւ ստորերկրայքի հակադրամիասնութեան արտացոլանք, ինչպէս  
դա բանագիտական պատկառելի նիւթի հիման վրայ ցոյց է տուել Ալեք-  
սանդր Զոլոտարեւը<sup>108</sup>:

Զրուանական առասպելում լուսաւոր Որմիդդը խորհրդանշում է  
երկնային թագաւորութիւնը, Արհմնը, որին Ծ հազարամեայ իշխանու-  
թիւն է տրուած՝ ստորերկրայքը՝ Իրանական ականդութեան մէջ վեր-  
ջինս պատկերուած է որպէս վիշապ, որը յարձակում է իր եղբոր երկ-  
նային թագաւորութեան վրայ, բայց պարտուելով՝ քաշուած է ստորերկ-  
րայք<sup>108</sup>:

Ձրուանի 2 որդիների փոխարինումը Յով, Հաւանաբար, տեղի է ունեցել եղբայրներից մէկի կամ միանգամից 2ի կերպարների երկփեղկման ճանապարհով: Երկրորդ դէպքում, որն աւելի Հաւանական է, Յրդ եղբայրը երեւան է եկել, իբրեւ միջնորդ օղակ 2 եղբայրների միջեւ եւ գերիշխող դիրք է գրաւել նրանց երկնային եւ ստորերկրեայ իրաւասութիւնների նկատմամբ: Երրորդ եղբայր Արեւը, որի ճանապարհն անցնում է ե՛ւ երկնքով, ե՛ւ ստորերկրայքով, ձեռք է բերել առաջնային նշանակութիւն՝ ստանձնելով վիշապների դէմ կռուողի, տիեզերական կարգուկանոն եւ արդարադատութիւն հաստատողի գործառոյթը: Փաստացիորէն, նա ստանձնել է ե՛ւ երկնքի, ե՛ւ վերգետնեայ Երկրի, ե՛ւ ստորերկրայքի իշխանութիւնը, ինչպէս սկիւթական Յրդ եղբայր Կոլաքսախար (որի անունը նոյնպէս «Արեւ արքայ» է ստուգաբանւում) իշխանութիւն ունէր իր աւագ եղբայրների՝ Արպոքսախի՝ «Սորքերի տիրոջ» եւ Լիպոքսախի՝ «Լեռների (Երկրի) արքայի» վրա<sup>110</sup>:

Միհրը ե՛ւ Որմիզդի լոյսն է մարմնաւորում, իբրեւ երկնքի տէր, ե՛ւ Արհմնի խաւարը՝ նրա վիշապային էութեամբ: Իրանական աղբւրները չեն պահպանել նրա կերպարի այս երկակի ըմբռնումը, սակայն դրա փոխարէն Հռոմում Միհրը պատկերւում էր Արեւի նման շողարձակող գլխով եւ իր մարմինը պարուրած օձերով, որոնց հետ հաշտութեան մէջ է<sup>111</sup>: Այդ տեսքով մեզ է հասել նրա հարթաքանդակն՝ Այոն աստծոյ անունով: Այոն-Միթրա-Միհրը կանգնած է համաշխարհային գնդի վրայ: Մի բարձրաքանդակում ներկայացուած է վիշապի գալարներով պարուրուած պատանի, որը դուրս է եկել կոտորուած ձուի միջից: Ձուի կճեպի մի մասը ոտքերի տակն է, միւս մասը՝ գլխավերեւում, որին փաթաթուել է վիշապի գլուխը: Պատանի աստծոյ շուրջը շրջողը նոյնպէս ձուածիր է՝ Կենդանաշրջանի 12 համաստեղութիւնների նշաններով: Այդ ձուածիրը Տիեզերքի պատկերն է, իսկ աստծոյ անունը Ֆանէս է: Պահպանուել է նմանօրինակ եւս մէկ հարթաքանդակ, որ դարձեալ պատկերում է ձուից նոր ծնուող աստծուն եւ նոյն ձուածիրը՝ Կենդանաշրջանի նշաններով: Երեք պատկերներն էլ յայտնաբերուել են Հռոմի Աւենտինեան բլրի ստորոտի միթրայական սրբարանից: Առաջին Ձը՝ յունական մակագրութիւններով, նուիրուած են «Հելիոս (Արեւ) - Միթրա» աստծուն, Յրդը՝ «Հելիոս-Միթրա-Ֆանէս» աստծուն: Ֆանէսն օրփէոսեան աստուած էր եւ նոյնացուում էր Միթրա-Միհրին: Վանդէր-Վարդէնն արդարացիորէն եղրակացնում է, որ սերտ կապ է գոյութիւն ունեցել զրուանականութեան, միհրականութեան եւ օրփէոսականու-

թեան միջեւ, որոնք մ.թ.ա Դ. դարում գոյութիւն ունէին միաժամանակ: Միթրա-Միհրը զրոականական աստուած էր եւ ոչ՝ զրադաշտական, քանի որ Զրադաշտ մարգարէն կտրականապէս դատապարտում էր ցուլի զոհաբերութիւնը Միհրի պաշտամունքում: Իսկ ցուլ զոհաբերողն առասպելաբանօրէն Միհրն էր<sup>112</sup>:

Օրփէոսեան առասպելաբանութեան մէջ Արեւը նաեւ Ամուր էր կոչւում եւ կրում էր «Ֆաետոն Պրոտոգոն» (Նախածին Ճաճանչող) անունը: Նրան մայրը՝ Գիշեր աստուածուհին աշխարհ էր բերել մթութեան արգանդից՝ արծաթէ ձու ածելով<sup>113</sup>: Այդ աստուածն Ապուլէից հաղորդուած Ամուրի եւ Փսիխէայի առասպելում, ցերեկները վիշապ է, որը կտրում-անցնում է ստորերկրայքի Ստիքս գետը, իսկ գիշերները՝ գեղեցիկ պատանի է դառնում<sup>114</sup>: Պելասգեան մի առասպելում թռչնի կերպարանք առած էւրինոմ աստուածուհին վիշապից բեղմնաւորուելով, ձու է ածում, իսկ վիշապը դալարւում է դրա շուրջն այնքան ժամանակ, քանի դեռ միջից դուրս չի գալիս այն ամէնը, ինչ մեզ շրջապատում է բնութեան մէջ (այդ թւում՝ երկնային լուսատուները)<sup>115</sup>:

Նմանօրինակ պատկերացումների հետքեր բազմիցս հանդիպում են հայկական եւ իրանական հեքիաթներում, ուր, ինչպէս ասացինք, Միհրը յաճախ «Միրգա» ծածկագրուած անունով է երեւան գալիս: «Միրգա Մահմուտի Հեքիաթ»ում<sup>116</sup> նա վիշապի կերպարանքով յայտնուում է անզաւակ կնոջն ու նրա ամուսնուն եւ յայտարարում, թէ նրանց զաւակն է: Վերեւում յիշուած իրանական «Միրգա Մաստու Քումար Եւ Բիրի Մեհրնեգար» հեքիաթում Միրգան դարձեալ անզաւակ կնոջ եւ նրա ամուսնու (ինչպիսին էր Զրուանը<sup>117</sup>) վիշապ զաւակն է, որը յետոյ մարդկային կերպարանք է առնում: «Օձ Մայր» հայկական հեքիաթում<sup>118</sup> այս հերոսը դարձեալ Վիշապ է (օձ), որ գիշերները գեղեցիկ տղայ է դառնում: Նա ձուից է դուրս եկել, ինչպէս միհրական սրբարանի տեսարաններում՝ Միհրը: Այնտեղ, ուր ձուն են յայտնաբերել, նստած է Պստիկ Քանումը՝ իր 12 «նոքարներով» (համաստեղութիւններով կամ ամիսներով):

Պատկերն ամբողջացնելու համար մնում է եւս մէկ խօսուէն մանրամասն աւելացնել Աւենտինեան բլրի ստորոտի միթրայական սրբարանից, ուր պահպանուել է DEO ARIMANIO մակագրութիւնը: Ուսում-

նասիրողներից ոմանք այս բառակապակցութեան մէջ Ահրիմանի անունն են տեսնում: Միհրի պաշտամունքի հետեւորդներն իրենց Արեւ աստծոյ տաճարում երկրպագել են Ահրիման աստծուն, ինչպէս դա անում էին պարսից մոգերը: Այսպիսի մօտեցումը նոյնպէս ծագումնաբանորէն չի համապատասխանում ուղղափառ զրադաշտականութեանը եւ եւս մէկ անգամ փաստում է, որ Միհրն արեւելեան աստուած էր եւ առնչուած էր Զրուանի՝ ժամանակի աստծոյ պաշտամունքին<sup>139</sup>:

Զրուանի եւ նրա որդիների նախակերպարները՝ սիւժէտային այն ընթացքի մէջ, որպիսին մենք նրանց տեսնում ենք Յեղաշարների մասին հեթաթաշարում, պահպանուել են (ճիշտ է, զգալիորէն աղարտուած) Մասնայ Մաբրում: Էպոսի կառուցուածքում կարեւոր տեղ է գրաւում խաչապաշտ-կռապաշտ լքրիստոնեայ-ոչ լքրիստոնեայ) հակադրութիւնը, այդ իսկ պատճառով նրա զանազան պատումներ բանաւոր «խմբագրման» են ենթարկուել լքրիստոնեայ-եկեղեցական քարոզչութեան ազդեցութեամբ: Մասնայ Մաբրն աւանդաբար սկսւում է երկուորեակներ Սանասարի եւ Բաղդասարի, նրանց մօր՝ Մովիւնարի, վերջինիս Հօր՝ Գագիկի եւ կռապաշտ թագաւորի պատմութիւնից: Գագիկ թագաւորից նրա դստերը պահանջում է մէկ այլ թագաւոր, որը, որպէս կանոն, «կռապաշտ» է որակւում: Մարտունեցի Յովհաննէս Յակոբեանի պատումում ասւում է. «Փամանակաւոր, ասած, մի հաղ կռքապաշտ թակաւոր կար, կռուք էր պաշտում. ունէր էրգու հատ տղայ: Տղաներ՝ մէկի անուն Սանասար, մէկին՝ Ասլիմելիք (Բաղդասար - Գ.Մ.)»: Այնուհետեւ ասացողը պատմում է, թէ «կռքապաշտ» թագաւորն ունէր մի արտ, որն անընդհատ «ծծկում էին ղշերը»: Հայրը որդիներին յանձնարարում է. «Կնացէք, արտը պաշտպանէք, օր ղշերը չըծծկեն արտին»: Տղաներից մէկն արտի «վերին գլտին» է գնում, միւսը՝ «ներքին», եւ սկսում են զարկել ղշերին: Սանասարը յանկարծ նայում է երկնքին եւ ասում. «Մեր հայրը օր կռուք է պաշտում, բա էս վերին ղելինն ի՞նչ ա... Կայ, չկայ, սա Աստուած ա. անպայման մենք պտի աւտանք Աստուած»: Հայրը, երբ իմանում է, որ որդիները տեսել են Աստծուն եւ հաւատացել, որոշում է նրանց իր կռուքերին զոհարել: Եղբայրները հեռանում են օտար երկիր: Փամանակ անց, Ասլիմելիքը վերադառնում է Հօր երկիրը, սպանում է նրան կռոց տանը եւ ջարդուփշուր անում կռուքերին<sup>139</sup>:

Այս պատումում սկզբից եւեթ երեւում է, որ «կռքապաշտ» թագաւորը նախապէս Զրուանն է եղել, որը Եզնիկ Կողբացուց հաղորդուած ա-

ուսապելում էլ նախեւեռաջ իր աստուածներին գոհաբերութիւններ ա-  
նող՝ պաշտամունք մատուցող աստուած է նկարագրւում<sup>121</sup>։ Նա նաեւ  
հեքիաթների այգու տէր Թագաւորն է, որի այգին էպոսում դարձել է  
արտ, իսկ գող Վիշապի փոխարէն յայտնուել են «ղշերը»։ Պահակութիւն  
անող եղբայրների թիւը երկուսն է։ Պօք չկայ այն մասին, որ Թագա-  
ւորը կոյր է, եւ Յրդ որդին գնում է այն աշխարհ՝ հօր աչքերի բալասա-  
նը գտնելու։ Որդիներից Ասլիմելիքը (կրտսերը) ընդհակառակը՝ գուրգ  
խփում, ջարդում է հօր գլուխը։ Էպոսի խաչապաշտ ասացողներն, ի  
հարկէ, չեն կարող հանդուրժել ճշմարիտ Աստծուն հաւատացած  
որդիների եւ նրանց կուսապաշտ հօր հաշտութիւնը։

Հայկական էպոսում, աւանդաբար, Սանասարի եւ Բաղդասարի ճիւ-  
ղին յաջորդում է Ջոջ Մհերի ճիւղը։ Ջոջ Մհերը երկատուում է Սանասա-  
րի կերպարից, բայց ոչ թէ Սանասարի եղբայրն է, այլ՝ որդին։ Ջոջ Մհե-  
րի կերպարն իր հերթին երկատուում է Դաւիթի, Դաւիթինը՝ Փոքր Մհերի  
կերպարների, որոնց սխրանքները, գործողութիւններն ու արարքները  
յաճախ կրկնում են մէկը միւսին եւ դրանով նոյնանում Միհրի կերպա-  
րին։ Եւ քանի որ էպոսում ոչ թէ Յ, այլ Ն եղբայրներ են գործում, հետե-  
ւաբար՝ բացակայում է Յրդ եղբօր՝ աւագ եղբայրների ձեռքով հորում  
մնալու միջադէպը, ապա դրա փոխարէն երեւան է գալիս մէկ այլ մո-  
տիւ։ Հորն է ընկնում Դաւիթը (կամ Փոքր Մհերը) իր խորթ եղբօր՝ Մարա  
Մելիքի ձեռքով՝ դարձեալ դաւաճանաբար։

Միհրական եռեակի առասպելոյթի՝ հեքիաթներից աւանդուած միւս  
գրեթէ բոլոր միջադէպերը՝ Յրդ հերոսի սխրանքներն ու գործողութիւն-  
ները՝ հանդերձեալ աշխարհում (Քառսուն ճող ծամ կոյսին Վիշապից ա-  
զատելը, ոսկէ խնձորին տիրանալը, Պառաւի տանը հիւրընկալուելը,  
Մութ քաղաք ընկնելը, Ջրի ալը փակած Վիշապին սպանելը եւ նրան գո-  
հաբերութեան տարուող աղջկան ազատելը, Արծուի թշնամի Վիշապին  
սպանելը, այնուհետեւ նրա թեւերի վրայ Սասուն վերադառնալը եւն.)  
նոյնութեամբ կրկնւում են էպոսի՝ Սասունցի Յարմանի պատումում<sup>122</sup>։

Ջրուանին՝ իր երկու որդիների հետ տեսնում ենք նաեւ աստղային  
երկնքի Հարաւային կիսագնդում՝ շատ մօտ Արեւուդու վրայ գարնա-  
նային տարեակիղքն ազդարարող «Պոյ» համաստեղութեանը։ «Պոյ»ին  
յաջորդում են «Յուլ»ը եւ «Երկուորեակներ»ը, որոնց անմիջական հարե-  
ւանութեամբ «Օրիոն»ն է՝ վահանակիր, թրակիր կամ մահակակիր հրս-  
կան, որի դէմ կատաղի կռուի է նետւում «Յուլ»ը։

Օրիոնը յունական դիցարանութեան մէջ հողածին էր՝ վիթխարի հասակ ունեցող հսկայ, որ սիրատածում էր Օյնոպիոնի դուստր Մերոպէին: Օյնոպիոնը հարրեցնում է Օրիոնին, եւ երբ վերջինն քնում է, կուրացնում է նրան ու նետում ծովի ամբ: Օյնոպիոնը գտնում է մի տղայի, նստեցնում է ուսերին եւ խնդրում, որ ցոյց տայ արեւածագը տանող ճանապարհը: Երբ տեղ են հասնում, նա բուժում է աչքերն Արեւի ճառագայթներով եւ վերականգնում տեսողութիւնը<sup>123</sup>:

«Օրիոն» համաստեղութիւնը հայերին ծանօթ է եղել «Հայկ» կամ «Հայկն» անուամբ: Այդպէս են Աստուածաշնչի հայ առաջին թարգմանիչները նրա անունը յունարէնից փոխադրել հայերէն<sup>124</sup>: «Հայկ»ը երկնքում գտնւորուած, աղեղնաւոր հսկայ է՝ բաղկացած 7 հիմնական պայծառ աստղերից, որոնցից 2ն ուսերն են կազմում, միւս 2ը՝ ոտքերը, եւ 3ը՝ գոտին: Յատկապէս կարեւորուել է «Հայկ»ի գոտին, որովհետեւ հայերը տարրեր ժամանակներում առանձին անուններ են տուել դրան: Կոչուել է «Շամփուր», «Երեք թագաւոր» եւ «Չափ (Քար) ու կշիռ»: Այս վերջինը՝ աստղագէտ-տոմարագէտ Գրիգոր Բրուտեանին հիմք է տուել եզրակացնելու, որ «Հայկ»ն ընկալուել է որպէս չափ ու կշռի որոշող նրանով է չափուել ժամանակը, նրա աստեղատունն է եղել հայոց օրացոյցի կարգաւորողը<sup>125</sup>:

Ժամանակի հետ հայոց առասպելական նախնու կապը երեւան է գալիս Շիրակացու յայտնի յիշատակումից, որով ասուում է, թէ նրա ուսերերի եւ դուստրերի անուններով են կոչուել հայկական ամսանունները<sup>126</sup>:

«Հայկ»-«Օրիոն»ը ժամանակի աստուած է դիտուել, ինչպէս իրանական Զրուանը, իսկ յունական դիցարանութեան մէջ Օրիոնի կուրանալը, ապա Արեւի ճառագայթների շնորհիւ տեսողութիւնը վերականգնելը այդ ժամանակի աստծուն նոյնացնում են հեքիաթների կոյր թագաւորին, որն իր աչքերի բալասանը նոյնպէս գտնում է Յրդ որդու՝ Արեւի ջանքերով<sup>127</sup>:

«Հայկ»ի՝ ժամանակը (տարին) եւ ընդհանրապէս, տիեզերական կարգաւորողի դերն առաւել ակներեւ է դառնում հայոց աշխարհայեացքում գօտու հետ կապուած ծիսաառասպելական համատեքստից: Գօտին ցոյց է տալիս իրեն կրողի եւ մէջտեղը, եւ կէսը, եւ այն սահմանը, որով իրար են կապուած մարմնի վերին եւ ստորին մասերը, ինչպէս նկատել է

բանասէր Սարգիս Յարութիւնեանը: Իսկ մէջտեղը, միջինը, կենտրոնը տիեզերաբանական-առասպելաբանական մտածողութեամբ, կարգաւորուածութեան եւ ներդաշնակութեան աղբիւր է: Կենտրոնի անորոշութիւնը յանգեցնում է չափի, կարգուկանոնի բացակայութեան եւ տանում դէպի քաոս: Այս իմաստով եռամաս Տիեզերքի առասպելաբանական պատկերն՝ իր երկնային, վերգետնեայ եւ ստորերկրեայ տարածքներով, մարդկային կառուցուածքի նմանօրինակն է ներկայացնում եւ երբեմն ծագած է համարուում մարդու մարմնի մասերից (ինչպէս, օրինակ՝ Հնդարիական Պուրուշայի առասպելում): Գլուխը համապատասխանում է երկնքին, իրանը՝ միջնաշխարհին, իսկ ոտքերը՝ ստորերկրաքրին: Այդ ամէնի մէջտեղում գօտին է, որը քաոսի արտաքին կործանարար ուժերի դէմ պաշտպան կանգնելու, ներդաշնակութեան, չափն ու կշիռը պահպանելու նշանակութիւն է ձեռք բերում: Մրանից ելնելով, գօտին կրում է պայքարի իմաստ՝ դառնալով ռազմիկի հանդերձանքի անբաժանելի մասը: Այստեղից էլ «գօտեպնդուել», «գօտեւորուել», «գօտեմարտի ելնել» բարդութիւնները<sup>198</sup>: Ուշագրաւ է, որ 1895ին Ամստերդամում լոյս տեսած, աստղային երկինքը պատկերող հայկական Համատարած Աշխարհացոյց քարտէզում «Օրիոն» համաստեղութեան հայկական անուան դիմաց նշուած է «Մարտիկ»<sup>199</sup>, ինչն, ամենայն հաւանականութեամբ, «Հայկ»ի հնուց աւանդուած անուններից մէկն է:

Գօտու հետ կապուած ծիսապաշտամունքային շերտը պահպանուել է վաղեմի ժամանակներից մեր օրերը հասած լախտախաղում, որը կատարուում էր հիմնականում գարնանամուտին, հայոց նոր տարուայ՝ Բարեկենդանի տօնի շրջանում. հաւաքուում են 2-20 մասնակից, գծում մեծ շրջանագիծ եւ գօտիները հաւասարաչափ բաշխում դրա ներսում: Իւրաքանչիւրը կանգնում է իր գօտու մօտ՝ պատրաստ պաշտպանելու հակառակորդ խմբից, որի անդամները նոյնպէս գօտիները ձեռքն առած, ձգտում են խլել դրանք: Սկսւում է անողոք պայքար: Գօտուց զրկուածները դուրս են գալիս խաղից, իսկ ով մնում է շրջանագծի ներսում՝ չարաչար ծեծի է ենթարկւում գօտիներով: Այս խաղի մէջ, ըստ Յարութիւնեանի համոզիչ մեկնաբանութեան, շրջանագիծը սկզբնապէս խորհրդանշել է հին, իր ժամանակն ապրած եւ «մաշուած» տարին՝ գօտելուծուած ուժերով: Յարձակուող խումբը նոր տարին է, որ լիակատար յաղթանակ է տանում հնի նկատմամբ<sup>190</sup>:

Ուրեմն, պատահական չպէտք է համարել գօտեւորուած «Հայկ»ի պատկերի տեղադրումը Կենդանաշրջանի (որն, ի դէպ, նոյնպէս գօտի է) հենց այն հատուածի մերձակայքում, որտեղ գարնանամուտը՝ հին հայոց նոր տարին ազդարարող «Ռոյ» համաստեղութիւնն է գտնուում: Նրանց բաժանողն ընդամէնը «Յուլ» աստեղատունն է, որ «արշաւում է» «Հայկ»ի դէմ: «Հայկ»ի սերտ հարեւանութեամբ գտնուող «Երկուորեակներ» համաստեղութիւնը պէտք է որ առասպելաբանուած Հայկ նահապետի նախակերպարի (գուցէեւ ժուկ-ժամանակ աստծոյ) երկու երկուորեակ որդիները եղած լինեն: Կենդանաշրջանում էլ «Երկուորեակներ»ին յաջորդում է «Քեցգետին»ը՝ ժամանակի այն հատուածը (Մարգագ-Յունիսը), երբ հեքիաթային-առասպելական աւագ եղբայրները կրտսերին հանդերձեալ աշխարհ են իջեցնում:

Հայոց ականդութիւնը եռայարկ Տիեզերքն անխտիր բնակեցուած էր համարում մարդկանցով, որոնք միմեանցից տարբերում են սոսկ գօտիները կրելու կերպով: Ներքնայարկի մարդիկ գօտին կապում են ծնկները, միջնայարկում՝ փորից վերեւ՝ իրանին, իսկ վերնայարկում՝ կրծքին<sup>131</sup>: Այն, որ «Հայկ» համաստեղութեան գօտին փորից վերեւ է կապուած, նրան իջեցնում է միջնայարկ՝ մեր աշխարհը: Ուրեմն, պատմական իրականութեան մէջ տեղի է ունեցել դիւցազուն նախնու եւ ժամանակի աստծոյ նոյնացումը: Հայկը նահապետ է, գուցէեւ՝ առաջին տոմարագէտը, որն օրացոյցի կարգ է սահմանել, ինչպէս ցոյց են տալիս նրա գաւակների ամսանուն անունները: Նա ազգի անուանադիր է եւ սկզբնաւորող: Նա հակամարտի ելաւ իր ախոյանի՝ Բէլի դէմ, ինչպէս երկնքում հակամարտում է «Յուլ»ի դէմ: Սպանեց նրան եռաթեւ նետով (գուցէեւ՝ տարուայ Յ եղանակների խորհրդանիշը), հաստատեց կարգուկանոն, ինչը դիցարանական իմաստով տիեզերական կարգաւորուածութիւն է նշանակում: Ուստի, «Հայկ» համաստեղութիւնն իր գօտիով ընկալուել է տիեզերական կարգաւորուածութեանը միտուած ուժ՝ չափող եւ կշռող, այսինքն՝ ժամանակը հաւասարաչափ բաշխող, հին տարին նորից գատող աստծոյ մարդեղինացած կերպաւորումն աստղային երկնքում: Դա այն աստուածն է ու տարին, այսինքն՝ կեանքը խորհրդանշող Մառի տէրը, որի ճիւղերին աճող ոսկէ խնձորները (աստղ-օրերը, եղանակները) գողանում է Վիշապը եւ տիեզերական կարգաւորուածութիւնը փորձում է վերածել քաոսի: Ժամանակի աստծոյ պատուէրով, կարգը վերահաստատել է յաջողում միայն նրա Յ որդիներից կրտսերին:

Արեւուդու միհրական առասպելութն իր մէջ ամփոփած Յ եղբայրների հեքիաթների՝ Հայկական լեռնաշխարհում արմատացած լինելը յու-

չում է գնալ Վանի հռչակաւոր քարաժայռ, ուր բիսյնական դիցարանի աստուածներն են սեպագրերով յաւերժացել, եւ որը ոչ պատահականօրէն ժողովրդի մէջ «Մհերի դուռ» անունն է ստացել՝ Միհր-Արեւի անունով: Աստուածացանկում առաջնային դիրք է յատկացուած Պալդիին, որի անունն առաջինն է յիշատակուամ, իսկ աստուածներին նուիրարբերուող զոհերի քանակով ամենաշատը նրան է բաժին հասնում:

Իգոր Դեակոնովը պատահական չհամարելով հնում «Պալդիի դուռ» կոչուած քարաժայռը հայոց մէջ յետագայում «Մհերի դուռ» անուամբ յայտնի լինելը, որտեղից ականդութեան համաձայն, դուրս է գալիս Մհերը Վարդավառի եւ Համբարձման տօներին<sup>132</sup>, ենթադրել է, որ դրա դիրքը պէտք է ուղղուած լինի դէպի արեւածագ՝ գարնանային օրահալասարի կէտը, ինչը ստուգման անհրաժեշտութիւն ունի՝ Նախքան Մհեր-Միհրն, այս ժայռեղէն «դռնից» Պալդին է դուրս եկել<sup>133</sup>: Միհրն, ինչպէս ասուեց, նրա արեւմտեան պաշտամունքում ուղղակիօրէն Արեւի հետ էր նոյնացուամ: Նրան պատկերող հռոմէական շրջանի հարթաքանդակներում հանդիպում է «Անյաղթ Արեւ աստուած» մակագրութիւնը<sup>134</sup>:

Հետաքրքիր է, որ Դեակոնովը ոչ մի ընդհանրութիւն չի տեսնում արեւմտեան միհրականութեան եւ Իրանի զրադաշտական շրջանի Միհրի պաշտամունքների միջեւ: Դրա փոխարէն, դէպի արեւելք շարժուելիս, Հռոմի միհրապաշտական խորհրդանիշները նա ցոյց է տալիս բացառապէս Վանի թագաւորութեան սահմաններում: Նոյնական որոշ կրօնադիցարանական ըմբռնումներ (օրինակ՝ «Աստծոյ դռներ» հասկացութիւնը) նկատուամ են միայն փոխադրացիների մէջ<sup>135</sup>:

Թէ՛ ինչ է՛ ներկայացրել իրենից նախազրադաշտական Իրանի Միհրի պաշտամունքը, մեզ այդ մասին բաւարար տեղեկութիւններ չեն հասել: Սակայն Միհրի անունը «Միթրա» ձեւով եւ «ուխտ», «պայմանագիր», «երդում» իմաստներով գալիս է դեռեւս հնդեւրոպական միասնութեան շրջանից<sup>136</sup>: Իսկ որտեղ ուխտը եւ երդումն են, այնտեղ առկայ պէտք է եղած լինի նաեւ Արեւի պաշտամունքը, ինչպէս հայոց բանաւոր խօսքում էլ ցայժմ յարատեւել է Արեւով երդուելու ականդոյթը:

Պալդին բիսյնական պեղածոյ առարկաներում պատկերուամ է ե՛ւ իրբեւ պատանի, ե՛ւ իրբեւ բեղ-մօրուսով տղամարդ, ե՛ւ իրբեւ ծերունի, ինչը հիմք է տուել նրան մեռնող եւ յառնող աստուած համարել<sup>137</sup>, որ-

պիսին Արեւն է երկնքում՝ առասպելական մտածողութեամբ: 1995ին, վաճառքից ոչ հեռու, Անձաւ կոչուած վայրում, բիւսնական ամրոցից յայտնարեւոյն եւ վահանի մնացորդներ, որոնք պահպանել են խաղի պատկերը՝ մարմնից բոց-ճառագայթներ արձակելիս: Նա աստուածներին առաջնորդում է թշնամու ղէմ<sup>138</sup>:

Վանի թագաւորութեան կրօնադիցարանական յուշարձաններում խաղիին ճանաչելու վստահելի միջոցներից են առիւծը, արծիւը<sup>139</sup> եւ այծը: Մհերի դռան արձանագրութեան մէջ, աստուածների շարքում միայն նրան են ուլ գոհարեւում. «Շիւիցի աստուծոյ ամսից...վեց ուլ խաղի աստուծոյ (համար) թող այրուի»<sup>140</sup>: Յաճախ նա պատկերւում է առիւծի վրայ կանգնած կամ գահին բազմած, որին մօտենում է այծի (ուլի) եղջիւրներից բռնած մի կին՝ Ուարուբահինի դիցուհին<sup>141</sup>:

«Շիւիցի աստուծոյ ամիս» բառակապակցութիւնը բիւսնական սեպագրերում հանդիպում է DUTU ITU ձեւով, որտեղ UTUն Արեւն է եւ գրւում է Dingir դիցանուն ցոյց տուող դետերմինատիւով<sup>142</sup>: Ուրարտագէտ Յովհաննէս կարագէօզեանը կարծիք է յայտնել, որ այս ամիսը հայոց Արեգի համարժէքն է<sup>143</sup>: Սիւոն Հմայակեանն ուշադրութիւն է հրավիրել այն փաստի վրայ, որ այծերը ծնում են տարուայ մէջ մէկ անգամ՝ Փետրուար-Մարտ ամիսների ընթացքում: Հետեւաբար, ուլեր կարող էին գտնուել հենց այս ժամանակամիջոցում՝ Փետրուարի վերջին եւ Մարտի սկզբին, որպէսզի Շիւիցի Մարտ (Արեգ) ամսուայ մէջ գոհարեւութիւն խաղիին<sup>144</sup>:

Ուլը՝ նորածին այծը լաւագոյնս կարող է խորհրդանշել «Այծեղջիւր» համաստեղութիւնում նոր ծնուած Արեւին: Գեղամայ լեռների ժայռապատկերներից մէկն էլ արտայայտիչ կերպով խորհրդանշում է այծի եւ Արեւի միասնութիւնը, որոնք երկուսն էլ կարծես օրգանապէս մէկ մարմին են ներկայացնում: Պատկերուած է ճառագայթաւոր Արեւ, որի շողերից մէկն ուղղակիօրէն այծի պոզերից մէկն է: Երկու պոզն էլ ելուստաւոր են<sup>145</sup>: Բնականից էլ հայոց մէջ հովիւները այծի պոզերի վրայ իւրաքանչիւր տարի գոյացող օղակներով որոշում են նրա տարիքը: Ուրեմն, այծը նաեւ տարին խորհրդանշող արարած է: Թերեւս, կենդանաչրջանում էլ «Այծեղջիւր» ասելով, նկատի է առնուել այծի եղջիւրն, իբրեւ տարեցոյց:

Եթէ ընդունում ենք, որ այժմ «Այծեղջիւր» համաստեղութեան նշանակն է, որտեղից ձմեռալին արեւադարձի օրը լոյս աշխարհ է ելնում Արեգակը, ապա «Պալդի» անունը կարելի է ստուգաբանել, իբրեւ «Քաղդէի»՝ հայերէն «քաղ» (արու այծ) եւ դի (աստուած) իմաստներով: Մանաւանդ, եթէ հաշուի առնենք այն կարեւոր հանգամանքը, որ հայոց «Սրբազան տոմարով» «Այծեղջիւր»ին է բաժին ընկնում Քաղոց (Դեկտեմբեր) ամիսը: Այժի պաշտամունքն այնքան խորհրդանշական է եղել Հայկական լեռնաշխարհում, որ պարսից Շապուհ Բ. արքայի արտապետն «այծից հայոց արքայ» է յորջորջել հայոց Արշակ Բ.ին<sup>146</sup>:

Պալդիի անունն շուրջ մօտաւորապէս նոյն եզրակացութեանն է յանգել (սակայն այլ ճանապարհով) պատմաբան Արտակ Մովսիսեանը: Նա նկատել է, որ Վանի թագաւորութեան արձանագրութիւններում Hal վանկը գրութեան այս ձեւով հանդիպում է բացառապէս Պալդի աստծոյ անունն մէջ, ինչը պատահական չէր կարող լինել: Վանկերի բազմանշանակ իմաստների երեւոյթը հնում չափազանց տարածուած էր միջագետքեան սեպագրութեան մէջ, որի ժառանգորդը Վանի թագաւորութեան սեպագրութիւնն է: Սակայն Hal վանկի ուրարտական իմաստը եզակի է եւ չունի 2րդ նշանակութիւն: Ծագում է շումերական «լուսաւորել»՝ եռարդադրիչ աստղի տեսք ունեցող գաղափարագրից: Այս հանգամանքը Մովսիսեանին իրաւացիօրէն հիմք է տուել Պալդիի պաշտամունքի մէջ կարեւորել երկնային լոյսի գաղափարը եւ յուշել է նրան՝ Hal վանկը կապել «Քաղ» (այծ) արմատի հետ, քանի որ այժմ վաղադոյն հաւատալիքներում առնչւում էր երկնքին եւ ամպրոպին (լոյսին): (Մի անձնական գրոյցում հեղինակը յայտնեց, որ նկատի չի ունեցել Պալդիի արեւային բնոյթը): Ըստ այդմ էլ, Վանի թագաւորութեան դիցարանում «Պալդի»ն աստծոյ ոչ թէ իրական անունն է եղել, այլ նրա մակդիրը՝ «Այծ(աստեսք) աստուած» նշանակութեամբ (բնիկ հայերէն «դի»՝ աստուած բաղադրիչով)<sup>147</sup>:

Ուշագրաւ է Պալդիի ձիււ Արծիբինի անունը, ուր լեզուաբան Գեորգ Զահուկեանի ստուգաբանութեամբ առկայ է հայերէն «արծիւ» արմատը<sup>148</sup>: Արծիւն ընդհանուր առաջապելաբանութեան մէջ խորհրդանշում է եռամաս Տիեզերքի վերին աշխարհը<sup>149</sup>, իսկ ձին նոյնպէս Արեւի խորհրդանշին է, ինչպէս Քսենոփոնի վկայութեամբ, հայերը ձի էին գոհարբում Արեւին<sup>150</sup>: Տուեալ դէպքում Պալդիի ձին հարկ է հասկանալ

նաև «արծիւ» նշանակութեամբ: Արծուի թեւերի վրայ, ինչպէս գիտենք, Հանդերձեալ աշխարհից Լոյս Աշխարհ է ելնում Հեքիաթների Յրդ Հերոս Արեւը:

Վանի գրեթէ բոլոր թագաւորների արձանագրութիւններում խաղին ճանաչուում է որպէս թագաւոր, որից նրանք ստանձնել են իրենց իշխանութիւնը: Նա անուանուում է «արքայ խաղի» եւ պատկերուում գահին նստած<sup>151</sup>: Այդպիսին է նաև Յրդ եղբայրը Հեքիաթներում, ուր նա Հորից փառանգուում է իշխանութիւնը եւ դառնում թագաւոր:

Մուծածիրի քելեշինեան արձանագրութեան մէջ Ծ անգամ յիշատակուել է այս աստծոյ «Ալդի» անուանածեւը, այնուհետեւ 7 անգամ յիշուել «խաղի» ձեւը: Մենք հակուած չենք կասկածել, որ «Ալդի» գրեթէ բոլոր կարող էր յանկարծ վրիպման կամ թիւրիմացութեան արդիւնք եղած լինել: Ընդհակառակը, շատ հաւանական է, որ «Ալդի» նոյնպէս Արեւ աստծոյ մակդիրներից մէկն է եղել՝ Արեւի կարմիր (այ) յատկանիշն արտայայտող նշանակութեամբ («Կարմիր աստուած»): Այս անուանը փառաքչական «Այօ-Դին» ձեւով Հանդիպում է նաև «Հագարան Բլբուլ կամ Այօ-Դինոյի Նաղլը» Հեքիաթում, ուր նա Յրդ եղբայրն է՝ Արեւ-Միհրը:

խաղին ուրարտական աղբիւրներում պատկերուում էր հացերով լեցուն սեղանի առջեւ<sup>152</sup>: Նրան նուիրաբերում էին նաև գինի: Այդ է վկայում Սարգոն Բ-ի մի արձանագրութիւնը, ուր ասուում է, թէ նա Մուծածիրից տարել է 80 չափ ջուր վերցնող պղնձէ կաթսայ, որն Ուրարտուի արքաները խաղիի առջեւ զոհ մատուցելուց առաջ լցնում էին գինով<sup>153</sup>: Իսկ հացն ու գինին միհրապաշտական դրսեւորումներից են: Միհրի նուիրագործական պաշտամունքի մաս էր կազմում գինու կամ ջրախառն գինու հացկերովթը<sup>154</sup>: Միհրական ծէս պատկերող մի հարթաքանդակում ներկայացուում է Արեւ աստծոյ պատուին կազմակերպուած սրբազան ճաշկերովթ: Սեղանակիցների առջեւ եռոտանու վրայ դրուած է խաչի տեսքով 4 փոքրիկ հաց, իսկ խնջոյքի մասնակիցները ձեռքներին բռնել են գինու լեցուն եղջիւրներ: Ինչպէս մասնագէտներն են մեկնաբանում, նրանք այդ խմիչքից գերբնական ազդեցութիւն, Ֆիզիկական ոյժ, հոգու իմաստութիւն եւ անմահութիւն էին ակնկալում, որպիսին իրենց աստուածն ունէր<sup>155</sup>: Սրանից պարզ է դառնում, թէ ինչու Սասանայ Մռերում միհրական Հերոսների շուրթերին այնքան յաճախ է յայտնուում «Հացն ու գինին Տէր Կենդանին» բանաձեւը: «Տէր Կենդանի»

Հասկացութիւնն ինքնին յուշում է կենդանութեան՝ թերեւս, մահուանից յետոյ յառնելու գաղափարը: «Կենդանի Ոգի» էր կոչուում նաեւ մանիքէականութեան մէջ Միհր Եագղ Յրդ առաքեալ աստուածը, որ իջել էր Մութ Աշխարհ՝ լոյսի տարրերը փրկելու:

«Մհերի դռան» արձանագրութեան սկզբնամասից երեւում է, որ Շիւլինի աստծոյ ամսին նախատեսուած տօնախմբութիւնը նախեւառաջ վանի թագաւորութեան դիցարանի գերագոյն եռեակին՝ Խալդիին, Թէյշերային եւ Շիւլինին է ձօնուած եղել: «Խալդի աստծուն, տիրոջը, Իշպուիմի Սարդուրոդին [եւ] Միմուա Իշպուիմոդին այս դարպասները կառուցեցին [եւ] սահմանեցին կարգ Շիւլիմի աստծոյ ամսին տօնախմբութիւն կատարել Խալդի աստծուն, Թէյշերա աստծուն, Շիւլիմի աստծուն [եւ] աստուածներին բոլոր»<sup>166</sup>: Ուրեմն, հարկ է այդ աստուածային եռեակի միւս 2 անդամների յատկանիշները եւս քննել առանձին-առանձին:

Վանի թագաւորութեան տարեգրութիւններից մէկում նկարագրուած է, թէ ինչպէս «Թէյշերան այրեց» Սեւանայ լճի աւազանի Ուշքիանի, Բամնի լեռներում ապաստանած բնիկներին, երբ նրանց Սարդուրի Բ. արքան էր հետապնդում<sup>167</sup>: Եթէ Թէյշերան սոսկ Ամպրոպամարտիկ աստուած է, եւ կայծակն է նրա զէնքը, ինչպէս աւանդաբար ընդունուած է ասել<sup>168</sup>, ապա կայծակը գործի դնելիս, նա լաւագոյն դէպքում կ'այրէր մէկ-երկու մարդու եւ ոչ «բնիկներին»: Ուստի, տրամաբանական է կարծել, որ այստեղ խօսքը «բնիկների» կիզիչ Արեւի՝ Թէյշերայի թէժ տապից այրուելու մասին պէտք է եղած լինի: Արեւմտեան Հայաստանի մի մասնաւոր ժողովածուից յայտնի ձիւղ բրոնզէ խիստ պերճախօս ճակատակալում նա պատկերուած է աջ ոտքը ցլան դիւին դրած, կանգնած վիճակում, իսկ իրանն ուսով ամբողջովին մըտած է Արեւի թեւաւոր սկաւառակի մէջ: Ճակատակալի վերին եզրում 4 անգամ պատկերուած են առիւծի եւ ցուլի մենամարտի տեսարաններ<sup>169</sup>:

Իրանական աւանդութեան եւ Հռոմի միթրայական պատկերագրութեան մէջ ցլամարտիկ էր համարուում Միհրը, որն իր ախոյեանին յաղթելուց յետոյ, մէջքին նստած՝ քշում է դէպի քարայր: Յույն ազատուելու փորձ է անում, բայց մէկ այլ Արեւ ագռաւի միջոցով Միհրին է հաղորդում ցուլին սպանելու իր կամքը: Միհրը կատարում է հրամանը, եւ սպանուած ցուլի արիւնից առաջանում է Երկրի պտղաբերութիւնը,

խաղողի հիւթը կամ գինին, մարմնից՝ բոլոր օգտակար բոյսերը, յատկապէս ցորենը՝ նրա ողնեծուծից<sup>100</sup> :

Աստղային առասպելաբանութեան մէջ «Յուլ» համաստեղութեան ըստանութիւնը սկսում է կատարել նրանից 90° անկեան տակ գտնուող «Առիւծ» համաստեղութիւնը, երբ Արեւը մտնում է «Յուլ»։ «Յուլ»ը լիովին սպանւում է այն ժամանակ, երբ «Առիւծ»ի աստղերը հասնում են իրենց բարձրակէտին, իսկ Արեւը մտնում է «Երկուորեակներ»։ «Յուլ»ը եւ «Երկուորեակներ»ը գարնանային Ահկի եւ Մարբրի (Ապրիլ եւ Մայիս) ամիսներին են բաժին ընկնում՝ այն ժամանակամիջոցին, երբ երկրագործի՝ աշնանը հողին պահ տուած ցորենի սերմերը սկսում են ծլարձակել։ Այդ պատճառով էլ որմնաքանդակներում Միհրի սպանած ցլի պոչին ցորենի հասկ է պատկերւում. Միհրն՝ ինքը համարւում է հացի (ցորենի) հովանաւոր աստուած<sup>101</sup> :

Ջոհարբերուած ցուլին ենք տեսնում նաեւ Հայկական լեռնաշխարհում լճերի, աղբիւրների կամ արհեստական ոռոգման համակարգերի ակունքների մօտ հանդիպող Վիշապաքարերի վրայ, ուր սովորաբար, պատկերւում է ցլի կաշին՝ առանձին եւ գլուխը, որի բերանից ջրի վարար շիթեր են հոսում<sup>102</sup>։ Սա, իհարկէ, Միհրի եւ «Առիւծ» համաստեղութեան սպանած երկնային «Յուլ» համաստեղութեան համարժէքն է երկրի վրայ, որին զոհարբերում են երկրագործները՝ յանուն հողի պտղաբերութեան։ Այն «Յուլ»ն է, որն Արաց (Յունուար) ամսին իր բարձրակէտում յայտնուելով, սպանում է «Ջրհոս»ին եւ ցամաքեցնում Երկրի ջրերը։ Ուստի, երբ ինքն է սպանւում, բերանից առատօրէն ջուր է թափւում։

Միհրական այլ որմնապատկերներ արտայայտում են ցլասպանութեան յիշեալ առասպելի բոլոր մանրամասները. Միհրը ելել է ցլան շալակը եւ սուրը մխրճում է նրա մարմինը։ Պատկերի ձախ անկիւնում (արեւելքում) Արեւն է, որ իր առջեւ կանգնած ազուաւի միջոցով Միհրին պատուիրում է կատարել այդ սպանութիւնը։ Որովայնի տակ պատկերուած են կարիճ եւ օձ, երկուսն էլ՝ կողք-կողքի, երկուսն էլ՝ օդի մէջ՝ գետնից կտրուած, որ յուշում են նրանց երկնային ընդթիւ՝ կողք-կողքի գտնուող «Կարիճ» եւ «Օձ» համաստեղութիւնները, որոնք հորիզոնի արեւելեան հատուածում յայտնուում են այն ժամանակ, երբ Արեւը «Երկուորեակներ» համաստեղութիւն է մտնում։ Դիմացից սպանուող ցլի վրայ է ոստնում շուներ, որ աստղային երկնքում «Փոքր Ծուն» համաստեղութիւնն է՝ «Յուլ» համաստեղութեան ուղիղ դէմ-դիմաց՝ «Երկ-

ուղորակներն» ին կից: Որմնաքանդակում նոյնիսկ երկու տրեանակներն են պատկերուած՝ երկու ջահակիր մանկան տեսքով: Վերին աջ անկիւնում՝ արեւմուտքում, ալիսինքն՝ գիշերը՝ Լուսինն է՝ կանացի կերպարանքով՝ գլխին՝ լուսնաթագ՝ հետեւում է այդ տեսարանին<sup>183</sup>: Յիրաւի, քարի վրայ յաւերժացած մի հոյակապ աստղային առասպել, որով հներն ապրել են եւ վարել իրենց տնտեսական գործերն ու հոգեւոր կեանքը:

Գրեթէ նոյն տեսարանն է արտայայտում մէկ այլ որմնաքանդակ՝ այն յաւելումով, որ ագուաւի փոխարէն Արեւի դիմաց առիւծ է պատկերուած՝ Միհրի դաշնակիցն ու խորհրդանիշը, որն էլ իրականում աստղային երկնքում կատարում է «Յուլ» ի սպանութիւնը<sup>184</sup>: Երկնքում՝ Արեւի ճանապարհի եզրին՝ հարաւում կարելի է տեսնել նաեւ ագուաւի պատկերը՝ «Առիւծ» ից ոչ հեռու:

Այս որմնաքանդակում առաւել ուշագրաւն այն է, որ սրամերկ Միհրը պատկերուած է ոչ թէ ցուլի մէջքին նստած՝ նրան սպանելու արարքը կատարելիս, այլ՝ կանգնած վիճակում՝ սուրը վեր պարզած՝ յաղթական դիրքով, որ ցոյց է տալիս, թէ նրա եւ ցլան մենամարտը կատարուել, աւարտուել է, եւ կենդանին հնազանդ պառկել է Միհրի ոտքերի տակ: Նրա ձախ ոտքը ցուլի մէջքին է, աջը՝ գլխին: Այս պատկերը պատճէնահանման հասնող նոյնութեամբ տեսնում ենք ոչ միայն ձիու վերը յիշուած բիսյնական բրոնզէ ճակատակալի վրայ, այլեւ Թէյշեբա աստծուն ներկայացնող այլ տեսարաններում եւս: Նրա խորհրդանիշն, աւանդաբար, ընդունուած է համարել ցուլը: Արծկէի բարձրաքանդակում գլխին կրում է ցլան եղջիւրներ, ինքն էլ՝ կանգնած ցլան վրայ, ձախ ոտքը՝ մէջքին, աջը՝ գլխին<sup>185</sup>: Դարձեալ նոյն դիրքով հանդիպում է կարմիր բլուրից (Թէյշեբաինի ամրոցից) պեղուած գօտու վրայ<sup>186</sup>: Սերբար թեփէից յայտնաբերուած բրոնզէ թիթեղում Թէյշեբան գահի վրայ է բազմած, ձեռքին ոստեր կան (հնարաւոր է՝ ցորենի հասկեր): Նրան երկրպագում են 3 բարձրահասակ աստուածներ, եւ մէկ ցածրահասակ մարդկային Ֆիգուր (հաւանաբար՝ մահկանացու): Թէյշեբայի գահը ցլան մէջքին է, ոտքերը՝ դարձեալ գլխի ուղղութեամբ<sup>187</sup>:

Բիսյնական Թէյշեբային, սովորաբար, անուանապէս կապում են խեթա-խուռիական վիշապամարտիկ Թեշուրի հետ, որի պաշտամունքային գլխաւոր կենտրոնը կիլիկեան Տաւրոսում տեղադրուող Կումմիա (Կումանի) քաղաքն էր<sup>188</sup>: Նրա անունն, ըստ Ա. Պետրոսեանի, առնչուում

է նաեւ յունական Թեսեսլին: Թեշուրը պատկերուում էր ձեռքին կացին բռնած, իսկ կացինը՝ յունական «լարրիւսը» առկայ էր նաեւ Թեսեսլի պաշտամունքում: Նա Մինոտաւրոս ցուլին յաղթում է Լաբիրինթոսում, որի արմատը «լարրիւս»ն է<sup>166</sup>:

Թեսեսլը (ինչպէս Թէշերա-Միհրը) անմիջականօրէն կապուած է նաեւ «Յուլ» համաստեղութեան հետ: Ըստ առասպելի, Կրետէ կղզին տակնուվրայ անող ձիւնաճերմակ ցլին ուղարկել էր ծովերի աստուած Պոսէյդոնը: Թեսեսլը նրան տապալելուց յետոյ զոհաբերում է Ապոլոն (Արեւ) աստծուն (ինչպէս Միհրն է ցուլին սպանում Արեւի հրամանով): Դրանից յետոյ Պոսէյդոնը ցուլի պատկերը տեղադրում է Կենդանաշրջանի համաստեղութիւնների շարքում: Ոչ պատահականօրէն, յունական դիցաբանութիւնը նոյն այդ ցլի հետ առաջին մենամարտը վերագրում էր Կենդանաշրջանի 12 համաստեղութիւններով շրջող Հերակլէսին, որը թէպէտ սանձահարում է նրան, սակայն չի սպանում<sup>170</sup>:

Յլամարտիկ Թէշերան, այսպիսով «Յուլ» համաստեղութեանը բաժին ընկնող գարնան երկրորդ Ահկի (Ապրիլ) ամիս մտած Միհր-Արեւն է, որի հակամարտութիւնն իր ախոյեանի հետ վերջանում է այն ժամանակ, երբ նա մտնում է «Երկուորեակներ» (Մարբի-Մայիս) ամիս: Յի սպանութիւնը նա, ըստ առասպելի, կատարում է Արեւի հրամանով, իսկ հրամաններ, սովորաբար, արձակում են նրանք, ովքեր գերագոյն իշխանութեամբ կամ թագաւորական լիազօրութիւններով են օժտուած: Վանի թագաւորութեան դիցաբանում այդպիսի լիազօրութիւն ունէր յաճախ առիւծի վրայ պատկերուող խաղի-Արեւը՝ ամառային արեւադարձին մեռնող եւ ձմեռային արեւադարձին յառնող աստուածը: Ինչպէս քիչ աւելի ուշ կը տեսնենք, այդ աստուածն, ըստ հեքիաթների տրամադրած նիւթի, թագաւոր պէտք է դառնար «Խոյ» համաստեղութիւն՝ գարնան առաջին՝ Արեգ ամսին հասնելով: Իսկ հայոց Արեգ ամիսն, ինչպէս գիտենք, համապատասխանում է ուրարտական «Շիւլինիի ամսին»:

Արդէն ասել ենք, որ Շիւլինիի անունը գրելու համար Վանի թագաւորութեան արձանագրութիւններում օգտագործուել է շումէրական DUTU՝ Արեւ աստծոյ գաղափարագիրը<sup>171</sup>: Մասնագէտները, սովորաբար, նրա անունն ստուգաբանութիւնը յանգեցնում են լուսաւոր օրուայ, Արեւի կամ մանուկ Արեւի (խուռիական Šimige-Šimika, Šimegi՝ Արեւիկ ձեւից) գաղափարներին<sup>172</sup>: Պատկերուել է մանկան կերպարան-

քով<sup>173</sup>։ Մինուև արքան նրան կոթող է ձօնել Վանայ լճի հիւսիս-արեւելեան՝ Բերկրի գետի գետաբերանի մօտ, ինչը Հմայակեանին հիմք է տրւել եզրակացնելու, որ աստծոյ պաշտամունքն առնչուած է եղել Վանայ լճին<sup>174</sup>։ Այս տեսակէտը փաստուում է նաև հայկական ժողովրդական ասանդակեամբ։ Վանի շրջանում պատմել են, թէ Արեւը Վանայ լճի մէջ է մայր մտնում եւ լողանում, որ մաքրուած, հանգստանայ օրուայ ուղեւորութիւնից<sup>175</sup>։ Յոգնած Արեւը, երբ վերադառնում է իր պալատը, լողանում է զուլալ ջրի մէջ։ Յաջորդ օրը (արեւածագին) նորից ճամփայ է ընկնում<sup>176</sup>։ Այս տեսարանը յանգում է աշխարհի շատ ժողովուրդներին մէջ տարածուած ամէն օր ծովից ծնունդ եւ ծով վերադարձող Արեւի մասին անյիշելի ժամանակներից եկող դիցաբանական ըմբռնումներին։ Մովը դիտուել է իբրև ստորերկրայք, հանդերձեալ աշխարհ։ Կարելի է կարծել, որ նոյն կերպ է պատկերացուել նաև Շիւինին՝ ամէն օր մայրամուտին մեռնող եւ լուսածագին յառնող Արեւ աստուածը, որի պաշտամունքը, հաւանաբար, աւելի հին ժամանակներից է գալիս, քան Միհրի մասին կրօնադիցաբանական բարդ ուսմունքը, որին միացել է յետագայում։

Աղբիւրներում ոչ մի տեղեկութիւն չկայ այն մասին, որ Վանի թագաւորութեան դիցարանն իր կազմում Յ եղբայր աստուածութիւններ է ընդգրկել, սակայն, ինչպէս համեմատական նիւթի վերլուծութիւնն է ցոյց տալիս, այդ դիցարանի գլխաւոր եռեակի յատկանիշներում վառ արտայայտուած ենք տեսնում միհրական Յ Արեւների դիցաբանութիւնը։ Երեքն էլ տարուայ եղանակային որոշակի ժամանակահատուածների տիրակալներն են։ Թէչչեբայի իշխանութիւնն, ըստ երեւոյթին, տարածուել է Կենդանաշրջանի «Յուլ» եւ «Երկուորեակներ» համաստեղութիւններից (Ահկի-Մարերի՝ Ապրիլ-Մայիս ամիսներից) մինչև «Այծեղջիւր» (Քաղոց՝ Դեկտեմբեր ամիս)։ Այսինքն՝ նրա տիրոյթները սկսուել են գարնան կէսերից մինչև ձմռան սկիզբները։ Արծկէի յայտնի բարձրաբանդակում Թէչչեբան կանգնած է ցուլի գլխից եւ գաւակից աճող Կենաց ծառի երկու ճիւղերի մէջտեղում, որոնց վրայ Յ տերեւ է հաշուում։ 10րդ տերեւը նրա աջ ձեռքում է, ձախով թաս է բռնել։ Տերեւների, այստեղ, ամենայն հաւանականութեամբ, ժամանակային միաւորների, տուեալ դէպքում՝ ամիսների եւ համաստեղութիւնների նշանակն են։ Եթէ 10րդ ամիսը տարուայ առաջին՝ Արեգ ամսից («Յոյ» համաստեղութիւնից) հաշուելու լինենք, ապա կը համընկնի Քաղոց ամսին եւ «Այ-

ծեղջիւր» Համաստեղութեանը: Ուստի, հարց է ծագում՝ արդեօք, Թէյ- շերան 10րդ տերեւով եւ թասով այս 10րդ Համաստեղութեան եւ 10րդ ամսուայ հետ կապուած ինչ-որ ծիսական գործողութիւն չի՞ կատարում: Թւում է՝ այո, քանի որ Թաւրիզի մի մասնաւոր հաւաքածուից յայտնի բարձրաբանդակի բեկորում Թէյշերան պատկերուած է նոյն կերպարանքով՝ քրանջիւր եւ գագաթին գունդ պարունակող գլխարկով, մի ձեռքին՝ դարձեալ տերեւ, իսկ միւսին՝ թասի փոխարէն՝ միաեղջիւր այժ<sup>177</sup>, որպիսին ներկայանում է «Այծեղջիւր» Համաստեղութիւնն աստղային երկնքի քարտէզներում:

Ինչ վերաբերում է Շիւհնի-Արեգակին, ապա նրան յատկացուել է Մարտ-Արեգը՝ շիւերի եւ ընձիւղների ծլարձակման ամիսը, եւ նա ընկալուել է որպէս գարնանային տարեակգրի՝ նոր տարուայ զօրացող Արեւ աստուած, ինչպէս նաեւ, առհասարակ, լոյս օրուայ ընթացում լուսածագին ծնունդ եւ մայրամուտին հանգչող Արեգակ: «ՄՆերի դւան» արձանագրութեան վերջին տողերում ասուում է. «Իշպուիմի Սարդուրոդդին եւ Միմուա Իշպուիմոդդին... հաստատեցին կարգ. երբ ծանօրը (ճիւղերը խաղողենու) էտուն («) Խալդի աստծուն երեք խոյ թող զոհաբերուի, երեք խոյ աստուածներին բոլոր»: Իսկ խաղողի որթի էտումը Հայաստանում, ինչպէս ճիշտ նկատել է Հմայակեանը, սկսւում է Մարտ ամսի վերջին տասօրեակում եւ աւարտւում Ապրիլի առաջին կէսում: Նոյն ժամանակում էլ Հին Հայաստանում նշուել է Բարեկենդանի նոր տարուայ ստնը<sup>178</sup>: Ուրեմն, ստոյգ կարելի է ասել, որ հայոց նոր տարին սկսուել է Արեգ ամսից, երբ Արեւը մտել է «Պոյ», որտեղ գարնանային օրահաւասարի կէտն է գտնւում:

Բիայնական 3 Արեւ աստուածութիւնների մէջ գերազոյն իշխանութիւնը պատկանել է յաճախ որպէս գահակալ պատկերուող Պալդիին՝ սխրագործ հերոսին, ում յատկանիշները Համընկնում են առասպելական Յրդ հերոսի կերպարին, որը հանդերձեալ աշխարհ իջնելով, ըստ հեքիաթների տրամադրած նիւթի, փրկում է Կենաց ծառը տիեզերական քայքայիչ ուժերից եւ վճռական դերակատարութիւն ունենում ժամանակի կարգաւորման մէջ: Արդէն ասել ենք, որ Պաւարածրում Յրդ հերոս Արեւը 2 անգամ հանդիպում է Լուսին աստուածուհուն եւ փրկում նրան Վիշպայից: Առաջին հանդիպումը տեղի է ունենում «Կոյս» Համաստեղութիւնում, երբ Լուսնին հանում է Լոյս Աշխարհ, իսկ ինքը մնում Մութ Աշխարհում: Երկրորդ հանդիպումը տեղի է ունենում առաջինից անմիջապէս յետոյ՝ «Կչեռք» Համաստեղութիւնում, երբ պատահում է

Վիշապին (Վարիճ՝ Համաստեղութեանը) զոհաբերութեան տարուող աղջկան եւ հրեշին սպանելով, բացում անջուր քաղաքի ջրի ակը Առաջին հանդիպումը Լուսնի հետ կապուած է ամուսն վերջին՝ Նաւասարդ (Օգոստոս) ամսի, երկրորդը՝ աշնան առաջին՝ Հոռի (Սեպտեմբեր) ամսի հետ: Ըստ առասպելի (հեքիաթի), Արեւի ամուսնութիւնը տեղի է ունենում Վոյսձի նշանակ Լուսնի հետ՝ Լոյս Աշխարհ դուրս գալուց յետոյ: Ուրեմն, որպէսզի իմանանք, թէ Վանի թագաւորութեան ո՞ր դիցուհուն է Համապատասխանում Վոյսձը, պէտք է զուգահեռներ փնտրենք նրա եւ Հանդերձեալ աշխարհի Արեւ խալդիի գուգակցի՝ Ուարուբաինիի յատկանիշների միջեւ: Կա՞ն այդպիսիք: Պարզուած է՝ այո: Ուարուբաինին Վանի թագաւորութեան պատկերագրութեան մէջ ներկայանում է որպէս պտղաբերութեան դիցուհի, յաճախ՝ գահին նստած եւ ձեռքին ճիւղ բռնած թագուհի: Ունի երկար զգեստ եւ գլխաշոր: Նա այդ տեսքով խալդիին հանդիպելիս է պատկերուած Սերբար թեփէից յայտնաբերուած բրոնզէ 2 թիթեղների վրայ: Երկու տեսարանն էլ աստղայից երկնքի Փոնի վրայ են: Ընդ որում, աստղերն ընդգրկում են պատկերի ամբողջ ետին պլանը: Նոյնպիսի տեսք ունի (ձեռքին՝ ճիւղ, քանի որ ճիւղի Համար ձեռքի մասում յատուկ անցք է բացուած եղել) նաեւ Դարաբէյ ամրոցից պեղուած Ուարուբաինիի բրոնզէ արձանիկը<sup>179</sup>:

Հայոց մէջ Լուսինն, առահասարակ, բուսականութեան հետ է առնչուել, ինչպէս այդ մասին վկայում է Ծիրակացին. «Այս գօտին, որ կիսալուսին է համակարգի, սա է դայեակ անձրեաց եւ սնուցիչ բուրաստանաց»<sup>180</sup>: Հայ հին բժշկարանների եւ Աղթարքի մէջ էլ նշուած է. «Տեքնեմ գեետ Լուսինն ընթանայ»<sup>181</sup>, ինչն ամբողջ բուսականութեան աճն է կապում Լուսնի հետ: Բայց առաւել ուշագրաւն այն է, որ Ուարուբաինիի արտաքին նկարագրութիւնը լիովին Համընկնում է Հայ միջնադարեան աղթարական պատկերների շարքում տեղաւորուած Վոյսձ Համաստեղութեան կոյսին: Նա եւս երկար զգեստով է եւ գլխաշորով, նրատած է ծալապատիկ եւ երկու ձեռքին երկու ճիւղ է բռնել<sup>182</sup>, ինչը ցոյց է տալիս, որ Վոյսձը պտղաբերութեան հետ է կապուած, ինչպէս այդ մասին յայտնում է նաեւ Ծիրակացին. «Կոյսն... եթէ տեսանիցես գնոսա պայծառս, եւ այլանմանս, եւ սլմրոսս, գիտես թէ ողորմութիւն Աստուծոյ գթացեալ է ի վերայ երկրի... լիմի... երկրի լիութիւն եւ պտղոց առատութիւն»<sup>183</sup>:

Սևս մի հետաքրքիր տարր ցոյց է տալիս, որ Ուարուբաինին եւ նրա գուգակից Խալդին մեռնող եւ յառնող աստուածութիւններն են, իբրեւ Արեւ եւ Լուսին. բիսյնական աղբիւրներում նրանք երկուան էլ պատկերւում են հասակալին տարբեր տարիքներում. Խալդին, ինչպէս վերելում ասացինք՝ նորարուս մօրուքով երիտասարդ (պատանի) եւ հասուն այր (ծերունի), իսկ Ուարուբաինին՝ մանկամարդ եւ հասուն կին՝ Խալդիի ընկերակցութեամբ<sup>184</sup>: Ժողովրդական պատկերացումներում էլ Լուսինն, ըստ իր նուագման եւ անման փուլերի, պարբերաբար մեռնում եւ յարութիւն է առնում<sup>185</sup>:

Ուշագրաւ է, որ իրանցիները ձեռքին Բարսամ սրբազան ծառի ճիւղ բռնած են պատկերել իրենց Արդուի Սուրայ Անահիտ աստուածուհուն<sup>186</sup>, որը հայոց մէջ Մայր աստուածուհու համարում ունէր, եւ որին, ըստ Ագաթանգեղոսի, հայերը թարմ ոստեր էին նուիրաբերում<sup>187</sup>: Հայկական մի ականդութիւն «Մեծամօրը» (Մայր աստուածուհուն) ուղղակիորէն «Լուսին» է կոչում<sup>188</sup>:

Այս ամէնը մեզ հիմք է տալիս կարծելու, որ Ուարուբաինի դիցուհու աստեղատունը «Կոյս»ն է եղել, որը մարմնաւորել է Լուսին աստուածուհուն: Նրան համընկնում է հայոց Նաւասարդ ամիսը, ինչն ըստ Շիրակացու, Հայկի դուստրերից մէկի անունն էր<sup>189</sup>: Ուարուբաինի-«Կոյս»ը, որին Յրդ հերոսը հանդիպում է Երկրի ընդերքում՝ Անատակում եւ միեւնոյն ժամանակ տիեզերական տարածութեան մէջ, երկրի Որովայնն է («Ուարուբաին»ը)՝ արգանդը, պորտը, որից կախուած է «Աստծոյ ողորմութիւնը, Երկրի լիութիւնն ու պտուղների առատութիւնը»:

Բայց վանի թագաւորութեան դիցարանում եղել է մէկ այլ դիցուհի եւս, որի անունն արձանագրութիւններում աքքադական Լուսին աստծոյ անունը նշանակող D SIN գաղափարագրով է գրուել: Այդ դիցուհին Շիրարդին է (Մելարդի), որի խորհրդանշը բիսյնական աղբիւրներում կիսալուսինն է<sup>190</sup>:

Հայկական աղթարական պատկերանշանների մէջ, ինչպէս վերելում ասացինք, կիսալուսիններ կըռող աղջկայ կերպարանք կայ «Կչէռք» համաստեղութեան տեղում, որը յաջորդում է «Կոյս»ին: «Կչէռք»ը համապատասխանում է հայոց Հոռի ամսին, որը նոյնպէս Հայկի դուստրերից էր՝ ըստ Շիրակացու: Այս Լուսնի նշանակ «Կչէռք»ին է սպառնում Կեն-

դանաշրջանում նրան յաջորդող «Կարիճ» Համաստեղութիւնը, որն առասպելում Վիշապ է կոչուում եւ փակել է ջրերի ակունքները: Այն «Մհերի դռան» աստուածացանկում լաւագոյնս կարող է Համապատասխանել Կուեռա աստուածութեանը: Կուեռայի եւ Շիելարդիի («Կշէռք»-Լուանի) միջեւ կայ անյայտ գործառոյթներով Աթրիսի աստուածութիւնը, Հնարաւոր է՝ աստղային երկնքում «Կշէռք»ի եւ «Կարիճ»ի Հարեւանութեամբ գտնուող Կենտաւրոս Համաստեղութիւնը:

Բիսյնական աղբիւրներում Կուեռային ձօնուած են եղել ջրային աւազաններ, աղբիւրներ Վանայ լճի արեւելեան ափի մօտ՝ Մովսատանում (Ախիուենի քաղաքի մօտ) եւ էրինու երկրում: Լճի Հիւսիսային ափին՝ Մեծփապանքի մօտ մնացել է մի արձանասիւն, որը ձօնուած է եղել Կուեռային եւ Խալդիին միաժամանակ: Արծուաբերդի արձանագրութիւնում՝ Արճէշից Հիւսիս-արեւելք նոյնպէս յիշատակուած է «Կուեռայի աղբիւրը»<sup>191</sup>: Այստեղից հետեւում է, որ Կուեռայի պաշտամունքն առնչուել է ջրի, աղբիւրների, որի պահպանն ընդհանուր առասպելաբանութեան մէջ, աւանդաբար, Վիշապն է: Այդպէս է նաեւ Հայկական Հաւատայիքներում: Օրինակ՝ Մուշում, Այաշկերտում ջուր չլինելու ժամանակ գործածում էին «Վիշապն ի չոքի ջրի վրին» առածը<sup>192</sup>: Այդ Վիշապը պէտք է որ նաեւ բիսյնական Կուեռան եղած լինի: Յայտնի է, որ Վանի թագաւորներից Մինուան պատմում է մի արտեզեան ջրհորի (աղբիւրի) կառուցման մասին Ուրմիա լճի Հարաւ-արեւելեան ափից արեւելք գտնուող ժայռի վրայ փորագրուած արձանագրութիւնում: Այդ ժայռի մօտ այժմ էլ հոսում է մի աղբիւր, որին տեղացիներն «Իժդահաբուլակի» են ասում: Հմայակեանը կարծիք է յայտնել, որ այդ անունը «Աժդահակի աղբիւր» նշանակութիւնը կարող է ունեցած լինել<sup>193</sup>: Իսկ «Աժդահակ», ինչպէս Խորենացին է ասում, մեր լեզուով «Վիշապ» է նշանակում, քանի որ Հայոց Տիգրան արքայից սպանուած Աժդահակի սերունդներին, որոնց նա տարագրել էր Գողթն գաւառ (Մասիս սարի Հարաւային լանջի մօտ), Գողթան երգիչները «Վիշապագուններ» են կոչում<sup>194</sup>: Պատմականօրէն այստեղ է տեղադրուում նաեւ բիսյնական արձանագրութիւններից յայտնի Կուարգանի երկիրը եւ Համանուն ցեղանունը, որն, ըստ Հմայակեանի, պէտք է որ «վիշապագուն» Հայերէն բառի տարբերակը եղած լինի<sup>195</sup>:

Այսպիսով, տեսնում ենք, որ Կոնեոան Վիշապն է՝ ջրերի՝ ստորերկրայքից, հետեւարար՝ Տիեզերքից բխող աղբիւրների (քանի որ Անաստակից անմիջապէս Տիեզերքի տեսարանն է բացւում) պահպանը: Այն լիովին համապատասխանում է «Կարիճ» համաստեղութեանը, իսկ վերջինիս բաժին է ընկնում Հայոց Սահմի ամիսը: Տեսակէտներ են եղել, որ «Սահմի»ն վախի, երկիւղի իմաստն է արտայայտում եւ Հայերէնում պահպանուել է «սահմուկել» բառի մէջ<sup>196</sup>: Այդ վախն ու երկիւղն, իրօք, համընկնում է Վիշապի ահարկու ընոյթին, Վիշապ, որը փակում է ջրերի ակունքները եւ մարդկանց ծարաւի մատնում: Նրան զոհարեցողութեան տարուող «Կշէռք» համաստեղութեան կոյսը Լուսնի նշանակն է: Այդ Լուսնին են տանում Վիշապին զոհարեցիլը, բայց Արեւն իր թշնամուն սպանելով, պատում է նրան: Միեւնոյն ժամանակ կարելի է ասել, որ «Կոյս»ի Լուսինը խորհրդանշել է լուսնային օրացոյցն՝ իր ժամանակի միաւորներով, իսկ «Կշէռք»ի Լուսինը ցոյց է տուել աշնանային օրահաւասարը, երբ արեւադարձային տարին գրեթէ կէս է լինում՝ «Պոյ» համաստեղութիւնից՝ տարեսկզբից հաշուած:

Դիցարանական Արեւ աստուածը (Յրդ հերոսը) ձմեռային արեւադարձին «Ածեղջիւր» համաստեղութիւնում Լոյս Աշխարհ ելնելով, մտնում է Կենդանաշրջանի գօտու յաջորդ՝ «Ջրհոս» համաստեղութիւն, որը համապատասխանում է Հայոց Արաց (Յունուար) ամսին: Ջահուկեանը հնարաւոր է համարել Արացի եւ Վանի թագաւորութեան Արածա դիցանուան համաստեղիւթիւնը<sup>197</sup>, իսկ Նիկոլայ Յարութիւնեանի կարծիքով, Արածան կապուած է Արեւելեան Եփրատի ասուրական Արծանիտա եւ Հայկական Արածանի անունների հետ<sup>198</sup>: Հմայակեանը ենթադրել է,

որ Արածան Արածանի գետի աստուածն է եղել<sup>199</sup>: «Ջրհոս» համաստեղութիւնն, իրօք, ինչպէս վերեւում ասուեց, մարմնաւորել է Տիգրիս եւ Եփրատ գետերը, որոնցից վերջինը շումէրական Գիլգամէշ է պոսում 7 կում անելով, խմում-ցամաքեցնում է «երկնային ցուլը» («Յուլ» համաստեղութիւնը):

Նիկոլայ Յարութիւնեանը պարզել է, որ Արածա դիցանունից մի ամբողջ շարք աշխարհագրական անուններ են կազմուած եղել Վանի թագաւորութեան արձանագրութիւններից յայտնի Այաղու, Սանգիրուտու երկրամասերում, ինչպէս նաեւ Տուարածի՝ պատմական Հայաստանի Տուարածատափ (Տաւարածի՝ հովուի դաշտ) գաւառի անուան մէջ: Պաշտպանելով լեզուարան Գրիգոր Դափանցեանի տեսակէտն այն մա-

սին, որ Արածա դիցանուան մէջ առկայ է հայերէն «արածել» բայը<sup>300</sup>, նա եղբակացրել է, որ խօսքն անասնապահութեան հովանաւոր աստծոյ մասին պէտք է եղած լինի: «Տուարածատափ» անունն էլ փաստում է այս տարածքում անասնապահութեան զարգացած լինելու մասին: Այդ է վկայում նաեւ Արգիշտի Ա-ի խորխոռեան տարեգրութիւնը, ուր նա պատմում է, թէ ինչ ահռելի քանակութեամբ խոշոր եւ մանր եղջերաւոր անասուններ է յափշտակել «Տուարածի» դաշտից: Չարգացած անասնապահական շրջանների մէջ էին մտնում Արածանիի վերին գետաբերանի միւս՝ Այադու եւ Սանգիրուտու տեղանքները: Սարգոն Բ-ն արձանագրել է Սանգիրուտուի մարզի Ուլխու քաղաքի մերձակայ դաշտերի խոտի փարթամ աճի մասին, որը չէր դադարում ոչ ամռանը, ոչ էլ ձմռանը<sup>301</sup>:

Մեծ հաւանականութեամբ պէտք է ենթադրել, որ Արածանի գետի հովանաւոր Արածա աստուածն ինքը հովիւ է պատկերացուել, ինչը համընկնում է նաեւ միհրական առասպելի հեքիաթից աւանդուած նիւթին, ըստ որի, Յրդ հերոսը Լոյս Աշխարհ եյնելով («Աթեղջիւր» համաստեղութիւնում) հիւրընկալուում է հովուի մօտ: Այդ հովիւը «Աթեղջիւր» ձին յաջորդող «Ջրհոս» համաստեղութեան Արածա աստուածն է: Երբորդ հերոսը հովուի ոչխարներից մէկի փորի կաշին գլխին քաշելով, քողարկում, քաշալ է ձեւանում՝ դրանով ցոյց տալով, թէ դեռ մեռած է, իբրեւ մազազրկուած-ճառագայթազրկուած Արեգակ, քանի որ ընդհանուր առասպելաբանութեան մէջ մազաթափուելը հաւասարաբոժէք է դիտուում մահուանը<sup>302</sup>, իսկ Արեւի ճառագայթները նրա մազերն են: Աստուածաշնչում այդպէս Սամսոնն է ուժազրկուում այն ժամանակ, երբ Դալիան կտրում է նրա մազերը<sup>303</sup>, իսկ Սամսոնի անունն ուսումնասիրողները ծագած են համարում հրէական Šemeš-«արեւ» բառից<sup>304</sup>: Ուրարտական աղբիւրներում վարսերի առատութեամբ էր պատկերուում Երեւանի-Արեգակը<sup>305</sup>, որի համաստեղութիւնը «Պոյն» է, իսկ ամիսն՝ Արեգը:

Իրականում այդպէս է նաեւ ընդլայնում մէջ. մինչեւ գարնանամուտ՝ «Պոյն» համաստեղութիւն հասնելը, Արեւը ձմռանը մի տեսակ եւ կայ, եւ չկայ դրութեան մէջ է: Ձմռանը նա թէեւ շողարձակում է, բայց չունի դեռ իր իրական զօրութիւնը՝ կենարար, պտղաբերիչ ուժն ու ջերմութիւնը: Նա մեռած ոչխարին («Պոյնին») է մարմնաւորում, ինչպէս Յրդ

հերոս Արեւը, որ ոչխարի փորի կաշին է գլխին կրում: Հենց հասնի «Պոյ» համաստեղութեանը՝ կը քողագերծուի, ինչպէս հեքիաթներում է դէն նետում ոչխարի կաշին: Նրան արդէն սկսում են ճանաչել ոչ իբրեւ մագաղակի, այլ իբրեւ մեծագոյն հերոսի, որը հանդերձեալ աշխարհում սխրանքներ գործելով, մարդկանց է վերադարձրել կեանքն ու տիեզերական կարգուկանոնը: Հետաքրքիր է, որ յունական դիցարանութեան մէջ Ամոնում ոչխարի գեղմ է իր վրայ կրում Զեւսը, որը նոյն այդ բնականաւորում պաշտում էր որպէս հովիւ արջայ: Այդ տեսքով նա դիմաւորելու է դուրս գալիս որդուն՝ Հերակլէսին, որը նոր էր կատարել իր 11րդ սխրանքը<sup>200</sup>, այսինքն՝ Արեւուղում դուրս էր եկել Կենդանաշրջանի 11րդ՝ «Ջրհոս» համաստեղութիւնից եւ մտել «Պոյ»ին նախորդող «Զկներ»:

Արածան «Մհերի դռան» արձանագրութեան մէջ յիշատակուած 27րդ աստուածութիւնն է, որին անմիջապէս յաջորդում է 28րդ Զիուկուհի աստուածը: Զահուկեանը նրա անունը համադրել է բնիկ հայերէն «ձուկ(ու)ն» հիմքային ձեւին<sup>201</sup>, ինչն ապացուցւում է նաեւ Կենդանաշրջանի վերջին՝ 12րդ՝ «Զկներ» համաստեղութեան հին հայկական «Զուկն» անունանաձեւով: «Զուկն»ը անմիջապէս յաջորդում է «Ջրհոս»ին, ինչպէս Զիուկուհին՝ Արածային: Փաստօրէն, ամէն ինչ, ինչպէս ասում են, համընկնում է միլիմետրերի ճշտութեամբ՝ հեքիաթի նիւթն՝ աստղային երկնքի պատկերին, աստղային երկինքն՝ առասպելին, առասպելի նիւթը՝ վանի թագաւորութեան աստուածացանկին, աստուածացանկը՝ տոմարին՝ ըստ հերթականութեան: Յամենայն դէպս, այդ գուգադրութիւններն ակնբախ են գոնէ Կենդանաշրջանի «Այծեղջիւր» համաստեղութիւնից մինչեւ «Յուլն» ընկած հատուածը՝ «Այծեղջիւր»-Քաղոց-Քաղդի, «Ջրհոս»-Արածանի-Արածա, «Զուկն»-Զիուկուհի-Մահեկի, «Պոյ»-Շիւրի (Արեւ)-Արեգ: Այս հանգամանքն, ինչ խօսք, հայոց տոմարի՝ խորպէս տեղական երեւոյթ լինելու, ծագումնաբանօրէն աստղային երկնքի բաժանման սկզբնական ժամանակներին աղբրուելու ցայտուն վկայութիւնն է:

Միանգամայն հնարաւոր է, որ Զուկն (Զիուկուհի) աստուածը կիսով չափ ձկնային եւ կիսով չափ մարդկային կերպարանքով է պատկերացուել, ինչպէս միջագետքեան Դագոնը, որի անունն աքքադերէնում «ձուկ» է նշանակել<sup>202</sup> եւ համահունչ է «Զիուկուհի-Զուկն»ին: Դագոնն ասորական Դերկեսօ դիցուհու ամուսինն էր<sup>203</sup>: Դերկեսօն Միջագետ-

քում եւ Քանանում յայտնի է եղել Աթարգատիս, Աստոր, Աստորէթ, իսկ Յունաստանում՝ Աստարտէ անուններով<sup>210</sup>, որ համապատասխանում է Հայոց Աստղիկ դիցուհուն: Աստղիկն, աւանդութեան համաձայն, ամէն գիշեր լողանում էր Արածանու ջրերի մէջ, իսկ պատանիները նրա մերկութիւնը տեսնելու համար կրակներ էին վառում Տարօնի Արտերտ գիւղի մօտ գտնուող Դաղոնաց լեռների վրայ<sup>211</sup>: Դագոնի անունով սար է կոչուել նաեւ Մուշի մօտ<sup>212</sup>, այսինքն՝ դարձեալ Արածանիի հովտում:

Դագոնը փղշտացիների (պաղեստինցիների) մէջ յայտնի է եղել Դագան, իսկ բաբելոնացիների մէջ՝ Օղակոն անուններով: Փրլոն Բիւրլոսացու հաղորդմամբ, նա վերջիններիս եւ փիւնիկեցիներին հողագործութիւն, մասնաւորապէս՝ հացագործութիւն է սովորեցրել<sup>213</sup>: Դեակոնովը ենթադրել է, որ Դագոնը հասկի աստուած է եղել<sup>214</sup>: Բերոսոսը վկայել է նրա շումէրաաքադական յունականացուած Օաննէս անուանաձեւը՝ որպէս կէս-ձուկ նախամարդ, որը ջրից դուրս գալով, գրութիւն, գիտութիւն, զանազան արհեստներ եւ երկրագործութիւն է սովորեցրել: Նոյնպիսի մշակութակերտ գործունէութիւն է վերագրուել նաեւ Օղակոնին, որին աքքադացիները Միջին Յփրատի հովտում բնակուողների հովանաւոր աստուածն են համարել<sup>215</sup>:

Ամէն ինչից պարզ երեւում է, որ Դագոն-Ջիուկունի-Ձուկը Հայկական լեռնաշխարհից սկիզբ առնող Յփրատ գետի շրջակայ տարածքները բնակեցրած հնագոյն ժողովուրդների գիտակցութեան մէջ ամրացած է եղել իրրեւ դպրութեան (իմաստութեան), արհեստագործութեան եւ երկրագործութեան աստուած, որը ճակատագրական դերակատարութիւն է ունեցել մարդկութեան զարգացման ճանապարհին: Թերեւս, նրա անունից պէտք է սերած համարել նաեւ ուսուցիչն Diakon բառը, որ ուսուսական ուղղափառ եկեղեցու աստիճանաւորի կոչում է, իսկ հնում հաւանական է, որ քրմութեանն է վերագրուած եղել:

Արեւուդու վրայ հանդիպում է արդեօք, առասպելական Յրդ հերոսը Ջիուկունի-Ձուկնին: Կարելի է ենթադրել՝ այդ: «Անմահական Խնձորը» հեքիաթում (եւ այլուր) նա աշակերտ է մտնում արհեստագործի (ուկերչի, դերձակի եւն.) մօտ՝ Հովուից (Արածա աստծուց) բաժանուելուց յետոյ: Ճիշտ է, այս հեքիաթում այդ արհեստագործի ձկնային կերպարանքի մասին խօսք չկայ, սակայն «Ոսկէ Ձուկը» վերնագրով մէկ այլ

հեքիաթում<sup>215</sup> նա միանգամայն Ձուկ է: Այս հեքիաթում էլ պատմում է կուրացած Թագաւոր չոր մասին, որի աչքերը կարող է բուժել միմիայն Ոսկէ Ձկան արիւնը<sup>217</sup>: Ձկնորսները երկար փնտրելուց յետոյ յ վերջոյ բռնում են նրան եւ ուզում են մորթել: Թագաւորի որդին չի թողնում եւ ազատ է արձակում Ձկանը: Այդ արարքի համար հայրը նրան վտարում է իր Թագաւորութիւնից: Տղային ճանապարհին ընկերանում է մի անծանօթ եւ օտար աշխարհում օգնում, որ տիրանայ Հարստութեան ու «Հուրի-մալաք (հրեղէն հրեշտակ) աղջկայ» սիրուն: Վերադարձին բացայտում է, որ ինքը նոյն այն Ոսկէ Ձուկն է, որի կեանքը փրկեց Թագաւորի տղան: Ապա տալիս է իր թեփուկներից մէկը, որով էլ հերոսը բուժում է չոր կուրացած աչքերը: Հայրը գահը գիջում է որդուն եւ տօնում նրա Հարսանիքը «Հուրի-մալաք աղջկայ» հետ:

Այստեղ, ինչպէս տեսնում ենք, կոյր Թագաւորի աչքերի բալասան ոսկէ խնձորին փոխարինելու է եկել Ոսկէ Ձկան թեփուկը: Ուրեմն, ստացւում է, որ «Ձուկն» համաստեղութիւնն Արեւուղու այն կէտն է, ուր պէտք է հանդիպեն ծեր, կուրացած ժամանակի աստուածն ու նրա որդի Միհր-Արեւը, որ չոր աչքերի դեղն է բերում:

«Ձուկն» համաստեղութեանը բաժին է ընկնում հայոց Մահեկի ամիրսը (Փետրուար), որի 13ի լոյս 14ի գիշերը ժողովրդի մէջ տօնում է հրնում Միհրին ձօնուած Տեառնընդառաջի տօնը՝ խարոկների շքահանդէսով, որոնք աւելի ուշ վառւում էին նաեւ եկեղեցիների բակերում: Այս տօնը, որ հիմքով խորապէս հեթանոսական է, եւ ոչ մի կապ չունի քրիստոնէական աւանդոյթների հետ, այնքան արմատացած է եղել ժողովրդի մէջ, որ եկեղեցին փորձել է գոնէ ինչ-որ կերպ քրիստոնէական բացատրութիւններ գտնել դրա բովանդակութեան համար: Ըստ եկեղեցու պաշտօնական մեկնաբանութեան, տօնի «Տեառնընդառաջ» անունը կապուած է Քրիստոսի կենսագրութեան հետ. Քրիստոսին, ծննդեան 40րդ օրը, ծնողները տանում են տաճար, որտեղ նրան ընդառաջ է գալիս խոր ծերութեան հասած եւ Տիրոջ գալստեանը սպասող Սիմէոն ծերունին, որտեղից էլ տօնը ստանում է իր անունը՝ Տիրոջն ընդառաջ<sup>218</sup>:

Սկզբնապէս, իհարկէ, քրիստոնէական այդ աւանդութեան ծերունին հին ժամանակի աստուածն է եղել, իսկ Տէրը՝ Միհր-Արեւը: Հենց Փետրուար ամսի հայկական «Մահեկի» անուան մէջ էլ Միհրի անունն է ընկած: Այսպիսի կարծիք է յայտնել նաեւ Ալիշանը, որի դիտողութեամբ, հայոց տոմարը Արեւի Արեգ ամսով սկսուելու դէպքում պէտք է վերջացած լինէր իր մէջ իրանական «Մահ»-Լուսին արմատը ներառող Մահե-

կիրով<sup>219</sup> : Միհրն իրանական (գենդական) աղբիւրներում «Մահ» էր անուանուում, իրրեւ Լուսին եւ համարժէք դիտուում Արեւին<sup>220</sup> : Իսկ Տեառնընդառաջի տօնը գրեթէ նոյնական ծէսերով տօնուում է նաեւ պարսից մէջ՝ «Չհարշամբէ Սուրի» անունով<sup>221</sup> : Հետաքրքիր է, որ ըստ Շիրակացու, Մահեկի ամսին համարժէք «Ձկներ» համաստեղութիւնը պարսիկներին յայտնի է եղել «Մահիկ» անունով<sup>222</sup> :

Տեառնընդառաջը միհրական Արեւի վերադարձի տօնն էր, երբ սիրելի աստուածը վերադառնում էր գիշերով՝ թերեւս, Լուսնի կերպարանքով ծպտուած<sup>223</sup> : Վերադառնում էր, որպէս տիեզերական օրէնքը՝ ժամանակի կարգաւորուածութիւնը վերահաստատած, սխրագործ հերոս : Բերում էր բախտի եւ ժամանակի ծեր, կուրացած աստծոյ աչքերի բալասանը եւ ազդարարում մօտալուտ զարնանամուտը : Գարնանը բնութիւնն Արեւի նման յարուսթիւն է առնում : Կեանքը վերստին մտնում է իր բնականոն հունի մէջ, եւ մարդիկ իրենց բախտաւորուած են զգում :

Յաւօք, պատմութիւնը չի պահպանել աստղային այս հիանալի առասպելը հիւսած քրմերի անունները, սակայն աթմ գոնէ կարող ենք ասել, որ դա արտայայտել են ոչ ուշ, քան մեզանից շուրջ 4000 տարի առաջուայ օրացուցային իրողութիւնները, երբ արեւադարձային տարին սկսուած է համարուել զարնանային օրահաւասարի կէտից, իսկ այդ կէտը գտնուել է «Յոյ» համաստեղութիւնում : Շատ բան է փոխուել պատմութեան մէջ այս ընթացքում, եւ շատ յիշատակներ են ջնջուել մարդկային յիշողութիւնից, սակայն աստղային երկինքը մնացել է անփոփոխ : Եւ քանի դեռ վառւում են երկնքի Հիւսիսային եւ Հարաւային կիսագնդերի, ինչպէս նաեւ Կենդանաշրջանի համաստեղութիւններն իրենց պայծառ կամ թոյլ աստղերով, նրանք մշտապէս յիշեցնել կը տան այն հեռաւոր ժամանակները, երբ Արեւն աստուած էր, իսկ մարդկային բանաստեղծական միտքը հեքիաթ էր հիւսում Արեւուղու մասին՝ իր կեանքն էլ համարելով այդ հեքիաթի բաղկացուցիչ մասը :

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 E. M. Meletinskii, "Proiskhojdenie Skazok O Mladshem Brate I Ikh Rol V Formirovanii

\* Skazochnogo Epos," *Geroi Volshebnoi Skazki* (Կրտսեր Եղբոր Հեքիաթների Մազումը Եւ Նրանց Դերը Հեքիաթային էպոսի - Վիպերգութեան - Ձեւաւորման Մէջ, Կախարդական Հեքիաթների Հերոսը), Մոսկուա, 1958, էջ 64-160:

- 2 Գաղիկ Մարտոսեան, «Երեք Նոյսերի կամ Արեւնիի Դիցարանութիւնը Հայ Եւ Օտար Բանասեր Մշակութում», Հայագիտական Հարգիտական Հանդէս, հտ. ԻԲ., Բէյրութ, 2002, էջ 69-79:
- 3 Ներսէս Ենորաձի, *Բանք Զարհաւ*, Վենետիկ-Ս. Ղազար, 1830, էջ 564:
- 4 E. Tseren, *Lunnii Bog (Ղուկնի Աստուծ)*, Մոսկուա, 1976, էջ 24-26:
- 5 Հայ ժողովրդական Հեքիաթներ, հտ. I, խմբ. Յովսէփ Օրբելի, Երեւան, Հայկ. ՍՍՌ ԳԱ Հրատարակչութիւն, 1959, էջ 27:
- 6 Նոյն, էջ 49:
- 7 Հայ ժողովրդական Հեքիաթներ, հտ. II, խմբ. Կ. Ա. Մելիք-Օհանջանեան, Երեւան, Հայկ. ՍՍՌ ԳԱ Հրատարակչութիւն, 1959, էջ 23:
- 8 Հայ ժողովրդական Հեքիաթներ, հտ. V, խմբ. Ս. Գ. Աբրահամեան, Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1966, էջ 15:
- 9 Նոյն, էջ 415:
- 10 Նոյն, էջ 28:
- 11 Նոյն, էջ 83:
- 12 Հայ ժողովրդական Հեքիաթներ, հտ. VII, խմբ. Ս. Գ. Աբրահամեան, Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1979, էջ 585:
- 13 Նոյն, էջ 11:
- 14 Հայ ժողովրդական Հեքիաթներ, հտ. XII, խմբ. Ս. Ա. Գէորգեան, Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1984, էջ 82:
- 15 A. Aarne, S. Thompson, *The Types of the Folktale*, Helsinki, 1961, էջ 90-93, 195-197:
- 16 *Persidskie Narodnie Skazki*, sostavitel M. N. Osmanov, (Պարսկական ժողովրդական Հեքիաթներ, կազմ. Մ. Ն. Օսմանով), Մոսկուա, 1987, էջ 56:
- 17 *Mifi Narodov Mira*, T.1 (*Աշխարհի ժողովուրդների Առասպելներ*), Մոսկուա, 1991, էջ 372, 599:
- 18 Կարապետ Մելիք-Օհանջանեան, *Միջրա-Միջրը «Մասնայ Մուրի» Մէջ*, Երեւան, ՀԽՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1946, էջ 289-305:
- 19 Ա. Աբրահամեան, *Անանիա Շիրակացու Մատենագրութիւնը («Յազազս Կենդանատեսակաց»)*, Երեւան, 1944, էջ 324:
- 20 *Persidskie Narodnie*, էջ 52, 109:

- 21 M. Drezden, "Mifologia Drevnogo Irana," *Mifologii Drevnogo Mira* (Հին Իրանի Դիցարանությունը, Հին Աշխարհի Դիցարանություն), Մոսկուա, 1977, էջ 344-45.
- 22 *Mifi Narodov*, T. 2, Մոսկուա, 1992, էջ 526.
- 23 Հերոդոտոս, *Պատմություն ինը Գրքից*, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1986, էջ 223-224.
- 24 Նոյն, էջ 224-225.
- 25 D. S. Raevski, *Ocherki Ideologii Skifo-Sakskikh Plemen* (Ուրուազների Սկիթա-սակա-կան Ցեղերի Քաղաքարարություն), Մոսկուա, 1977, էջ 115-118.
- 26 *Մեյից-Օհանջանեան*, էջ 274-275, 269-270; *Mifi Narodov*, T. 2, էջ 157.
- 27 B. Van-Der-Varden, *Probydayushayasia Nauka II. Rojdenie Astronomii* (Արթնացող Գիտություն II. Աստղագիտության Մեծեղը), Մոսկուա, 1991, էջ 163.
- 28 Ե. Տէր-Մինասեան, *Մրջնագարեան Ազանգների Մազման Եւ Զարգացման Պատմությունից*, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1986, էջ 16.
- 29 Հ. Ղեւոնդ Ալիշան, *Հին Հաւաքը Կամ Հեթանոսական Կրօնը Հայոց*, Վենետիկ-Ս. Ղազար, 1895, էջ 92-93.
- 30 R. Greivs, *Mifi Drevnei Gretsii* (Հին Յունաստանի Առասպելները), Մոսկուա, 1992, էջ 150-151.
- 31 B. Van-Der-Varden, էջ 18-19, 124-125.
- 32 Բենիկ Թումանեան, *Հայ Աստղագիտության Պատմություն*, Երևան, «Միտք» հրատարակչություն, 1964, էջ 232-235.
- 33 Նոյն, էջ 336; նոյնի՝ *Լուսին*, Երևան, Երևանի Համալսարանի հրատարակչություն, 1979, էջ 20.
- 34 Առաջին փուլը կոչւում է «Ուղեկցություն» (երբ Լուսինն ու Արեգակը դտնւում են գրեթէ նոյն ուղղութեան վրայ եւ միեւնոյն համաստեղությունում ընթանում են՝ «միասին»)։ Երկրորդ փուլը «Մենլուսինն» է (Լուսնի փուլը 1-2 օրական է եւ Արեգակից հեռացած է 1 մասով, այսինքն՝ աղեղնային 1 աստիճանով)։ Երրորդ փուլը «Մազողությունն» է (Լուսնի փուլը 3-4 օրական է եւ Արեգակից հեռացած է 15 աստիճանով)։ Չորրորդ փուլը «Մահկառեան» է (Լուսինը երևում է նեղ մահիկի տեսքով, 5-6 օրական է եւ Արեգակից հեռացած է 60 աստիճանով)։ Հինգերորդ փուլը «Երկակտորն» է (Լուսնի եւ Արեգակի անկիւնային հեռաւորութիւնը 90 աստիճան է)։ Տարբերել են «Երկակտուր առաջին» եւ «Երկակտուր երկրորդ» փուլերը, որոնք ժամանակակից անունաւորներով՝ Լուսնի առաջին եւ վերջին քառորդներն են, երբ Լուսինը կիսուած է։ «Երկակտուր առաջին» դէպքում Լուսինը 7-8 օրական է։ Վեցերորդ փուլը «Երկակորներն» է (Լուսինը երկու կողմից էլ կոր եզրագիծ ունի)։ Արեգակի նկատմամբ նրա ունեցած անկիւնային հեռաւորութիւնը 120 աստիճան է կազմում)։ Տարբ-

րիւ են «Երկակորնիի առաջին» եւ «Երկակորնիի երկրորդ» փուլերը Առաջին դէպքում փուլը լինում է 9-10 օրական: Եթե երրորդ փուլը «Լիալուսին»ն է (այս անուանումը սակայն այն իմաստը չի արտայայտում, ինչն այսօր է հասկացում: Ժամանակակից լմբոնումներով՝ Լիալուսինը լինում է 14-15 օրական, երբ Լուսինն ու Արեգակը դանում են Երկրի տրամագծօրէն հակադիր կողմերում, այսինքն՝ նրանց անկիւնային հեռավորութիւնը 180 աստիճան է: Այնինչ միջին դարերում «Լիալուսին» փուլի դէպքում ենթադրում էր, որ Լուսինը 11-12 օրական է եւ Արեգակից հեռացած է 150 աստիճանով): Վերջին՝ ութերորդ փուլը «Բովանդակալուսին»ն է (Լուսինը 14-15 օրական է եւ Արեգակից հեռացած է 180 աստիճանով): «Բովանդակալուսին»ը համապատասխանում է ժամանակակից «Լիալուսին» եզրին: Այնուհետեւ, ըստ ձեռագրի, գալիս է դարձեալ «Ուղեկցութիւնը», սակայն «զիջումը» (մաշուելը) հաշւում է «Երկակորնիի երկրորդ» փուլից: Բոլոր այս հաշուարկները կազմուած են եղել սինողական կէս ամսուայ՝ 14 (15) օրուայ համար, սակայն Լուսնի փուլերի մի կէսով դժուար չէ վերականգնել միւս կէսը եւս, այսինքն՝ Լիալուսնից մինչեւ Վերջալուսին (տես նոյն՝ Լուսին, էջ 10-14):

35 Նոյն:

36 Ալիշան, էջ 144:

37 *Gruzinskie Narodnie Skazki*, sostavljen i pereveden N. I. Dolidze (Հրացական Ժողովրդական Հեքիաթներ, կազմ. եւ թարգմ. Ն. Ի. Դոլիձէ), Թբիլիսի, 1966, էջ 15:

38 Հայ Ժողովրդական Հեքիաթներ, հտ. XII, էջ 280:

39 Թումանեան, Հայ Աստղագիտութեան Պատմութիւն, էջ 336:

40 *Mifi Narodov*, T. 2, էջ 143; Հրաչեայ Աճառեան, Հայերէն Արժաստական Բառարան, հտ. Ա., Երեւան, Երեւանի Համալսարանի հրատարակչութիւն, 1971, էջ 157-158:

41 Սարգիս Յարութիւնեան, Հայ Ժողովրդական Հանելուկներ, Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատարակչութիւն, 1966, էջ 16:

42 Յերէնը հեքիաթների ոսկէ խնձորները ճիւղերին Կենաց ծառի մասին պատկերացումը ծագած է Համարել արեւամուտին Տիեզերքի խորքերից երկնքով մէկ ձգող վիթխարի Կաթնձիւրի տեսարանից: Կաթնձիւր-Սրկնային ծառն էլ երկրային ծառերի նման, ըստ տարուայ եղանակների, ունենում է «ծաղկման», «հասունացման» եւ «թառամելու» ժամանակահատուածներ (Tseren, էջ 118-120):

43 Van-Der-Varden, էջ 194-196, 203:

44 *Յզերկայ Վարդապետի Կողբացույ Եղծ Աղանդոց*, Թիֆլիս, տպարան Աղանեանի, 1914, էջ 79:

45 Tseren, էջ 329:

46 Drezden, էջ 344-45, 358; V. G. Lukonin, *Kultura Sasanidkogo Irana (Մասանեան Իրանի Մշակույթը)*, Մոսկուա, 1969, էջ 80:

47 Van-Der-Varden, էջ 203-06.

48 Գարեգին Սրուանձտեանց, *Երկեր*, Հտ. I, խմբ. Ս. Բ. Յարութիւնեան, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1978, էջ 437:

49 Բենիկ Թումանեան, *Հ. Հ. Մնացականեան, Բրտեզէ Դարի Գօտի-Օրացոյց*, Երևան, «Միտք» Հրատարակչութիւն, 1965, էջ 32-33, 38:

50 Սրուանձտեանց, էջ 437:

51 *Հայ ժողովրդական Հեքիաթներ*, Հտ., XII, էջ 82, 112, 164:

52 *Persidskie Skazki*, perevod R. Alieva, A. Bartelsa, N. Osmanova (*Պարսկական Հեքիաթներ*, Թարգմանութիւնը Բ. Ալիևի, Ա. Բարտելսի, Ն. Օսմանովի), Մոսկուա, 1958, էջ 15: *Միւր-Միւր ծածկազրուցութիւնը մատնանշում է նաև ամերիկահայ բանագէտ, փիլիսոփայութեան դոկտոր Մարգիտ-Անահիտ Հազարապետեանը՝ Հայոց «Մովսէս Միրզա» ժողովրդական վիպերգի հերոսի անուան մէջ: Նա այդ եզրակացութեանը յանդել է ժողովրդական ստուգաբանութեան կամ, ինչպէս ինքն է անուանում՝ «շփոթասացութեան» օրինաչափութիւնները քննութեան առնելիս: Ուշադրաւ է, որ Հայագէտն իր դոկտորական ատենախօսութեան մէջ՝ նոյն այդ եղանակով երևան է հանում Հայ բանահիւսութեան մէկ այլ գլուխ-գործոցի՝ *Սասնայ Մուկը* նպոսի հերոսների ամենաուղղակի կապն արեւային առասպելաբանութեան հետ եւ Հայոց դիւցազներգութիւնն ուսումնասիրողների Հայեացքն ուղղորդում աստղային երկինք (Functional transformations in traditional oral narrative: An interdisciplinary study and personal interpretation of the Armenian epic David of Sassoun by Margit Anahid Hazarabedian. A dissertation submitted in partial satisfaction of the requirements for the degree of Doctor of Philosophy. Fall 1998, pp. 381-389):*

53 S. N. Kramer, *Istoria Nachinaetsia V Shumere* (*Պատմութիւնը Սիւսում է Շումէրում*), Մոսկուա, 1991, էջ 161:

54 Van-Der-Varden, էջ 194:

55 Greivs, էջ 45:

56 Van-Der-Varden, էջ 196:

57 *Mifi Narodov*, T. 2, էջ 194:

58 *Ագաթանգեղոյ Պատմութիւն Հայոց*, Թիֆլիս, տպարան Աղանեանի, 1914, էջ 395:

59 Ս. Բ. Յարութիւնեան, *Հայ Առասպելաբանութիւն*, Բէյրութ, 2000, Համազգայինի «Էլահէ Սէթեան» տպարան, էջ 391-409:

60 Van-Der-Varden, էջ 196:

61 Յարութիւնեան, *Հայ Առասպելաբանութիւն*, էջ 10-11, 17:

62 Ալիւան, էջ 92-93:

- 63 Թուամանեան, Հայ Աստղագիտութեան Պատմութիւն, էջ 46-47, 68-71:
- 64 Greivs, էջ 338:
- 65 Tseren, էջ 118-120; A. Donini, *U Istokov Khristianstva (Քրիստոնէութեան Ակունքների Մաս)*, Մոսկուա, 1989, էջ 63-64:
- 66 Թուամանեան, Հայ Աստղագիտութեան Պատմութիւն, էջ 75-78:
- 67 Անանիա Երրակացուն յայտնի են եղել «Երկուորեակ», «Կոյս», «Կշէոք», «Կարիճ», «Ջրոս» եւ «Զկներ» համաստեղութիւնների հին Հայկական Եկաւոր, Կուսանակ, Կշիւ, Կոր, Ջրահեղ, Զուկն անունները (Արրահամեան, Անանիա Երրակացու Մատենագրութիւնը, էջ 328-329):
- 68 A. Klimishin, *Kalendar i Khronologia (Տոմար Եւ Ժամանակագրութիւն)*, Մոսկուա, 1985, էջ 25-26: Կարծիք կայ, որ «Խոր» համաստեղութիւնը Կենդանաշրջանի առաջնորդ նշան է դարձել յոյների միջնորդութեամբ, որոնք բարելական «Վարձու աշխատող» նշանն, առանց համաստեղութիւնների հերթականութիւնը խախտելու, թարգմանել են «Ոյիար» (Ari, Aries) եւ դարձնալին օրահաւասարը սկսուած համարել հենց այդ նշանից: Մինչդեռ բարելացիները դարձնալին օրահաւասարը սկսուած էին համարում ոչ թէ «Խոր»ից, այլ Կենդանաշրջանի նկատմամբ անշարժ աստղերի ունեցած յարերական դիրքից (Van-Der-Varden, էջ 18, 301-302):
- 69 Հ. Ղեւոնդ Ալիշան, *Թւիյիք Հայրենեաց Հայոց*, հտ. I, Վենետիկ-Ս. Ղազար, 1869, էջ 88:
- 70 Հայկ Բաղայեան, Հայոց Տոմարի Պատմութիւն, Երեւան, Հայկ-ՍՍՀ ԳԱ հրատարակչութիւն, 1976, էջ 12-13:
- 71 Թուամանեան, Հայ Աստղագիտութեան Պատմութիւն, էջ 133-134:
- 72 Արրահամեան, Անանիա Երրակացու Մատենագրութիւնը, էջ 315-317:
- 73 Գրիգոր Բրուտեան, *Օրացոյց Հայոց*, Մալր աթոռ ս. էջմիածին, Մալր աթոռ ս. էջմիածնի տպարան, 1997, էջ 289:
- 74 Ալիշան, Հին Հաւատք, էջ 143-144:
- 75 Ասիա Օդարաչեան, «Ամանորը Հայ Ժողովրդական Տօնացոյցում», Հայ Ազգագրութիւն Եւ Բանահիւսութիւն, հտ. IX, Երեւան, Հայկ-ՍՍՀ ԳԱ հրատարակչութիւն, 1978, էջ 12:
- 76 Թուամանեան, Հայ Աստղագիտութեան Պատմութիւն, էջ 200-201:
- 77 Klimishin, էջ 127-128:
- 78 Ալիշան, Հին Հաւատք, էջ 126:

- 79 Ս. Ներսիսեան, *Աստղայից Երկինք*, Երևան, 2000, «Դար 2000» հրատարակչութիւն, էջ 39-41.
- 80 Van-Der-Varden, էջ 29, 31.
- 81 Ա. Դաւթեան, «Աստղային Առասպելների Համակարգ «Գիլգամէշ» Էպոսում», *Նորք*, ամսագիր, N 2, Երևան, 2002, էջ 171-172.
- 82 Թումանեան, *Հայ Աստղագիտութեան Փատմութիւն*, էջ 212.
- 83 Համաստեղութիւնների գրչանկար վերարտադրութիւնները՝ այնպիսիք, որպիսիք այժմ հանդիպում են աստղագիտական, աստղարաշխական գրականութեան մէջ կամ ալյուր, նկարագրուած են Պլատոնի՝ մ.թ.ա. 7- դարում ապրած աշակերտ Եւդոքսի Հաբլիի եւ *Երեւոյթներ* գրքերի տուեալների հիման վրայ, որոնք կորած են եւ մեզ են հասել ալեքսանդրիացի բանաստեղծ Արատոս Բ-ի ձեռքով վերաշարադրուած «Երեւոյթներ» պոէմից: Համաստեղութիւններն այստեղ նկարագրուած են բացառապէս յունական առասպելների հիման վրայ, բայց հեղինակը մշտապէս խօսում է դրանց խոր եւ անյայտ հնութեան մասին (տե՛ս՝ Թումանեան-Մնացականեան, էջ 17):
- 84 Greivs, էջ 76, 158, 352.
- 85 Նոյն, էջ 349-354
- 86 Tsceren, էջ 188.
- 87 Օրինակ՝ Ապարանցի Մովրայրի պատումը (*Սասնայ Մուր. Ժողովրդական Վէպ*, աշխ. Սարգիս Յարութիւնեան, Երևան, «Սովետական Գրող» հրատարակչութիւն, 1977, էջ 59-60):
- 88 Յուլի եւ Կենաց ծառի անմիջական կապն առաւել վառ արտայայտուած է վանի Թագաւորութեան մշակոյթում: Արծկէից յայտնաբերուած յայտնի բարձրաքանդակում պատկերուած է սրբազան Ծառի նշանակն՝ իր երկու ճիւղերով, որոնցից մէկն աճում է ցուլի գլխից, միւսը՝ զաւակից: (Յուլն այստեղ միաժամանակ կարող է խորհրդանշել բնութեան 4 տարրերից՝ Հողը) Այս Ծառն՝ իր տերեւներով զուգադրուած է նաեւ նիբոլակի ու նիզակի ծայրակալի հետ: Տե՛ս՝ P. Kalmeyer, "Simvol Khaldi," *Drevnii Vostok* (Սարգի Խորհրդանշելը, *Հին Արեւելք*), No. 4, Երևան, 1983, էջ 179-189, գծ. 5:
- 89 «Կոյս» Համաստեղութիւնը յոյները նոյնացրել են Երկրի արգաւանդութեան դիցուհի Դեմետրային (A. Bonov, *Mifi I Legendi O Sizozvezdiakh* (Առասպելներ Եւ Աւանգագրոյթներ Համաստեղութիւնների Մասին), Ալմա-Աթա, 1985, էջ 98-99), սակայն սկզբնապէս «Կոյս»ն, ամենայն հաւանականութեամբ, նրա դուստրն է եղել՝ Պերսեփոնէն, քանի որ այդ մակդիրն աւելի շուտ դստերն է բնորոշում, քան՝ մօրը:
- 90 A. Bonov, էջ 152; մ.թ. Բ. դարում ապրած Պողոմէոսի աստղացուցակում, որը նա վերցրել է Հիպարքոսի՝ մ.թ.ա. Բ. դարում կազմած աստղացուցակից, «Կարիճ» Համաստեղութեան կողքին, «Կշէնք»-ի փոխարէն, նշուել է «Չասէր»: Այս հանգամանքն աստղագէտներից ոմանց հիմք է տուել ենթադրել, թէ՛ մ.թ.ա. Բ. դարում Կենդանա-

չրջանում ճանաչել են աւելի մեծ «կարիճ», քան այժմ ենք տեսնում: Մանաւանդ, որ մ.թ. 7- դարի հռոմէացի հեղինակ Մարիուս Սերվիուսն էլ հաղորդել է, որ երկար ժամանակ կենդանաչրջանը բարկացած է եղել ընդամէնը 11 համաստեղութիւնից (Բրուտեան, էջ 201-202): Սակայն յայտնի է, թէ որքան է տեւել այդ «երկար ժամանակը», ինչպէս նաև՝ ե՞րբ է կատարուել փոփոխութիւնը, դիպուածային բնո՞յթ է կրել, թէ ընդունուած է եղել ամէնուրեք: Յամենայն դէպս, Արեւի 12 կանգառները Տիեզերքում թատերականացուած ներկայացում էին դեռեւս խեթերի Հասսումաս եւ հին հնդիկների Ռաջասույա նոր տարուայ տօնակատարութիւնների ժամանակ (V. G. Ardzinba, *Rituali I Mifi Drevnei Anatoli (Հին Անատոլիի Ծէսերը Եւ Առասպելները)*, Մոսկուա, 1982, էջ 43, 45-47): Իսկ խեթական թագաւորութիւնը թուազրուում է մ.թ.ա. ԺԸ-ԺԳ դարերով: Եռւմէրական Գիլգամէշ էպոսում Գիլգամէշի բոլոր արկածները յաջողաբար տեղի են ունենում 12 ասպարէզների վրայ: Իսկ Գիլգամէշի մեզ հասած գրառումները մ.թ.ա. ԺԹ-ԺԸ դարերից են (Հին Արեւելքի Պոեզիա, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն, 1982, էջ 522):

- 91 Ռ. Համբարձումեան, *Հայփական Տոմար*, Երեւան, «Հայաստան» Հրատարակչութիւն, 1992, էջ 49ի նկարը:
- 92 Արրահամեան, *Անանիա Շիրակացու Մատենագրութիւնը*, էջ 325-326:
- 93 Ներսիսեան, էջ 96:
- 94 Թումանեան-Մնացականեան, էջ 24-42:
- 95 Greivs, էջ 378-382:
- 96 Թարութիւնեան, *Հայ Ժողովրդական Հանելուկներ*, էջ 6-7:
- 97 Greivs, էջ 95:
- 98 E. G. Kagarov, *Kult Fetishei, Rastenii I Jivoitnikh V Drevnei Gretsii (Ճեւտիչների Բոյսերի Եւ Անասունների Պաշտամունքը Հին Եռնաստանում)*, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 164:
- 99 Սրուանձտեանց, էջ 392:
- 100 Երուանդ Լալայեան, *Երկեր*, հտ. I, կազմ. եւ ծանօթ. Կ. Վ. Մելիք-Փաշայեան եւ Ա. Մ. Նազինեան, Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1983, էջ 239:
- 101 Հ. Ղեւոնդ Ալիշան, *Հայ-Բուսակ Կամ Հայփական Բուսարառութիւն*, Վենետիկ-Ս. Ղազար, 1895, էջ 253:
- 102 Սրուանձտեանց, էջ 88:
- 103 Այս մասին տես՝ A. Ia. Gurevitch, "Predstavlenia O Vremeni V Srednevekovoi Evrope," *Istoria I Psikhologia (Պատկերացում Ժամանակի Մասին Միջնադարեան Եւրոպայում, Պատմութիւն Եւ Հոգեբանութիւն)*, Մոսկուա, 1971, էջ 159-164:
- 104 Թումանեան, *Հայ Աստղագիտութեան Պատմութիւն*, էջ 256-257:

- 105 Van-Der-Varden, էջ 156-157; Drezden, էջ 360-361; M. Eliade, *Patterns in Comparative Religion*, London, 1983, էջ 172.
- 106 Մ. Խ. Աբեղյան, *Երկեր*, հտ. Է., կազմ. և խմբ. Ս. Յարութիւնեան, Երևան, Հայկ-ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1976, էջ 23; Երուանդ Լալայեան, *Երկեր*, հտ. II, կազմ. և հրտ. Ա. Մ. Նազինեան, Երևան, 1988, էջ 152.
- 107 Եղնըկայ Վարդապետի Կողբացւոյ, էջ 80-81:
- 108 A. N. Zolotarev, *Rodovoi Stroi I Pervobitnaia Mifologia (Յեզական Կարգը Եւ Նախնադարեան Դիցարանութիւնը)*, Մոսկուա, 1964:
- 109 Եղնըկայ Վարդապետի Կողբացւոյ, էջ 80-81; Gr. Khalatians, *Obshi Ocherk Narodnikh Armianskikh Skazok (Շեղանուր Ամենայն Հայ Ժողովրդական Հեքիաթները)*, Մոսկուա, 1885, էջ 6:
- 110 Raevski, էջ 62-63:
- 111 *Mifi Narodov*, T. 2, էջ 154-156:
- 112 Van-Der-Varden, էջ 181-182, գծ. 24, 26, 27:
- 113 Greivs, էջ 18:
- 114 Apulei, *Apologia, Metamorfozi, Floridi (Ապոլոգիա, Փոխակերպումներ, Տյուրիքներ)*, Մոսկուա, 1980, էջ 187-202:
- 115 Greivs, էջ 15:
- 116 Հայ Ժողովրդական Հեքիաթներ, հտ. IV, խմբ. Յ. Մ. Սկրտչեան, Երևան, Հայկ-ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1963, էջ 196:
- 117 Եղնըկայ Վարդապետի Կողբացւոյ, էջ 80:
- 118 Ա. Տ. Ղանալանեան, Հայ Ժողովրդական Հեքիաթներ, Երևան, 1960, էջ 267:
- 119 Van-Der-Varden, նկար 16; J. Puhvel, *Comparative Mythology*, Baltimore and London, 1980, էջ 100:
- 120 Սասնայ Մանր. Ժողովրդական Վէպ, էջ 261-263, 260-261:
- 121 Եղնըկայ Վարդապետի Կողբացւոյ, էջ 79-81:
- 122 Սասունցի Դաւիթ. Նոր Փատումներ, հաւաքեցին և Հրատարակութեան պատրաստեցին Գր. և Վ. Գրիգորեանները, Երևան, «Սովետական Գրող» Հրատարակչութիւն, 1977, էջ 333-341:
- 123 J. E. Fontenrose, *Orion: The Myth of the Hunter and the Hunters*, Berkeley, Los Angeles, London, 1981 էջ 5-6; Բրուտեանը նկատել է, որ յոյները մէջ երկնքի ամենապայծառ և գեղեցիկ համաստեղութեան համադրումը ղեցաբանական ոչ գլխաւոր,

- ալլ շարքային Հերոս Օրիոնի Հետ, վկայում է, որ այս աստեղատունը եւ Օրիոնի առասպելականացումը յունական միջավայրում օտարամուտ են (Բրուտեան, էջ 91):
- 124 Մ. Խ. Արեղեան, *Երկեր*, Հտ. Ա., խմբ. Ա. Ղանալանեան, Երևան, Հայկ. ԽՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1966, էջ 39:
- 125 Բրուտեան, էջ 159; Ալիշան, *Հին Հաւատք*, էջ 119-124:
- 126 Ա. Շիրակացի, *Տիեզերագիտութիւն Եւ Տոմար*, Երևան, Հայպետհրատ, 1940, էջ 76-77:
- 127 «Հայկ» համաստեղութեան գօտու 3 աստղի «Երեք թագաւոր» անուանումը նոյնպէս կարող է պատշաճել Հեքիաթների ժամանակի աստծոյ 3 որդիների թուաքանակին: Բրուտեանը Հայկի գաւակների թուաքանակի մասին հայ միջնադարեան մատենագիտական աղբյուրներից յայտնի տուեալները մանրամասնօրէն քննելով, յանգել է այն եզրակացութեան, որ Հայկն ունեցել է 3 որդի, որոնցից մէկն, ի տարբերութիւն Հեքիաթների տրամադրած նիւթի՝ աւազը, մայրամուտին մեռնող Արեւն է: Հետեւաբար, ըստ Հեղինակի, միւս երկու որդիներն էլ պէտք է մարմնաւորած լինէին արշալոյսի եւ միջօրէի Արեւներին (Բրուտեան, էջ 393-9):
- 128 Յարութիւնեան, *Հայ Առասպելաբանութիւն*, էջ 210-215:
- 129 Թումանեան, *Հայ Աստղագիտութեան Պատմութիւն*, էջ 212:
- 130 Յարութիւնեան, *Հայ Առասպելաբանութիւն*, էջ 215-216:
- 131 Նոյն, էջ 10, 118:
- 132 Սասնայ Մտեր, Հտ. Ա., խմբ. պրոֆ. դր. Մ. Արեղեան, աշխատակց. Կ. Մելիք-Օհանջանեանի, Երևան, Հայպետհրատ, 1936, էջ 470:
- 133 I. M. Diakonov, "K Voprosu O Simvole Khaldi," *Drevnii Vostok* (Նաւրիէ Նորհրդանիշի Հարցի Եւրջըր, *Հին Արեւելք*), No. 4, Երևան, 1983, էջ 191-192:
- 134 Van-Der-Varden, էջ 163:
- 135 Diakonov, էջ 192-193:
- 136 G. A. Koshelenko, "Rannie Etapi Razvitia Kultura Mitri," *Drevnii Vostok I Antichni Mir* (Միջրաջի Պաշտամունքի Զարգացման Վաղ Երջանները, *Հին Արեւելք Եւ Հին Անտիկ Աշխարհ*), Մոսկուա, 1972, էջ 75-84:
- 137 Մ. Գ. Հմայակեան, *Վանի Թագաւորութեան Պետական Կրօնը*, Երևան, Հայաստանի ԳԱ Հրատարակչութիւն, 1990, էջ 36, աղ. 9, 3, 4, նկ. 3:
- 138 O. Belly, *The Anzaf Fortresses and the Gods of Urartu*, Istanbul, 1999, էջ 37-41, fig. 17:
- 139 Հմայակեան, էջ 35, ծանօթ. III գլխի, N 29:
- 140 Նոյն, էջ 10:

- 141 Նոյն, ադ. 8, 9, 12(2):
- 142 Նոյն, էջ 44-45:
- 143 Թ. Հ. Կարաէօզեան, «Ուրարտական Աղբիւրները Հայկական Լեռնաշխարհի Եւ Հարեւան Պետութիւնների Մասին», Հայ Ժողովրդի Պատմութեան Գրեւորման Կարգադրութիւն, հտ. 1, կազմ. Պ. Յովհաննիսեան, Ա. Գ. Աբրահամեան, Երեւան, Երեւանի Պետական Համալսարան, 1981, էջ 47, ծան. 1:
- 144 Հմայակեան, էջ 77:
- 145 Թ. Ա. Մարտիրոսեան, Գիտութիւնը Սկսում է Նախնադարում, Երեւան, «Սովետական Գրող» հրատարակչութիւն, 1978, էջ 118, ադ. XXIV ա, եկ. 6:
- 146 Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, Գալստեան տպարան, 1912, էջ 13:
- 147 Արտակ Մովսիսեան, «Խաղի Դիցանուն Գրութեան, Նշանակութեան Եւ Յարակից Հարցերի Շուրջ», «Հայկական Քաղաքակրթութիւնը Հնագոյն Ժամանակներից Մինչեւ Քրիստոնէութեան Ընդունումը», ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան ինստիտուտ, Գիտաժողով, Երեւան, 2000, 30 Հոկտեմբերի, էջ 33-35:
- 148 Գէորգ Զահուկեան, «Հայկական Շերտը Ուրարտական Դիցարանում», Պատմաբանասիրական Հանդէս, N 1, Երեւան, 1986, էջ 42:
- 149 Raevski, էջ 59-60:
- 150 Քսենոփոն, Անաբասիս, Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատարակչութիւն, 1970, էջ 98:
- 151 Հմայակեան, էջ 33:
- 152 Նոյն, ադ. 29:
- 153 Նոյն, ծանօթ. III գլխի, N 39:
- 154 Տէր-Մինասեան, էջ 15:
- 155 S. B. Arutunian, "Relikti Blagoslovenia Pri Obshestvennom Jertvopodani" (Օրհնանքի Վերապրուկները Հասարակական Զոհարբութեան Ժամանակ), Պատմաբանասիրական Հանդէս, N 3, Երեւան, 1971, էջ 258:
- 156 Հմայակեան, էջ 10:
- 157 Նոյն, էջ 41:
- 158 Ա. Պետրոսեան, «Ուրարտական Գլխաւոր Աստուածների Եռեակը Եւ Պետութեան Իշխող Վերնախաւի Մագման Խնդիրը», Պատմաբանասիրական Հանդէս, N 2, Երեւան, 2002, էջ 251:

- 159 Հմայակեան, աղ. 16:
- 160 Մելիք-Օհանջանեան, էջ 270; Թուամանեան-Մնացականեան, էջ 31; Տէր-Մինասեան, էջ 13:
- 161 Drezden, էջ 351:
- 162 N. Ia. Marr, i I. Smirnov, "Vishapi." *Trudei Gosudarstvennoi Akademii Istorii Materialnoi Kulturi*, T. I (Վիշապներ, Պետական Ակադեմիայի Նյութական Մշակոյթի Պատմութեան Աշխատութիւններ), Լենինկրատ, 1931, գծանկար 1, 2, 5:
- 163 Տէս՝ *Mifi Narodov*, T. II, էջ 155, վերին նկարազարդումը՝ ձախից:
- 164 Տէս նոյն՝ վերին նկարազարդումն՝ աջից:
- 165 Հմայակեան, աղ. 15:
- 166 Նոյն, աղ. 18 (3):
- 167 Նոյն, աղ. 25:
- 168 Նոյն, էջ 42:
- 169 Պետրոսեան, էջ 251:
- 170 Bonov, էջ 15, 67-68:
- 171 Հմայակեան, էջ 44:
- 172 Նոյն, էջ 45-46; Պետրոսեան, էջ 248-249:
- 173 Հմայակեան, աղ. 4 (1), 2A (2):
- 174 Նոյն, էջ 46:
- 175 Սրուանձտեանց, էջ 493-494:
- 176 Ազգագրական Հանդէս, II տարի, գիրք Բ., Թրֆլիս, 1897, էջ 217:
- 177 P. Kalmeyer, "Simvol Khaldi", *Drevnii Vostok* (Խալդիի Խորհրդանիշը, Հին Արեւելք), No. 4, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1983, էջ 186, նկ. 5:
- 178 Հմայակեան, էջ 76: Բարեկենդանը Հայոց մեջ տօնուում էր շարաթներ շարունակ: Այս մասին տե՛ս՝ Օդարաչեան, էջ 8-11:
- 179 Հմայակեան, էջ 38, աղ. 8, 9, 13:
- 180 Արրահամեան, Անանիա Շիրակացու Մատենագրութիւնը, էջ 325-326:
- 181 Ալիշան, Հին Հաւատք, էջ 97:

- 182 Համբարձումեան, էջ 42:
- 183 Աբրահամեան, Անանիա Շիրակացու Մատենագրութիւնը, էջ 332:
- 184 Հմայակեան, էջ 36, աղ. 9, 3, 4 (նկ. 3), էջ 38, աղ. 8, 9:
- 185 Թումանեան, Հայ Աստղագիտութեան Պատմութիւն, էջ 81:
- 186 Tseren, էջ 125:
- 187 Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, էջ 34-35:
- 188 Կ. Վ. Մելիք-Փաշայեան, Անահիտ Դիցուհու Փաշտամունքը, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1963, էջ 68:
- 189 Շիրակացի, Տիեզերագիտութիւն Եւ Տոմար, էջ 76-77:
- 190 Հմայակեան, էջ 48-50:
- 191 Նոյն, էջ 51:
- 192 Ա. Տ. Ղանայանեան, Առաժանի, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1960, էջ 328:
- 193 Հմայակեան, էջ 51:
- 194 Սրբոյ Հօրն Մերոյ Մովսէսի Խորհնացւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913, էջ 75-85:
- 195 Հմայակեան, էջ 53-54:
- 196 Համբարձումեան, էջ 23:
- 197 Գէորգ Զահուկեան, Հայերէնը Եւ Հնդեւրոպական Հին Լեզուները, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1970, էջ 69, ծան. 66; նոյնի՝ Հայկական Շերտը, էջ 53:
- 198 N. V. Arutiunian, Biaynili (Urartu), (Բիայնիլի, Ուրարտու), Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1970, էջ 356-359:
- 199 Հմայակեան, էջ 56-57:
- 200 Gr. Kapantsian, Obshie Elementi Mejdu Urartskim I Khetskim Yazikami (Ընդհանուր Տարբեր Ուրարտական Եւ Խեթական Լեզուների Միջեւ), Երևան, Երևանի Համալսարանի Հրատարակչութիւն, 1936, էջ 53, ծանօթ. 2:
- 201 N. V. Arutiunian, էջ 356-359:
- 202 V. Ia. Propp, Istoricheskie Kornj Volshebnoj Skazki (Գախարդական Հեքիաթի Պատմական Արմատները), Լենինկրատ, 1946, էջ 98, 236-237:
- 203 Դատաւոր, ԺԳ-ԺԶ:

- 204 Fontenrose, էջ 222-224:
- 205 Հմայակեան, էջ 45, աղ. 4, 24, նկ. 1, 2:
- 206 Greivs, էջ 380, 383:
- 207 Զահուկեան, Հայկական Ենթոտը, էջ 52-53:
- 208 Mifi Narodov, T. I, էջ 346:
- 209 Նիկողայոս Ադոնց, «Հին Հայոց Աշխարհայեցողք», Հայրենիք ամսագիր, Հոկտեմբեր, 1926, էջ 80:
- 210 Գրիգոր Ղափանցեան, Արա Գեղեցիկի Պաշտամունքը, Երևան, 1944, էջ 38:
- 211 Սրուանձտեանց, էջ 48:
- 212 Ղափանցեան, էջ 91:
- 213 Նոյն, էջ 134, 90:
- 214 I. M. Diakonov, Arkhayicheskie Mifi Vostoka I Zapada (Արեւելքի Եւ Արեւմուտքի Հնագրեան Առասպելները), Մոսկուա, 1990, էջ 166:
- 215 Ադոնց, էջ 80; Mifi Narodov, T. I, էջ 234; T. 2, էջ 346:
- 216 Հայ Ժողովրդական Հեքիաթներ, հտ., II, էջ 39:
- 217 Զուկ ուտեն, իրօք, ժողովրդական Համոզմունքով, ամրացնում է աչքի տեսողութիւնը, ինչը նաեւ բժշկութիւնն է Հաստատում:
- 218 Հրանուշ Խառտեան-Առաքելեան, Հայ Ժողովրդական Տօները, Երևան, «Հայաստան» Հրատարակչութիւն, 2000, էջ 44:
- 219 Ալիլան, Հին Հաւատք, էջ 103:
- 220 Van-Der-Varden, էջ 163:
- 221 Արտակ Արք. Մանուկեան, Հայ Եկեղեցու Տօները, Թեհրան, «Նալիրի» Հրատարակչութիւն, 1969-1378, էջ 63-64:
- 222 Աբրահամեան, Անանիա Երզնկացու Մատենագրութիւնը, էջ 323:
- 223 Միւրիլ լուսնային առասպելովքի մասին տե՛ս՝ Գ. Մ. Մարտոյեան, «Մհեր-Միւրիլ Առասպելական Ենթոտը Հայկական Ժողովրդական Հեքիաթներում», Մերձաւոր Եւ Միջին Արեւելքի Երկրներ Եւ Ժողովուրդներ, հտ. XIX, Երևան, 2000, «Զանգակ 97», էջ 232-243:

THE REFLECTION OF THE ZODIAC IN  
THE FOLK-TALES OF THE MITHRA-SUNS  
(Summary)

GAGIK MARTOYAN

The world famous folk-tale of the three brothers originates from the myth of the three Mithra-Suns. The youngest brother in this folk-tale represents the Sun of the dark world of afterlife. The entrance to this post-mortal world embodies the Constellation of the Crab, where the Summer solstice axis was found some 4000 years ago. The Sun travels in this folk-tale through the seven constellations of the Zodiac and scores victories over the Hydra, Scorpio and Serpent ciphers of Zodiac, which embody the universal forces of chaos and destruction. The Mithra-Sun returns to the World of Light at the Capricorn cipher of the Zodiac, coinciding with the Winter solstice. The Mithra-Sun also cures the blindness of the god of Time in Fishes, the twelfth constellation of the Zodiac. The Mithra-Sun is hence the god, which corrects Time and the calendar. He kills the Serpent, which steals time units from the fruit of the tree of life and the Moon, which was used in old times to measure Time.

Gagik Martoyan argues that the three main gods in Urartian mythology – Khaldi, Teisheba and Shivini – reflect the different positions of these three Suns. They constitute the threefold embodiment of Mithra in the twelve signs of the Zodiac. Khaldi is the Sun that dies and comes back to life at the solstice points. Teisheba covers the time and space between the Zodiac signs of the Bull and Capricorn (April-December), while Shivini is the god of early Spring, corresponding to the Constellation of Aries in March. The Khaldi Sun is undoubtedly the most powerful among these three gods.